ԲՅՈՒՐՆ

11336




# Քաղ Գրագիտություն

I ՊՐԱԿ

3(02)
Կ-79

ԿՈՒՍՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1933

12 AUG 2013
11336
+6 15/1176
09 DEC 2009
25 SEP 2006
3(02)
Վ-79

Բ. ՎՈԼԻՆ

# ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1008
38070

ԴԱՍԱԳԻՐՔ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Թարգմ. Հ. ԹՈՒՐՇՅԱՆ, Հ. ԼԵՎՈՆՅԱՆ, Խ. ԱՅՎԱԶՅԱՆ
Խմբ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

1357

ԿՈՒՍՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1933

44-92

## ԿՈՒՍՀՐԱՏԻ ԿՈՂՄԻՑ

Այս դասագիրքը գրված է Համ Կ(բ)Կ Կենտկոմի Կուլտպրոպբաժնի կողմից՝ թեկնածուական կուսդպրոցների համար մշակված ծրագրի համաձայն: Դասագիրքը տրվում է կուսդպրոցներում ու խմբակներում օգտագործելու և կուսթեկնածուների ու յերիտասարդ կոմունիստների ինքնազարգացման նպատակով:

Դասագրքի մշակման համար հիմք է ընդունված կուսակցության՝ սոցիալիստական շինարարության ներկա ետապի քաղաքականության մասսայականացումը—պարզեցումը, վորը պետք է կատարվի բոլշևիզմի պատմության տեսանկյունով, նրա միջազգային դերի և պատմության ընթացքում ու ներկա ետապում յերկու ֆրոնտով մղվող պայքարի լույսի տակ:

Դասագրքի կառուցվածքը մշակելիս Կուսհրատը յելել է այն բանից, վոր մարքս—լենինյան տեսության լուսաբանությունը պետք է սերտորեն կապված լինի հեղափոխական պրակտիկայի հետ, «մեկնակետ ունենալով դա, բարձրացնելով այդ պրակտիկայի առանձին փաստերի ու յերևույթների պրոպագանդը տեսական ճանաչման և ընդհանրացումների բարձր աստիճաններին» (Պոստիշև):

Ղեկավարվելով լենինյան այն ցուցումով, վոր «գրական աշխատանքը պետք է դառնա համապրոլետարական գործի մի մասը», Կուսհրատն այս դասագրքի քննարկմանը լայնորեն մասնակից արեց կուսակցական և կոմյերիտական ունկնդիրներին: Այս դասագիրքը դեռևս իր կազմության շրջանում՝ առանձին գլուխներով քննվել է՝ ընկ. Ստալինի անվան (նախկ. ԱՄՈ) գործարանի, Բոբրիկովի քիմկոմբինատի և Մոսկվայի այլ գործարանների բանվորական խմբակներում և պրոպագանդիստների սեմինարներում: Դասագրքի գլուխների վերջնական պատրաստման ժամանակ հաշվի առնվեցին բանվոր—բանվորուհի ընկերների և պրոպագանդիստների մի շարք արժեքավոր դիտողությունները:

Կուսուսուցման ցանցը դասագրքով հնարավորին չափ շուտափույթ ապահովելու անհրաժեշտությունը մեծապես կրճատեց այս գիրքը կազմելու ժամկետը: Դրա հետևանքով միանգամայն հնարավոր են պակասություններր գրքի բովանդակության, պարզության և ձևավորման տեսակետից: Կուսհրատը խնդրում է բոլոր ընթերցողներին, ունկնդիր-

ներին և պրոպագանդիստներին այս գրքի առթիվ ուղարկել իրենց գնահատականը, դիտողությունները ու առաջարկները: Այդպիսիք այս գրքի հետագա հրատարակությունների ժամանակ կօգտագործվեն հեղինակի կողմից:

Դասագրքի ընդհանուր խմբագրությունը կատարել է ընկ. Պայերնին: Դասագիրքը գրելու, գրախոսելու և խմբագրելու գործում հեղինակին մեծ օժանդակություն են ցույց տվել ընկ. ընկ. Ջեյմսը և Մոնինը, իսկ առանձին գլուխների ժամանակ—ընկ. ընկ. Մեկլումովը, Արլիցկին, Պոսսեն և Գրինբերգը:

# ՆՐԱՆՑ ՄՈՏ ՅԵՎ ՄԵԶ ՄՈՏ

Յեթե նայենք յերկրագնդի քարտեզին ու համեմատենք այն մինչհեղափոխական ժամանակվա նման քարտեզի հետ, իսկույն աչքի կզարնի, թե ինչպիսի խոր փոփոխություններ, ինչպիսի վճռական պատմական իրադարձություններ են տեղի ունեցել յերկրագնդի վրա այս վերջին տասնըհինգ տարվա ընթացքում: Յերկրագնդի մեկ վեցերորդ մասի վրա բանվորները և աշխատավորությունը կառուցում են սոցիալիզմ: Խորհուրդների յերկիրն ամբողջ թափով գնում է դեպի անդասակարգ, սոցիալիստական հասարակության կառուցումը: Իսկ կապիտալի աշխարհը,—մնացած հինգ վեցերորդի տիրակալը—ապրում է ծանրագույն ճգնաժամի և տնտեսական ու կուլտուրական քայքայման շրջանը:

Այդ Լենինի գլխավորած բոլշևիկների կուսակցության կողմից կազմակերպված Հոկտեմբերյան հեղափոխությունն էր, վոր խլեց աշխարհի մեկ վեցերորդ մասը հօգուտ սոցիալիզմի: Նրա հարվածների տակ էր, վոր ստեղծվեց յերկու աշխարհ: Յերկու աշխարհ՝ աշխարհ մեռնող, կործանվող կապիտալիզմի և աշխարհ աճող սոցիալիզմի.—կանգնած են նրանք իրար դեմ-հանդիման վորպես անհաշտ թշնամիներ: Տարբեր է դեպի այդ յերկու աշխարհը կապիտալիստների ու պրոլետարների վերաբերմունքը: Աշխատավոր մարդկության բազմամիլիոն մասսաները ձգտում են դեպի Խորհրդային Միությունը—դեպի սոցիալիզմի աշխարհը, իբրև իրենց հայրենիքն ու պաշտպանում նրան: Կապիտալի աշխարհը, անհավասարության, շահագործման, բռնության ու կողոպուտի մեռնող աշխարհն անդադրում կազմակերպում է իր բոլոր սև ուժերը՝ արշավելու սոցիալիզմի աշխարհի դեմ, վորպեսզի նորից վողջ յերկրագնդի վրա վերականգնի կապիտալի անբաժան տիրապետությունը:

ԱՀԱ ԹԵ ԻՆՉ ԱՍԱՑ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱՅԴ ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀԻ՝ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՇԽԱՐՀԻ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

Նրանց՝ կապիտալիստների մոտ— աշխատավորության նյութական դրության անկում թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության բնագավառներում:

Մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում—տնտեսական վերելք և արդյունաբերության աճում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում:

Նրանց՝ կապիտալիստների մոտ—աշխատավորության նյութական դրության վատթարացում, բանվորության աշխատավարձի իջեցում և գործազրկության աճում։

Մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում—աշխատավորության նյութական դրության վերելք, բանվորության աշխատավարձի բարձրացում և գործազրկության կրճատում։

Նրանց՝ կապիտալիստների մոտ—գործադուլների և ցույցերի աճում, որ տանում է դեպի բանվորական միլիոնավոր ոռերի կորուստ։

Մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում—գործադուլների բացակայություն և բանվորների ու գյուղացիների աշխատանքային վերելքի աճում, որ տալիս է մեր յերկրին բանվորական միլիոնավոր լրացուցիչ ոռեր։

Նրանց՝ կապիտալիստների մոտ—ներքին դրության սրումն ու բանվոր դասակարգի հեղափոխական շարժման վերելք ընդդեմ կապիտալիստական ռեժիմի։

Մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում— ներքին դրության ամրապնդում և բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների համախմբումն խորհրդային իշխանության շուրջը։

Նրանց՝ կապիտալիստների մոտ—ազգային հարցի սրումն և ազգային ազատագրական շարժման բարձրացումը Հնդկաստանում, Հնդկաչինում, Ցիլիպյան կղզիներում և այլուր, այն շարժման, որ վեր է աճվում ազգային պատերազմի։

Մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում—ազգային յեղբայրության հիմքերի ամրապնդում, ապահովված ազգային խաղաղություն և ԽՍՀՄ-ի ժողովուրդների միլիոնավոր մասսաների համախմբումն խորհրդային իշխանության շուրջը։

Նրանց՝ կապիտալիստների մոտ—շփոթություն և դրության հետագա վատթարացման հեռանկար։

Մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում—հավատ դեպի մեր ուժերը և դրության հետագա բարելավման հեռանկար»։

Վ,ո՞րոնք են,—հարցնում է ընկ. Ստալինը—այդքան լուրջ ճախողման պատճառները նրանց՝ կապիտալիստների մոտ և լուրջ նվաճումների պատճառները մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում։ Պատճառը մեր և կապիտալիստների տնտեսական սիստեմի տարբերությունն է։

Իսկ ի՞նչ է ներկայացնում իրենից կապիտալիստական աշխարհը և ինչո՞վ է արտահայտվում նրա տարբերությունը սոցիալիստական աշխարհից։ Ի՞նչ է կատարվում այնտեղ, նրանց մոտ՝ կապիտալի յերկրներում—և այստեղ, մեզ մոտ՝ սոցիալիզմի յերկրում։

«Թող տիրապետող դասակարգերը կոմունիստական հեղափոխությունից սարսափեն։ Պրոլետարները վոչինչ չունեն կորցնելու այդ հեղափոխության մեջ, բացի իրենց շղթաներից։ Նրանք վաստակելու յեն մի ամբողջ աշխարհ»։

(Կ. Մարքս յեվ Ֆ. Ենգելս—«Կոմունիստական մանիֆեստ»)

# I
# ԳԼՈՒԽ

# ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԸ

## 1. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

### ՎԱՐՁՈՒ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆ

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը (25 հոկտեմբերի—7 նոյեմբերի 1917 թ.) համայն աշխարհում տիրապետում եր կապիտալը։ Կապիտալի յերկրներում վողջ իշխանությունը գտնվում է կապիտալիստների և խոշոր հողատերերի ձեռքին, կապիտալիստները տիրում ու ոգտագործում են բոլոր կարևոր գործիքներն ու արտադրության միջոցները։ Նրանց ձեռքումն են ֆաբրիկաները, գործարանները, հողը, յերկաթուղիները, մեքենաները։

Ֆաբրիկաներում և գործարաններում աշխատում են միլիոնավոր բանվորներ, վորոնք սեփական արտադրության միջոցներից զուրկ են, հարկադրված են ծախել իրենց բանվորական ուժը և աշխատել կապիտալիստների համար։ Կապիտալի այդ վարձու ստրուկներն ստեղծում են ապրանքներ, կառուցում են շենքեր, իրենց աշխատանքով ստեղծում են արժեքներ և հարստություն։ Բայց բանվորների ծանր աշխատանքով ստեղծված արժեքներն ու հարստությունը դառնում են սեփականությունը մի խումբ կապիտալիստների, վորոնք դաժանորեն շահագործում են միլիոնավոր պրոլետարների, ապրում են նրանց քրտինքի ու արյան գնով և հարստանում են նրանց՝ ուժից վեր աշխատանքի հաշվին։

Մարքսն ու Ենգելսը դեռ ավելի քան 80 տարի սրանից առաջ մատնանշում եյին, վոր կապիտալիստական հասարակության մեջ «բանվորն իրավականորեն (այսինքն ըստ որենքի) և փաստորեն (այսինքն իրապես) ունևոր դասակարգի՝ բուրժուազիայի ստրուկն է, այնքանով է նրա ստրուկը, վոր նա վաճառվում է վորպես ապրանք, վորի գինը, ինչպես մյուս ապրանքների գինը, բարձրանում և իջնում է։ Բարձրանում է բան-

վորների համար յեղած պահանջը—բարձրանում է նրանց գինը, իջնում է նրանց պահանջը—իջնում է նաև նրանց գինը։

... Յերբ նրանց պահանջն իջնում է այնքան, վոր վորոշ թվով բանվորներ չեն գտնում սպառում, «մնում են պահեստում», այն ժամանակ նրանք հարկադրված են մնալ իբրև պաշար, իսկ վորովհետև դրանով չեն ապրի, ուրեմն նրանք դատապարտված են քաղցի և աղքատության։ «Ամբողջ զանազանությունը հին բացարձակ ստրկությունից այն է, վոր ժամանակակից բանվորը թվում է ազատ։ Վորովհետև նա չի ծախվում միանգամ ընդմիշտ, այլ ծախվում է մաս-մաս, մեկ օրով, շաբաթով, մեկ տարով, և այն պատճառով, վոր նրան վոչ թե մի սեփականատեր վաճառում է մյուսին, այլ ինքն է հարկադրված ծախել իրեն, քանի վոր նա վոչ թե մի մարդու, այլ վողջ ունևոր դասակարգի ստրուկն է։

## ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիստական արտադրությունն ըստ իր բնույթի հասարակական արտադրություն է։ Արտադրության միջոցները կարող են գործադրվել և օգտագործվել միայն ամբողջ կոլեկտիվի միացյալ ջանքերով։ Խոշոր ձեռնարկությունները, գործարանները, ֆաբրիկաները, կատարելագործված մեքենաները կարող են գործի գցվել միայն մեծ քանակության բանվորների միջոցով։ Առանձին կապիտալիստներին պատկանող ձեռնարկությունների միջև նույնպես գոյություն ունի սերտ կապ և կախվածություն։ Ավտոմոբիլային գործարանը չի կարող աշխատել առանց յերկաթի, պողպատի, քարածխի, ելեկտրոէներգիայի, վոր ձեռք են բերվում ուրիշ գործարաններում։ Կարի գործարանը չի կարող աշխատել առանց մահուդի, կոճակների և այլ նյութերի, վոր արտադրվում են այլ ձեռնարկություններում։

Յուրաքանչյուրի աշխատանքը հանդիսանում է բոլորի աշխատանքի մասնիկը միայն։ Շնորհիվ աշխատանքի բաժանման, արտադրության ամբողջ պրոցեսը—ընթացքը մասնատվում է մի շարք առանձին, մեկը մյուսին սերտորեն կապված գործողությունների։ Տրակտորի, ավտոմոբիլի, մեքենայի արտադրությունը պահանջում է տասնյակ և հարյուրավոր բանվորների մասնակցությունը։

Այդպես, ուրեմն յուրաքանչյուր ձեռնարկություն կախումն ունի ուրիշ հարյուրավոր և հազարավոր ձեռնարկություններից, յուրաքանչյուր առանձին աշխատավորի աշխատանքը կախում ունի հազարավոր այլ բանվորների աշխատանքից, վոր ցրված են վողջ յերկրում, իսկ յերբեմն նաև համայն աշխարհում, սակայն կապված են իրար աշխատանքի հասարակական բաժանման միջոցով։ Իսկ ձեռնարկություններն ու նրան-





ցում յեղած արտադրության միջոցները չեն պատկանում ամբողջ հասարակությանը, այլ առանձին կապիտալիստին են պատկանում, որի մասնավոր սեփականությունը բաժան-բաժան է անում հասարակական վողջ տնտեսությունը հազարավոր առանձին տնտեսությունների։

Առանձին մարդկանց աշխատանքն հանդիսանում է հասարակական աշխատանք, յուրաքանչյուր բանվոր հազարավոր թելերով կապված է այլ արտադրողների աշխատանքին, սակայն նրա աշխատանքը չի համաձայնեցված ամբողջ հասարակության շահերի հետ։ Յուրաքանչյուր ապրանք—բազմաթիվ մարդկանց աշխատանքի արդյունք է։ Իսկ այդ ապրանքները բաժին են ընկնում վոչ թե հասարակությանը, վոչ թե նրա աշխատավորներին, այլ առանձին կապիտալիստին, միայն այն պատճառով, վոր նա ֆաբրիկայի, մեքենայի, բոլոր գործիքների և արտադրության միջոցների տերն ու տնօրենն է։

Ահա այս հակասությունն աշխատանքի հասարակական բնույթի և յուրացման մասնավոր բնույթի միջև, այսինքն այն, վոր արտադրության միջոցները (դրանով նաև արտադրության պատրաստի արդյունքները) չեն պատկանում նրանց, ովքեր դրանց իսկական արտադրողներն են, այլ առանձին կապիտալիստների կամ նրանց խմբակցության մասնավոր սեփականությունն են կազմում,—հենց այս հանգամանքը կապիտալիստական հասարակության հիմնական հակասությունն է հանդիսանում։ Սա յե, վոր հանդիսանում է կապիտալիստական հասարակության մյուս բոլոր հակասությունների հիմնական աղբյուրը, վորը կարող է վոչնչացվել կապիտալիստական կարգերի վոչնչացման հետ մեկտեղ միայն։

## ԻՆՉ Ե ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Գործիքների և արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը հնարավորություն է տալիս շահագործող-կապիտալիստին իր տրուկին կողոպտելու ճանապարհով մեծ ոգուտներ քաղել։ Շահույթի հետապնդելը կապիտալիզմի զարգացման հիմնական շարժիչ ուժն է։ Շահույթին հետապնդելով կապիտալիստը շրջում է վողջ աշխարհը, զարգացնում է արտադրությունը, կատարելագործում է տեխնիկան, մեծացնում է իր բանվորների քանակը։

Սակայն վո՞րտեղից է վերցվում կապիտալիստի շահույթը, ինչպես է նա ձեռք բերում այդ։ Այդ շահույթը կապիտալիստի կողմից բանվորական աշխատանքի մի մասը չվճարելու հետևանք է։ Բանվորի հավելյալ աշխատանքի հետևանք։ Կապիտալիստը վարձելով բանվորին, գնում է նրա բանվորական ուժը։ Կապիտալիստական հասարակության մեջ բանվորական ուժը հանդիսանում է ապրանք։

Վորպեսզի վերականգնի իր բանվորական ուժը, աշխատելու ընդունակությունը, բանվորը պետք է ուտի, քնի, հագնվի, պիտի կերակրի իր ընտանիքը, մի խոսքով՝ պիտի բավարարի կյանքի համար ամենաանհրաժեշտ պահանջները: Առանց այս ամենի բանվորական ուժը դուրս կընկնի շարքից, այսինքն կդառնա վոչ պիտանի: Բանվորի բանվորական ուժի արժեքը չափվում է նրա կերակրի, բնակարանի, հագուստի և այլնի արժեքով:

Կապիտալիստը գնելով բանվորական ուժը, գնում է այն ընթացքի մեջ, հարկադրելով բանվորներին արտադրել վորքան կարելի յե շատ ապրանք: Այնինչ բանվորն օրվա ընթացքում արտադրում է ավելի շատ, քան հարկավոր է իրեն պահելու համար: Նա ստեղծում է կապիտալիստի կողմից չվճարված «հավելյալ պրոդուկտ»:

Հետևաբար բանվորի շահագործումն արտահայտվում է կապիտալիստի կողմից բանվորի աշխատանքի անվճար յուրացմամբ: Բանվորների աշխատանքի այդ չվճարված մասը հանդիսանում է միլլիոնավոր բանվորական ձեռքերի շահագործման և կողոպտման աղբյուր, բուրժուազիայի կողմից բանվոր դասակարգին շահագործելու աղբյուր:

Իսկ ինչո՞ւ յե բանվորը հանձնվում այդպիսի ստրկացման: Վորովհետև բանվորի գոյության միակ աղբյուրը հանդիսանում է իր բանվորական ուժի վաճառքը: Քաղցն ու ցուրտը քշում են նրան ֆաբրիկա, վորտեղ նրան կանգնեցնում են մեքենայի մոտ և ստիպում են աշխատել ամբողջ օրը: Սակայն այդ օրվա ընթացքում նա արտադրում է աշխատանքի նոր արդյունքներ, վորոնք (հանած հումույթի ծախսերը, գործիքների մաշվածությունը և այլն) այնուամենայնիվ ավելի շատ կարժենան, քան այն, վոր բանվորն ստանում է աշխատավարձի ձևով: Այդ հավելյալ արժեքը կապիտալիստն իբրև ֆաբրիկայի, մեքենաների և այլնի սեփականատեր, դնում է իր գրպանը: Հավելյալ արժեքը հանդիսանում է կապիտալիստների վողջ դասակարգի շահույթի միակ աղբյուրը:

Հանուն այդ հավելյալ արժեքի կապիտալիստները կառուցում են գործարաններ, հանուն նրա նրանք պատրաստ են դիմելու պատերազմի, կողոպուտի և ամեն տեսակի հանցագործությունների: Հանուն նրա նրանք պայքար են մղում նաև իրար մեջ, մրցում մեկը մյուսի դեմ:

Կապիտալիստները շահագրգռված են, վոր ավելի մեծանա բանվորական օրը. վորքան մեծ է բանվորական օրը, այնքան շատ ավելի շահույթ է ստանում արտադրության միջոցների տերը:

Կապիտալիզմի զարգացման արշալույսին, յերբ տեխնիկան դեռ թույլ էր զարգացած, յերբ բանվոր դասակարգը դեռ տրոհված էր և անջատ-անջատ, չէր հասկանում դեռ իր դասակարգային խնդիրները և դեռ միայն առաջին փորձն էր անում պայքարելու կապիտալի շահագործման և ճըն-



շումների դեմ, այն ժամանակ բանվորական օրվա տևողությունը հասնում էր օրական 16—18 ժամի: Հետամնաց յերկրներում՝ գաղութներում և կիսագաղութներում՝ ապրանքի վաճառահանման այդ հարուստ շուկաներում, կապիտալիստների համար հում նյութ մատակարարող այդ աղբյուրներում բանվորական օրը դեռ այսօր էլ հասնում է 16 ժամի: Վորպեսզի մեծանա առանձին բանվորների արտադրանքը, ուժեղացվի բանվորների շահագործումը, մեծանա շահույթը, կապիտալիստը դիմում է վոչ միայն բանվորական օրվա տևողության յերկարացմանը, այլև մուծում է նոր, կատարելագործված մեքենաներ (այն չափով, ինչ չափով ձեռնտու յե իրեն), անց է կացնում արտադրության ռացիոնալացում, խտացնում է բանվորական օրը:

Այսպես է կապիտալիստը կողոպտում բանվորին:

Պատմությունից մենք գիտենք, վոր հասարակական զարգացման ամբողջ ընթացքում այն ժամանակից, յերբ կան տիրապետող և ճնշվող դասակարգեր, արտադրության միջոցներին տիրապետող խմբակն իր օգտին է յուրացնում բնակչության մեծամասնության աշխատանքի արդյունքը: Ստրկատերերն ապրում էին իրենց պատկանող ստրուկների հաշվին, ճորտատեր հողատերերը շահագործում էին միլլիոնավոր ճորտ գյուղացիների աշխատանքը, իսկ կապիտալիստական հասարակության մեջ—մի խումբ ֆաբրիկատերեր և գործարանատերեր—կապիտալիստական դասակարգը հարստանում, ճարպակալում է բանվորության՝ կապիտալի այդ վարձու ստրուկների հաշվին:

## ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐՆ ԵՆ

Կապիտալիստական հասարակությունը դասակարգային հասարակություն է: Կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերը բուրժուազիան և պրոլետարիատն են: Ի՞նչ է դասակարգը: «Դասակարգեր—ուսուցանում էր Լենինը—կոչվում են մարդկանց այն մեծ խմբերը, վորոնք միմյանցից տարբերվում են՝ իրենց տեղով պատմականորեն վորոշակի հասարակական արտադրության սիստեմի մեջ, դեպի արտադրության միջոցներն ունեցած իրենց հարաբերությամբ (վորը մեծ մասամբ ձևավորված և ամրապնդված է օրենքներով), ըստ հասարակական աշխատանքի կազմակերպության մեջ ունեցած դերի և հետևաբար հասարակական հարստության այն մասի ստացման յեղանակներով ու չափերով, վորը նրանք ունեն:

Դասակարգերը մարդկանց այնպիսի խմբերն են, վորոնցից մեկը կա-

րող է յուրացնել մյուսի աշխատանքը, շնորհիվ հասարակական արտադրության վորոշ ուկլադում նրանց գրաված տեղի»:

Կապիտալիստներն իրենց գրպանն են լցնում այն հարստությունների մեծ մասը, վոր արտադրում են կապիտալի ստրուկները: Իսկ բանվորներին իբրև բաժին կապիտալիստները թողնում են նվազագույն վճար, վորը կարող է պահպանել շահագործվողների գոյությունը ամենացածր մակարդակի վրա:

Աշխատավորության շահագործումն ուժեղացնելու և իր տիրապետությունն ամրապնդելու նպատակով բուրժուազիան օգտագործում է պետությունը: Այդ պետությունը, ինչպես էլ վոր նա կազմակերպված լինի (բուրժուական պարլամենտական դեմոկրատիա, կամ բացարձակ ֆաշիստական դիկտատուրա) և ինչպես էլ վոր նա կոչվելիս լինի (դեմոկրատական հանրապետություն կամ միապետություն), հանդիսանում է վոչ այլ ինչ, քան հարկադրման ապարատ, բռնության ապարատ, պրոլետարիատի և շահագործվող մասսաների ճնշման ապարատ:

Կապիտալիստական պետությունն իր զինվորական, վոստիկանական ուժով, իր յեկեղեցով, դպրոցով, դատարանով և բանտով, մի խոսքով՝ կապիտալիստական հալածանքի և ճնշման վողջ ապարատը, ուղղված է այն բանին, վոր պաշտպանի գործիքների և արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, վորպեսզի ապահովի բարձր շահույթների ստացումը, վորպեսզի թույլ չտա աշխատավոր ընչազուրկների պայքարը հանուն իրենց դրության բարվոքման:

## ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆԱՐԽԻԱՆ

Կապիտալիստների ամբողջ գործունեյությունը հին ձեռնարկությունների ծավալման, նորերի կառուցման և շուկան ապրանքով լցնելու գործում չի ուղղված բավարարելու բնակչության պահանջները, այլ ուղղված է շահույթ ստանալու գործին: Ֆաբրիկատերը, գործարանատերը, խոշոր հողատերը պատրաստում են իրենց բոլոր ապրանքները ուղղակի շուկայի համար, առանց վորևե պլանի, ձգտելով առաջ անցնել ուրիշներից, հաշվի չառնելով ապրանքների այն քանակությունը, վորի կարիքն իրոք զգում է շուկան: Կապիտալիստն ի վիճակի էլ չի հաշվի առնելու շուկայի համար անհրաժեշտ ապրանքների քանակությունը:

Կապիտալիստական տնտեսությունն անպլանային տնտեսություն է: Վոչ վոք ցուցումներ չի տալիս առանձին ֆաբրիկատիրոջն ու գործարանատիրոջը, թե ինչ ապրանքներ և ինչ քանակությամբ պետք է պատրաստել, վոչ վոք հաշվի չի առնում պահանջը, վոչ վոք չի ղեկավարում



ամբողջ հասարակության արտադրությունը: Կապիտալիստական տնտեսությունը զարգանում է տարերայնորեն: Արտադրության անարխիան և անպլանայնությունը կապիտալիստական սիստեմի կարևորագույն հատկանիշներից մեկն է:

Սակայն վորպեսզի ինքը շուկայում ըստ հնարավորին շատ վաճառի, կապիտալիստը պետք է տվյալ շուկայից դուրս քշի ուրիշ՝ իր նման կապիտալիստին: Առանձին կապիտալիստների, նրանց խմբակցությունների միջև տեղի յեն ունենում տնտեսական լարված պայքար, մրցություն:

Վորպեսզի հաջողություն ունենան այդ մրցության պայքարում և մեծացնեն իրենց շահույթը, կապիտալիստները տեխնիկայի մեջ մուծում են բարելավումներ, անց են կացնում արտադրության ռացիոնալացում, ամեն կերպ ուժեղացնում են բանվորների շահագործումը և արտադրվող ապրանքների քանակը հասցնում են ծայրահեղ չափերի:

«Կապիտալիստական արտադրությունը—ասում է Լենինը—չի կարող զարգանալ այլ կերպ, քան թռիչքներով, յերկու քայլ առաջ, մի քայլ (իսկ յերբեմն նաև լրիվ յերկու) յետ: Կապիտալիստական արտադրությունը արտադրություն է վաճառքի համար, ապրանքների արտադրություն՝ շուկայի համար: Իսկ արտադրությունը ղեկավարում են առանձին կապիտալիստներ, յուրաքանչյուրը մենակ, և առանձին-առանձին վոչ վոք չի կարող ճշգրիտ գիտենալ, թե շուկայի համար վորքան և ինչ ապրանքներ են պահանջվում: Արտադրում են յենթադրաբար, հոգ տանելով միայն այն մասին, վոր մեկն անցնի մյուսից: Միանգամայն բնական է, վոր արտադրվածի քանակը կարող է չհամապատասխանել շուկայի պահանջին:

## ԿՐԻԶԻՍՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՈՒՂԵԿԻՑՆ ԵՆ

Արտադրության հասարակական բնույթի և նրա արդյունքների կապիտալիստական ձևով յուրացման հակասությունը, կապիտալիստական տնտեսության անպլանայնությունը, արտադրության անարխիան կապիտալիզմի օրով—անխուսափելի յեն դարձնում կրիզիսները: Կրիզիսների մեջ է, վոր ավելի վառ կերպով հանդես է գալիս կապիտալիստական հասարակության այդ հակասությունն իր բոլոր բացասական առանձնահատկություններով:

Բանվորը և աշխատավոր գյուղացին, վոր կիսաքաղցած դրություն են քարշ տալիս, ի վիճակի չեն գնելու շուկա շպրտված ապրանքը: «Վորպեսզի ձեռնարկությունից շահույթ ստացվի—ասում է Լենինը,—պետք է ծախել ապրանքները պետք է գտնել գնորդներ: Յեվ գնորդը լինելու յե բնակչության վողջ մասսան, վորովհետև հսկայական ձեռնար-

կությունները արտադրում են պրոդուկտների լեռներ: Իսկ բոլոր կապիտալիստական յերկրներում բնակչության իննը տասնորդը կազմված է աղքատներից՝ բանվորներից, վոր ստանում են ամենացածր աշխատավարձ, գյուղացիներից, վոր իրենց մասսայով դեռ ավելի վատ են ապրում, քան բանվորները: Ցեվ ահա, յերբ խոշոր արդյունաբերությունն իր ծագման միջոցին թափ է առնում արտադրելու վորքան կարելի յե շատ, նա չունի յե չպրտում այնքան շատ արտադրանք, վոր այն գնել ի վիճակի չե ժողովրդի չունևոր մեծամասնությունը: Մեքենաների, գործիքների, պահեստների, յերկաթուղիների և այլնի քանակը շարունակաբար աճում է, սակայն այդ աճումը ժամանակ առ ժամանակ ընդհատվում է, վորովհետև ժողովրդական զանգվածը, վորի համար վերջիվերջո նախատեսված են արտադրության այդ բոլոր բարելավված յեղանակները, մնում է մուրացկանության հասնող չքավորության մեջ»:

Արտադրության աճում՝ նշանակում է շահագործման աճում: Շահագործման աճումը նշանակում է մասսաների նյութական դրության հետագա վատթարացում, վճարունակ պահանջի կրճատում, ապրանքների վաճառքի հնարավորության կրճատում, գերարտադրության կրիզիսներ առաջ գալու անխուսափելիություն:

Պատրաստված հսկայական չափերի ապրանքները մնում են առանց պահանջի, մնում են ընկած ֆաբրիկանտի պահեստներում և խանութներում: Սկսվում է գերարտադրության կրիզիսը, փակվում են ֆաբրիկաները, գործարանները, ջրով են լցվում հանքահորերը, հանգչում են դոմնաները, կրճատվում են հացի, բամբակի ցանքսերը, ընկնում են գները, աճում է գործազրկությունը, միլլիոնավոր բանվորներ փողոց են նետվում և դառնում են գործազուրկ, քաղցած ու անտուն մարդիկ: Իսկ նրանք, վոր դեռ արտադրության մեջ են մնացել, կողոպտվում է նրանց առանց այն էլ մուրացիկի աշխատավարձը: Նրանք աշխատում են վոչ լրիվ բանվորական որ, վոչ լրիվ բանվորական շաբաթ և ստանում են պակասեցրած աշխատավարձ:

Ժողովրդական մասսաներն ստիպված են աղքատիկ կյանք վարել այն պատճառով, վոր արտադրված է չափազանց շատ ապրանք: Վորքան շատ է ուժվում կրիզիսը, վորքան շատ է մասսաների ընչազրկությունը, այնքան անխնա յե դառնում կապիտալիստների շահագործումն ու հալածանքը, վորոնք չեն ուզում զրկվել իրենց շահույթից: Նրանք, այդ կապիտալիստները վոչ միայն կողոպտում են աշխատավորությանը, վոչ միայն նրանց միլլիոններով փողոց են նետում, սովամահության մատնում, այլ վորպեսզի բարձրացնեն ապրանքի ընկած գները, պարզապես վոչնչացնում են իրենց արտադրանքի մի մասը՝ այրում են հացը, թափում են կաթը, ծովն են նետում սուրճը: Ցեվ այդ կատարվում է



միլլիոնների քաղցի միջոցին, պրոլետարների յերեխաների կիսաքաղցածությունից և ուղղակի քաղցից կործանվելու միջոցին:

Կապիտալիստական հասարակակարգի իսկական էությունն այն է, վոր նա չի կարող իրեն չհասցնել կրիզիսի այդպիսի վիճակի: Կապիտալիստները չեն կարող ապրանք արտադրել, յեթե չստանան բարձր շահույթ: Առանձին կապիտալիստներն ու նրանց խմբակցությունները չեն կարող չմրցակցել իրար դեմ: Նրանք չեն կարող և չեն կամենում իրենց շահույթի հաշվին բարձրացնել և բարելավել աշխատավոր մասսաների նյութական դրությունը: Կրիզիսներն անխուսափելի յեն կապիտալիզմի ժամանակ: Կրիզիսները ծնունդ են առել կապիտալիզմի ծննդի հետ միասին: Կրիզիսները կապիտալիզմից անբաժան են: Կրիզիսները կարող են վոչնչացվել միայն կապիտալիզմի վոչնչացման հետ միասին:

Կապիտալիզմի վողջ պատմությունը լցուն է կրկնվող (յուրաքանչյուր 8—10—12 տարին մեկ անգամ) կրիզիսներով, վորոնք բանվորական և գյուղացիական աշխատավոր մասսաներին դցում են անասելի տանջանքների: Քաղցը, թշվառության մեջ և մատնում նրանց սոսկալի տանջանքների: Քաղցը, բնակարանից արտաքսվելը, վերջին ունեցվածքի վաճառքը, կանանց և աղջիկների պրոստիտուցիան (պոռնկությամբ զբաղվելը), յերեխաների անսննդությունից առաջացած հիվանդությունները հյուծվածության հետևանքով, մահացությունը—ահա պրոլետարիատի վիճակը, վոր բերում է նրանց արտադրության անարխիան և անպլանայնությունը: Իսկ կապիտալիստները կրիզիսներից յելք են վորոնում ի հաշիվ մասսաների դրության հետագա վատթարացման, ի հաշիվ բանվոր դասակարգի շահագործման ուժեղացման: Կապիտալիստները համակենտրոնացնում, խոշորացնում են արտադրությունը, քանի վոր խոշոր ձեռնարկությունն ի վիճակի յե ավելի էժան ապրանք արտադրել, խոշոր ձեռնարկությունն ավելի շուտ է տանում կրիզիսի ծանրությունը, մտցնում են նոր տեխնիկա, ուժեղացնում են բանվորների շահագործումը, իրենց ուշադրությունն ուղղում են ուրիշների շուկաների վրա, ձգտում են դեպի գաղութները: Ի հաշիվ բանվորների և աշխատավորական մասսաների բուրժուազիան դուրս է գալիս կրիզիսից: Սակայն մի քանի տարի անց կապիտալիստական հասարակակարգը մարդկության աշխատավորական մասսաներին նորից հասցնում է կրիզիսային անդունդի յեզրին:

## 2. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՆԵԽՎՈՂ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ Է
## ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐ

Շահույթի կատաղի հետապնդումը, ապրանքների ապառման շուկաների և հում նյութի աղբյուրների համար մղվող անդադրում պայքարը տանում է կապիտալիստներին դեպի արտադրական ուժերի զարգացումը և տեխնիկայի կատարելագործումը:

Առանձին կապիտալիստների ձեռքում կենտրոնացել են ավելի մեծ ու մեծ կապիտալներ, մեծացել են նրանց տրամադրության տակ գտնված աշխատանքի գործիքները, բանվորական ուժը, աճել են արտադրության չափերը: Ձեռնարկությունները հետզհետե գնալով դառնում են ավելի խոշոր և դուրս են մղում մանրերին, խոշոր ձեռնարկություններն աճել ու զարգացել են ի հաշիվ հազարավոր տնայնագործ մանր տնտեսությունների, արհեստավորների, ի հաշիվ գյուղացիության աղքատացման, ի հաշիվ մանր ու միջակ բուրժուազիայի: Տեղի յե ունենում արդյունաբերության ուժեղ համակենտրոնացում, խոշորացում, համախմբում: Վորքան առաջ է գնում արտադրության համակենտրոնացումը, այնքանով փոքր մի բուռը կապիտալիստների խումբ դառնում է վողջ տնտեսական կյանքի ղեկավարը:

XIX դարու վերջին խոշորագույն ձեռնարկությունները դրավեցին գերակշռող դրություն կապիտալիզմի գլխավոր յերկրներում—Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Միացյալ Նահանգներում և այլն:

Արտադրության համակենտրոնացումը փոփոխություն է առաջացնում վողջ տնտեսական կյանքում: Առաջ, յերբ համակենտրոնացումը դեռ լայն զարգացում չեր ստացել, շուկայում իրար հանդեպ կանգնած եյին բազմաթիվ կապիտալիստներ: Մրցություն, պայքար նրանց միջև—[illegible] չափ թե մեջ հավասարազոր հակառակորդների, վորի ընթացքում հաղթում եր նա, ով իր ապրանքն արտադրում և վաճառում եր ավելի լավ և եժան: Սակայն եժան է արտադրում նա, ով ունի ավելի բանվորներ: Մրցությունն առանձին կապիտալիստների մղում է արտադրության համակենտրոնացման: Իսկ համակենտրոնացումը հասցնում է նրան, վոր կապիտալիստների ընդհանուր միջավայրից առանձնանում են փոքր խմբեր, վորոնք ավելի ուժեղ, ավելի արյունարբու յեն: Զգալի չափերի հասնող խոշոր ձեռնարկությունները մյուս ֆաբրիկաններին և գործարանատերերին դնում են կախվածության մեջ, շուկայում գրավում են տիրապետող դրություն, դառնում են արտադրության մոնոպոլիստներ և շուկայի տերեր:

Այսպես կապիտալիզմի զարգացման ընթացքում ստեղծվում են հզոր կազմակերպություններ, խոշոր կապիտալիստների միավորություններ, կազմակերպություններ, վորոնք տիրապետող, մոնոպոլ, բացառիկ դրություն են գրավում արտադրության մեջ և շուկայում, վորոնք պայքար են մղում հանուն ապրանքի վաճառահանման շուկաների և հումույթի աղբյուրների:

Ահա միքանի որինակներ, վոր ցույց են տալիս մոնոպոլիստական միավորումների ուժը:



Գերմանիայի ածխարդյունաբերության մեջ լիակատար մոնոպոլիան համարյա գտնվում է Հռենոս-վեստֆալյան սինդիկատի ձեռքում: Պատերազմի սկզբին նրա կազմի մեջ եյին մտնում 62 ինքնուրույն ձեռնարկություններ, նրանցից 12 հսկա ձեռնարկություններում կենտրոնացված է ածխի վողջ արտադրության կեսից ավելին, իսկ այդ հսկաներից յերեքը—ամենախոշորները— Հելզենկիրխյան ընկերությունը, Հարպենյան ընկերությունը և Հիբերնիան մշակում եյին 23,6 միլիոն տոնն ածուխ 88,6 միլիոն տոնն ընդհանուր գումարից, այսինքն այդ մոնոպոլիստական սինդիկատով միավորվող վողջ արտադրանքի մեկ քառորդը:

1929 թվին ՀԱՄՆ-ում պողպատի ընդհանուր արտադրանքի 70 տոկոսը կենտրոնացած եր մետաղագործական յերեք տրեստներում:

1930 թվին ՀԱՄՆ-ի ավտոմոբիլային արդյունաբերությունը 60 տոկոսով կենտրոնացած եր յերկու ֆիրմի՝ «Ֆորդ»-ի և «Ջեներալ Մոտորս»-ի ձեռքում: «Ֆիատ» ֆիրման արտադրում է Իտալիայի բոլոր ավտոմոբիլների համարյա 85 տոկոսը: Ավտոմոբիլային արտադրության մեջ ամբողջ աշխարհում տիրապետողները կենտրոնացած են 5—6 կոնցերններում:

«Ջեներալ-Էլեկտրիկ» և «Վեստինհաուզ» էլեկտրական ինդուստրիայի յերկու հզոր հսկաներ են, վոր տիրապետում են ՀԱՄՆ-ում և հանդիսանում են համաշխարհային խոշորագույն միավորումները:

Գերմանիայում էլեկտրական պիտույքների համարյա ամբողջ արտադրանքը գտնվում է յերկու խոշոր տիրապետող մոնոպոլիստական միավորությունների ԱԵԳ-ի (էլեկտրականության ընդհանուր ընկերություն) և Սիմենս-Շուկկերտ-Դալսկեյի ձեռքում:

Կապիտալիստական մենաշնորհների զարգացումը, վորոնք շահագործում են արտաքին լայն շուկաները, հանգեցին միջազգային մոնոպոլիստական միությունների կազմակերպմանը:

Պղնձի միջազգային սինդիկատը կոնտրոլի յե յենթարկում պղնձի համաշխարհային արտադրության 85—90 տոկոսը: Այս խոշորագույն միջազգային մենաշնորհը կարող եր առաջանալ միայն պղնձի արտադրության համազգային մասշտաբով հսկայական համակենտրոնացման հետևանքով՝ ամենից առաջ ՀԱՄՆ-ում, ուր յերեք տրեստներ կոնտրոլի յեն յենթարկում պղնձի համաշխարհային արտադրանքի համարյա 76 տոկոսը: Պղնձի միջազգային սինդիկատը ծնունդ առնելով ամերիկյան մոնոպոլիստների ղեկավարությամբ և նախաձեռնությամբ, միավորում է՝ ՀԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի, Չիլիի, Մեքսիկայի, Պերուի և Կանադայի կապիտալիստներին: Սինդիկատը վոչ միայն կոն-

տրոլի յե յենթարկում իր անդամների արտադրության չափը, այլ և ճշգրիտ նշում է նրանց բաժինը (կվոտա) արտաքին շուկաների բաշխման մեջ: Բացի այդ, սինդիկատը սահմանում է վաճառքի գները:

Զնայած համարյա ամբողջ աշխարհի պղնձի արտադրանքն իրեն կողմից կոնտրոլի յենթարկելուն, սինդիկատին չհաջողվեց վերացնել մրցման պայքարը: Արդեն սինդիկատի կազմակերպվելուց անմիջապես հետո սկսվեց դժգոհությունը նրա մասնակիցների միջև: Այդ տարաձայնություններն առաջացան շնորհիվ սինդիկատի գների քաղաքականության. ոգտվելով միավորության մեջ ունեցած իրենց գերակշիռ դրությունից, ամերիկացիները ՀԱՄՆ-ի համար նշանակեցին ավելի ցածր գներ, քան յեվրոպական յերկրների համար և դրանով իսկ հեշտացրին մրցության պայքարն ամերիկական այն ձեռնարկությունների համար, վորոնք պղինձ և պղնձի իրեր եյին արտահանում Յեվրոպա: Այդ տարաձայնությունների հողի վրա դեռ 1926 թ. սինդիկատից յելավ անգլիական մեկ ընկերություն, վորն այնուամենայնիվ հարկադրված եր նորից սինդիկատ մտնել, վորովհետև վերջինս արգելեց իր անդամ՝ բելգիական ձեռնարկությանը պղնձահանք մատակարարել սինդիկատի մեջ չմտնողներին, նույն թվում նաև հիշյալ անգլիական ընկերությանը: Այնուհանդերձ սինդիկատի ներսի պայքարը չի դադարել մինչև այսօր:

Խոշոր հետաքրքրություն է ներկայացնում պղնձի միջազգային սինդիկատի գների քաղաքականությունը: Մինչև սինդիկատի կազմվելը համաշխարհային շուկայում պղնձի ֆունտն արժեր 12—12 և կես ամերիկյան ցենտ: Սինդիկատն սկսեց «թելադրել» շուկային իր գները:

Զնայած արտադրության ծախսերի ընկնելուն, սինդիկատին հաջողվեց իր գոյության առաջին 2 և կես տարվա ընթացքում բարձրացնել համաշխարհային գները 100 տոկոսով. 1929 թ. ապրիլին պղնձի մեկ ֆունտի գինը հասնում եր 24,75 ցենտի:

Ճիշտ է, գներն այդ մակարդակին պահելը սինդիկատին չհաջողվեց, շնորհիվ ալյումինի մրցության, վորն ավելի եժան եր, քան թե արհեստականորեն թանգացած պղինձը և այս պատճառովել առաջինն ավելի ձեռնտու դարձավ ելեկտրական, ռազմական և այլ արդյունաբերությունների համար: Գները 1928—29 թվերի մակարդակին պահելը չհաջողվեց գլխավորապես շնորհիվ համաշխարհային տնտեսական ճգնաժամի:

Նորից մի որինակ բերենք նավթային խոշոր մենաշնորհների պայքարից: Ներկայումս նավթային խոշորագույն մոնոպոլիաները, վորոնք պայքարում են նավթի բնագավառում համաշխարհային հեգեմոնիա ձեռք բերել, հանդիսանում են «Ստանդարտ Ոյլ» ամերիկյան խմբակցությունը (վոր ֆինանսապես կախում ունի Ռոկֆելլերից) և «Ռոյալ-Դեյչ-Շելլ»



անգլիական խմբակցությունը (վորի գլուխը կանգնած է անգլիական միլիարդատեր, ԽՍՀՄ-ի կատաղի թշնամի Դետերդինգը): Այս տրեստների միջև տեղի ունեցող մրցակցությունը հանդիսանում է անգլիական և ամերիկյան իմպերիալիզմի գլխավոր հակասություններից մեկը: Ստանդարտ—Ոյլը», վորը բոլոր յերկրներում ունի 500-ից ավելի ճյուղավորություններ և իր տրամադրության տակ ունի չորս միլիարդ դոլարի հիմնական կապիտալ, այժմ կոնտրոլի յե յենթարկում նավթի համաշխարհային հանույթի 25 տոկոսն ու մշակման 50 %-ը: Նա տիրապետող է ՀԱՄՆ-ի նավթային արդյունաբերության մեջ, կոնտրոլի յե յենթարկում արտաքին առևտրի 70 տոկոսը: Վենեցուելայում, վորը մինչև պատերազմը հանդիսանում եր անգլիական խմբակցությունների մենաշնորհի «ազդեցության շրջանը», վերջին տարիներս «Ստանդարտ—Ոյլը» ուժեղ կերպով ամրապնդվել է ի հաշիվ «Շելլի» և ներկայումս կոնտրոլի յե յենթարկում նավթահանույթի մոտավորապես 50 տոկոսը: Այդպես է դրությունը նաև Մեքսիկայում, ուր ամերիկյան կապիտալները կազմում են նավթային արդյունաբերության ներդրումների կեսից ավելին: Կոլումբիայում նավթային արտադրությունը գտնվում է համարյա բացառապես ամերիկյան խմբակցությունների ձեռքում: Ինչ վերաբերում է «Շելլին», նրա դիրքերն ամուր են հատկապես ամերիկյան սահմաններից դուրս: Դետերդինգը կոնտրոլի յե յենթարկում հոլանդական Հնդկաստանի նավթային վողջ արտադրանքը և ռումինական, Մոսուլի, Պարսկաստանի, Յեգիպտոսի ու Հնդկաստանի նավթի արտադրանքի զգալի մասը: «Ստանդարտ—Ոյլի» և «Շելլի» միջև սուր պայքար է մղվում վոչ միայն նավթի արտադրության բնագավառում, այլև այդ նավթի մշակման և հատկապես նրա արտահանության բնագավառում: Քիչ չի սրված պայքարն այս խմբակցությունների մեջ նաև նոր նավթավայրերի համար: Այս պայքարը մղվում է միաժամանակ ամերիկյան ու անգլիական կառավարությունների սերտ մասնակցությամբ, վոչ միայն տնտեսական, այլև քաղաքական, դիպլոմատիկական և ռազմական մեթոդներով:

Մոնոպոլիստական միավորությունները դարձել են կապիտալիստական արդյունաբերության հիմնական տերեր, վորի շարունակական աճումը հասցրեց արտադրության համակենտրոնացման ու կենտրոնացման, կապիտալի խոշոր մոնոպոլիստական միավորումների, տրեստների, սինդիկատների, կարտելների ստեղծվելուն, կապիտալիզմի նոր, բարձր աստիճանին անցնելուն, վոր կոչվում է իմպերիալիզմ: Կապիտալիզմը դարձավ մոնոպոլիստական կապիտալիզմ, ուր կենտրոնական տեղն ապրանքների արտադրության և շրջանառության մեջ գրավեցին մենաշնորհները, խոշորագույն և ամենահարուստ գիշատիչները:

«Իմպերիալիզմը կապիտալիզմի մոնոպոլիստական փուլն է»—ասում է

ընկ. Լենինը: Մոնոպոլիստները հանդիսանում են նորագույն կապիտալիզմի գլխավոր հատկանիշը: Բուրժուական գիտնականները, II Ինտերնացիոնալի սոցիալ-դավաճանները և նրանց ուղիղն ընկնող աջ օպորտունիստները պնդում են, վոր կապիտալիստների մոնոպոլիստական միավորումների զարգացմամբ մեռնում է մրցությունը, վերանում է պայքարը կապիտալիստների միջև—կապիտալիզմը դառնում է «կազմակերպված», ասում են նրանք: Իսկ իրականության մեջ մենաշնորհները տանում են վոչ թե դեպի կազմակերպվածություն, այլ դեպի հետագա անարխիա. կապիտալիզմի բոլոր հակասությունները, [illegible]իալիզմի զարգացմանը զուգընթաց, ավելի ու ավելի սրվում են: [illegible] մոնոպոլիստական միավորումների միջև, պայքարը հա[illegible] վաճառահանման շուկաների և հումույթի աղբյուրների [illegible] քան ավելի ուժեղանում և սրվում է: Այդ ավելի ցայտուն [illegible] վեց հզորագույն նավթային ընկերությունների օրինակը [illegible] կայացնում էին առանձին յերկրների և նույնիսկ տա[illegible] խմբակցությունների շահեր: Ուժեղանում և սրվում է պա[illegible] կապիտալիստների կամ նրանց խմբակցությունների միջ[illegible] կարտելի շահույթներին մասնակցելու չափի շուրջը:

Ուժեղանում է տրեստների պայքարը, նրանց զուգըն[illegible] ունեցող, սակայն միավորումների մեջ չընդգրկվող [illegible] ների միջև: Մենաշնորհները տանում են դեպի արտադր[illegible] նայնության և անարխիայի ուժեղացում: Մոնոպոլիստ[illegible]լիզմի դարաշրջանում կրիզիսները կրկնվում են հսկայական կործանիչ չափերով:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

Սակայն արդյունաբերության մեջ մենաշնորհների ստեղծումն իմպերիալիզմի՝ կապիտալիզմի այդ նոր, բարձրագույն փուլի միակ հատկանիշը չէ:

Իմպերիալիզմը նշանավորում է բանկերի ամենազոր լինելը: Կապիտալիզմի զարգացման սկզբնական շրջանում բանկը կատարում էր վճարումների միջնորդի շատ համեստ դեր, տոկոսով վարկավորելով իրեն պահպանության հանձնած փողերով այն ձեռնարկություններին, վորոնք դրա կարիքն էին զգում:

Սակայն «միջնորդների համեստ դերից—ասում է Լենինը—բանկերը վերածվում են ամենազորեղ մոնոպոլիստների, վորոնք տնօրինում են համարյա ամբողջ դրամական կապիտալը՝ կապիտալիստների և մանր տնտեսությունների բովանդակ մասսայի, նույնպես նաև արտադրության միջոցների մեծ մասն ու հումույթի աղբյուրները՝ տվյալ յերկրում և մի շարք յերկրներում»: Բանկերի այդ համեստ միջնորդների մի բուռը մոնոպոլիստներ դառնալը կազմում է իմպերիալիզմի հիմնական հատկանիշներից մեկը:

Կապիտալիստական յերկրներում բանկերը տնօրինում են վոչ միայն դրամական կապիտալը, նրանք իրենց ձեռքն են առնում նաև արդյունաբերությունը, համաճում են արդյունաբերության հետ, դառնում են արդյունաբերական ձեռնարկությունների տերեր: Նրանք իրենց կոնտրոլին են յենթարկում այն ձեռնարկությունները, վորոնք միջոցների կարիք ունեն:

Բանկերն իրենց են յենթարկում վոչ միայն այն ձեռնարկությունները, վոր ստեղծել են առանձին կապիտալիստները, այլև նրանք հետզհետե ավելի և ավելի դառնում են նոր ձեռնարկությունների և արդյունաբերության մի շարք ճյուղերի հիմնադիրներ և կազմակերպիչներ: Արդի հսկա ձեռնարկությունների շինարարությունը, վոր սարքավորված են տեխնիկայի վերջին խոսքի համաձայն, պահանջում են մեծ միջոցներ, վորը դրդում է կապիտալիստին այդպիսին ներդրավել, մոբիլիզացիայի յենթարկելով բնակչության լայն մասսաների բանկային խնայողությունները: Ակցիոներական ընկերությունները (ընկերություններ, միություններ) բաց են թողնում արժեթղթեր—ակցիաներ, վորի վաճառումով ձեռք են բերում անհրաժեշտ միջոցներ: Ակցիաներ գնողն իրավունք է ստանում մասնակցելու ձեռնարկության շահույթներին, համաձայն այն գումարի, վորքանի նա գնել է ակցիաներ: Խոշոր կապիտալիստները և բանկերն այնքան ակցիաներ են ձեռք բերում, վոր հնարավորություն ունենան իրենց ձեռքում պահելու այն ընկերության գործերը, վորը նախաձեռնել է նոր արդյունաբերական ձեռնարկության ստեղծումը:

Գնելով հին, գործող ձեռնարկությունների ակցիաները, բաց թողնելով և ձեռք բերելով նոր կառուցվելիք ձեռնարկությունների ակցիաները, բանկերն աստիճանաբար իրենց ձեռքն են գցում ողջ արդյունաբերությունը և դառնում են կապիտալիստական յերկրների ամբողջ տնտեսական կյանքի ղեկավարը:

Այսպիսով բանկային կապիտալը համաճում է արդյունաբերական կապիտալի հետ: Իսկ բանկերն իրենց հերթին միանում, համակենտրոնանում են: Դրա հետևանքով փոքրաթիվ քանակությամբ բանկեր դառնում են յերկրի տնտեսական և քաղաքական կյանքի քմահաճ ղեկավարները: Իմպերիալիզմը ֆինանսական կապիտալի դարաշրջանն է, բանկերի տիրապետությունն է յերկրի ամբողջ տնտեսական կյանքում:

Մոնոպոլիստական ֆինանսական խմբակցություններն սկսել են մեծ դեր խաղալ: ՀԱՄՆ-ը (Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները)

տալիս է մի շարք փայլուն օրինակներ, վոր ցույց են տալիս սրանց ղորությունը: Մորգան-Բեյկերի խմբակցությունը հանդիսանում է ՀԱՄՆ-ի ամենահզոր ֆինանսական-կապիտալիստական միավորությունը: Պողպատի արդյունաբերության մեջ նա կոնտրոլի յե յենթարկում մի միավորություն, վորն արտադրում է ՀԱՄՆ-ի պողպատի վողջ արտադրանքի 38 տոկոսը և դրանից զատ մեծ ազդեցություն ունի ուրիշ յերկու պողպատի ամենախոշոր ընկերություններում: Պղնձի արդյունաբերության մեջ նա կոնտրոլի յե յենթարկում ամենախոշոր միավորումները, վորոնք իրենց ձեռքում ունեն պղնձի հանույթի 25 տոկոսը և նրա մշակման (рафинирование) 35 տոկոսը: Ավտոմոբիլային արդյունաբերության մեջ նա կոնտրոլի յե յենթարկում «Գեներալ Մոտորս» ֆիրման, վոր բաց է թողնում ավտոմոբիլների ամբողջ քանակի 35 տոկոսը և վորն իր հերթին կոնտրոլի յե յենթարկում մի շարք ընկերություններ՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում՝ իր կապիտալներով նրանցում «մասնակցելու» միջոցով: Հեռախոսի և հեռագրի բնագավառներում այս խմբակցությունը կոնտրոլի յե յենթարկում «Հեռագիր և հեռախոս» միավորությունը, վոր ունի չորս միլիարդ շահույթ և համարյա հանդիսանում է ՀԱՄՆ-ի հեռախոսային գործի լիակատար մոնոպոլիստը (ամբողջ աշխարհի յերեսուն միլիոն հեռախոսների ընդհանուր թվից 20 միլիոնը գտնվում է այս ընկերության կոնտրոլի ներքո), խոշորագույն հեռագրական ընկերությունը և մի շարք ուրիշ ընկերություններ: Մորգանի խմբակցության կոնտրոլի ներքո յե գտնվում 78 հազ. միլ. մղոն յերկարությամբ յերկաթուղու ցանց՝ այսինքն՝ ամբողջ յերկաթուղային սիստեմի մեկ յերրորդը: Հասարակական ոգտագործման ձեռնարկությունների (ելեկտրականություն և գազ) բնագավառում Մորգանը կոնտրոլի յե յենթարկում ելեկտրական եներգիայի արտադրության համարյա 40 տոկոսը:

Այսպես են միայն Մորգանի ազդեցության հիմնական բնագավառները: Մորգանի խմբակցության անմիջական կոնտրոլին են յենթարկվում մի շարք խոշոր միավորություններ, վորոնց ընդհանուր մուտքի գումարը հասնում է 30 միլիարդ դոլլարի և ունեն 9 միլիարդ դոլլար ակցիոներական կապիտալ: Յեթե սրան ավելացնենք նաև այն ձեռնարկությունները, վորոնք կախումն ունեն Մորգանի խմբակցությունից, այդ դեպքում վերևում բերված գումարը պետք է ավելացնենք մինչև 50 միլիարդի: Մորգանը համաշխարհային բանկիր է: Մորգանի բանկային տունը փաստորեն ֆինանսավորում եր 1914—1918 թվերի համաշխարհային պատերազմը: Յեվրոպական յերկրներին տրվող հետպատերազմյան բոլոր կարևոր փոխառությունները կապ ունեն Մորգանի հետ:

Մորգանի գործունեյությունն ունի հսկայական թափ, ընդգրկում է տնտեսական կյանքի բոլոր հիմնական բնագավառները: Մորգանի խմբակցությունը ղեկավարում է խոշորագույն ձեռնարկությունները, յերկրի բանկերը, խոշորագույն դեր է խաղում ՀԱՄՆ-ի տնտեսական կյանքում և նրա սահմաններից դուրս:

ՀԱՄՆ-ի յերկրորդ հիմնական ֆինանսական կապիտալիստական խմբակցությունը—Ռոկֆելլերը—ղեկավարում է նավթային և ածխային խոշորագույն ընկերություններին: Բացի այդ, Ռոկֆելլերը մասնակցում է քիմիական, ավտոմոբիլային, ռետինի, ավիացիոն արդյունաբերություններին, յերկաթուղագծերին և այլն: Ռոկֆելլերի բանկային շահերը ներկայացվում են «Չեյզբանկ» բանկում, վորը ներկայումս աշխարհում առաջին տեղն է գրավում:

Այսպես է Ամերիկայի ֆինանսական կապիտալի տուզերի հզորությունը, վորոնք իրենց ձեռքն են կենտրոնացնում խոշորագույն իշխանություն «ուրիշի կապիտալի և ուրիշի աշխատանքի» վրա: Այդ մագնատները պայքարում են իրար դեմ հանուն անբաժան տիրապետության. վորովհետև հիմնական մոնոպոլիստների—Մորգանի, Ռոկֆելլերի, Դյուպոնի և այլոց շահերն իրար են բախվում ամենաբազմապիսի բնագավառներում (նավթ, քարածուխ, յերկաթուղիներ, կապիտալի արտահանում և այլն): Այդ բախումներն արտահայտում են կապիտալիզմի շոնանված մրցության սրումը նրա զարգացման նոր, բարձրագույն աստիճանում: Ֆինանսական կապիտալի մենաշնորհը բերում է նրան, վոր բանկերը դառնում են մեծագույն պարազիտներ, և նրանց տերերը, խոշոր ակցիոներները ճրիակերներ են, վորոնք կտրված են արտադրությունից և ապրում են «կուպոններ խուզելով»: Այդ անգործների պրոֆեսիան (իրենց յերկրի, գաղութների և կիսագաղութների բնվորության և աշխատավորության վայրենի շահագործմամբ ապրող և դրանով հսկայական յեկամուտներ կուտակողների), այդ պարազիտների պրոֆեսիան խրախճանքն ու պորտաբուծությունն է:

Այդ բանկային ակուլաների (շնաձուկ), այդ մոնոպոլիստական ավազակախմբերի ուժն ու ազդեցությունը հսկայական է: Կապիտալիստական կառավարությունների և իմպերիալիստական յերկրների բազմազան կուսակցությունների քաղաքականությունը վորոշվում է ֆինանսական կապիտալի շահերով:

Մարդկային մի փոքրիկ խմբակցություն, միքանի հարյուր բանկային տնօրեններ և դրամական տուզեր վարում են հարյուր միլիոնավոր մարդկանց բախտը, մի շարք յերկրների և ժողովուրդների բախտը: Կամարդկանց ... այդ բանկային քմահաճ ... Կառավարությունները միայն հանդիսանում են այդ բանկային քմահաճ

գույն ֆինանսական տուզերի կամքի: Բավական է միայն ֆինանսական ճնշում գործադրել և մինիստրները կթռչեն իրենց պոստերից ինչպես ճճմածներ: Կապիտալիստական յերկրների կառավարությունների և նրանց մինիստրների հաճախակի փոփոխությունը (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան, Ռումինիա և այլն) հետևանք է այս կամ այն ֆինանսական խոշորագույն շայկայի դժգոհության, վորոնք յերկրների փաստական կառավարիչներն են»: Մինիստրների, պատգամավորների, աստիճանավորների և այլոց ուղղակի և անուղղակի կաշառումը (տաքուկ տեղեր հատկացնելը, ցմահական նվերները և այլն) դառնում է սովորական յերևույթ: Վոչ մի «առաջավոր» կապիտալիստական յերկրի կառավարություն ի վիճակի չի ձեռնարկել վորևէ լուրջ քայլ առանց բանկերի և նրանց տերերի համաձայնության:

Ֆինանսական կապիտալը վոչ միայն կոնտրոլի յե յենթարկում և իրեն յենթակա պահում առանձին մինիստրների, ամբողջ կառավարություններ, այլև շնորհիվ այն չաղ պատառի, վոր նա ստանում է գաղութներում, իր դերշահի փշրանքներով սկսում է կերակրել բանվորության վերնաշերտը, այսպես կոչված բանվորական արիստոկրատիային՝ բարձրացնելով նրա աշխատավարձը, դարձնելով նրան շահագրգիռ կողմ իմպերիալիզմի գոյության ու գաղութների կողոպուտի խնդրում: Այս սիստեմատիկ կաշառումն առանձնապես լայնորեն գործադրվում եր իմպերիալիստական հզորագույն յերկրներում: Սոցիալ-դեմոկրատիայի և ռեֆորմիստական պրոֆմիությունների ղեկավար կադրերը հանդիսացան բուրժուազիայի իդեոլոգներն ու պրակտիկները և նրա ազդեցության անմիջական գործադրողներն ու կապիտալիստական հասարակակարգի լավագույն հենակետերը:

Սոցիալ-դեմոկրատական կուսակցության, II Ինտերնացիոնալի բոլոր կուսակցությունների առաջնորդները դարձան իրենց իմպերիալիստական կառավարությունների բացարձակ պաշտպան, դարձան բուրժուազիայի հիմնական հենարանը:

## ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Արտադրության համակենտրոնացումը, կապիտալիստական մոնոպոլիաների աճումը, վորոնք խոշոր կապիտալներ ունեյին (Ամերիկական պողպատի տրեստը 1930 թվին ուներ մեկ ու կես միլիարդ դոլլար հիմնական կապիտալ, Գերմանական քիմիական տրեստը՝ 1 ու կես քառորդ միլիարդ մարկ և այլն) պատմության մեջ չտեսնված թափ առան:

Հսկայական շահույթները (վերոհիշյալ տրեստների տարեկան շահույթն 1929 թ. հասնում եր 300 միլիոն դոլլարի) վորոնում են ձեռնտու գործադրություն: Կապիտալի հսկայական «ավելցուկը», վոր ստեղծ-



վում եր միլիոնավոր աշխատավորության արյունով, քրտինքով, յերկրի ներսում գործադրման տեղ չի գտնում: Քաղցած ու ավերված միլիոնավոր մարդիկ վատ գնորդներ են: Ֆինանսական և արդյունաբերական տուզերն իրենց կապիտալներն ուղղում են արտասահման, առանձնապես հեռու ընկած յերկրներ, գաղութներ ու կիսագաղութներ, վորպեսզի այնտեղ աշխատավորական մասսաների սանձարձակ շահագործումով ստանան դերշահ, ամրացնեն իրանց նոր հսկայական վաճառահանման շուկաները, գրավեն հումքի աղբյուրները: Կապիտալի արտահանությունը դեպի հետամնաց յերկրներ—առանձնապես չաղ, առանձնապես խաղաղ վորսի արդյունք է—ասում է Լենինը: Այդ հետամնաց յերկրներում շահույթը սովորաբար բարձր է, վորովհետև «կապիտալները քիչ են,—հողի գինը համեմատաբար մեծ չէ, աշխատավարձը ցածր է, հումքն ու նյութերն եժան են»: Կապիտալի արտահանումը մեծացնում է գաղութների և կիսագաղութների տնտեսական և քաղաքական կախվածությունն իմպերիալիստական գիշատիչներից: Խոշորագույն յերկրների կապիտալիստներն իրենց կապիտալներն արտահանում են Հարավային Ամերիկա, Չինաստան, Հնդկաստան, Բալկաններ և այլն: Միլիարդավոր ռուբլիներ ներդրվում են այդ յերկրների ձեռնարկությունները, յերկաթուղիների մեջ և հսկայական բնական հարստությունների մշակման համար,—անխնա շահագործման են յենթարկվում գաղութների միլիոնավոր ստրուկներ: Կապիտալի արտահանումը կապիտալիզմի այդ նոր բարձրագույն ստադիայի—իմպերիալիզմի կարևորագույն հատկանիշներից մեկն է:

## ՊԱՅՔԱՐ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՅԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

«Վորքանով բարձր է կապիտալիզմի զարգացումը,—ասում է Լենինը,—վորքանով ուժգին է զգացվում հումույթի պակասը, վորքանով սուր է մրցությունը և հումույթի բաղմների հետապնդումն ամբողջ աշխարհում, այնքան կատաղի յե պայքարը հանուն գաղութներ ձեռք բերելու»: Այդ հասկանալի յե, վորովհետև գաղութին տիրանալն ավելի հաստատուն է դարձնում մոնոպոլիստական կապիտալի գործունեյությունը գաղութներում: Իմպերիալիզմի վողջ դարաշրջանը լի յե ապրանքի վաճառահանման շուկաների և հումքի աղբյուրների համար մղվող պայքարով, իրենց կապիտալներն արտաքին շուկաներում ներդնելու պայքարով: XX դարի սկզբին արդեն բոլոր գաղութները բաժանված եյին խոշորագույն կապիտալիստական պետությունների միջև: Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, ցարական Ռուսաստանը և ուրիշները գրավել եյին աշխարհի բոլոր ազատ տարածությունները: Սակայն այդ ժամանակվա

ընթացքում աճեցին նոր յերիտասարդ իմպերիալիստական պետություններ բարձր զարգացած արդյունաբերությամբ, ավելի կատարելագործված տեխնիկայով, վորոնք ընդունակ եյին ստեղծել ապրանքների հսկայական զանգվածներ՝ ավելի արագ, ավելի եժան, ավելի լավ։ Կապիտալիզմն անհավասարաչափ ե զարգանում։ Այդ անհավասարաչափ զարգացումն իմպերիալիզմի դարաշրջանում առանձնապես ուժեղանում ե, սրվում ե և դառնում ե կապիտալիզմի զարգացման որենք։ Շնորհիվ մենաշնորհի աճի, տեխնիկայի նվաճումների—վորոշ յերկրներ զարգանում են չափազանց արագ, իսկ մյուսները հետ են մնում։ Ավելի յերիտասարդ, ուժեղ իմպերիալիստական պետությունները հասնում են մյուսներին։ Ավելի ուշ հրապարակ յեկած կապիտալիստական պետություններ, ինչպես Գերմանիան, Ճապոնիան, Միացյալ Նահանգները—սկսեցին իրենց համար ել արևի տակ տեղ վնտռել, ապրանքի սպառման և կապիտալի արտահանման շուկաներ վորոնել։ Հարց դրվեց աշխարհի նոր վերաբաժանման մասին, անխուսափելի դարձան նոր զինված ընդհարումներ իմպերիալիստական գիշատիչների միջև։ Արյունալի պատերազմները, վոր միլիոնավոր աշխատավորների կործանում են բերում, կապիտալիզմի անխուսափելի ուղեկիցն են հանդիսանում։

1914—1918 թվերի իմպերիալիստական պատերազմը ծագեց կապիտալի խոշորագույն յերկրների միջև աշխարհի նոր վերաբաժանման համար մղվող պայքարի հետևանքով (Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա և այլն)։ Կապիտալիզմի զարգացման վողջ ընթացքը կապիտալիստական յերկրներին հասցրեց այդ պատերազմին և պատերազմի սկսման հետ ծավալվող կապիտալիստական սիստեմի ընդհանուր կրիզիսին։

Լենինը պատերազմի ժամանակ 1916 թ. գրած իր «Իմպերիալիզմը իբրև կապիտալիզմի նորագույն ետապ» գրքում տալիս ե իմպերիալիզմի այսպիսի բնորոշում. «Իմպերիալիզմը կապիտալիզմն ե իր զարգացման այն աստիճանում, յերբ կազմակերպվել ե մոնոպոլիաների ու ֆինանսական կապիտալի տիրապետությունը, յերբ կապիտալի արտահանությունը ստացել ե առաջնակարգ նշանակություն, յերբ սկսվեց աշխարհի բաժանումը միջազգային տրեստների կողմից և վերջացավ ամբողջ աշխարհի տերիտորիայի բաժանումը խոշորագույն կապիտալիստական յերկրների կողմից»։

Այսպես ե իմպերիալիզմի—կապիտալիզմի այդ նոր բարձրագույն աստիճանի ուղին։ Սակայն իմպերիալիզմը վոչ միայն կապիտալիզմի բարձրագույն աստիճանն ե, այլև կապիտալիզմի վերջին փուլը. իմպերիալիզմը մեռնող, նեխվող կապիտալիզմն ե։ Իմպերիալիզմը սոցիալիստական հեղափոխության նախորեն ե։



## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՆԵԽՈՒՄԸ

Իմպերիալիզմի զարգացման վողջ ընթացքը նրան տանում ե դեպի նեխումն ու կործանումը։ Կապիտալիստական մոնոպոլիաներն անխուսափելիորեն տանում են դեպի կանգառում և նեխվածություն։ Նրանք արտադրության և շուկայի տերերն են։ Նրանք ձգտում են բարձր գներ սահմանել և այդ գները բարձր մակարդակի վրա պահել։ Առաջ ազատ մրցության ժամանակ կապիտալիստներն աշխատում եյին շատացնել իրենց շահույթն ի հաշիվ արտադրության ծախքերի կրճատման և այդ նպատակով մուծում եյին տեխնիկայի նորանոր կատարելագործություններ, նոր մեքենաներ։ Քանի վոր մոնոպոլիստներին, ինչպես ասում ե Լենինը—հաջողվում ե առանց այն ել գները պահել բարձր մակարդակի վրա, ուրեմն «վորոշ չափով անհետանում են դեպի տեխնիկայի առաջադիմությունը տանող առաջմղիչ պատճառները», մոնոպոլիստները դադարում են նոր մեքենաներ մուծելուց, տեխնիկայի բարելավման, ձեռնարկության վերասարքավորման գործում շահագրգռված լինելուց։ Այս պատճառով ել մոնոպոլիաները սովորաբար վախենում են տեխնիկական գյուտերից և նորամուծություններից, վորովհետև դրանք կարող են խախտել նրանց մենաշնորհ դրությունը շուկայում կամ արժեքազրկել այն հսկայական կապիտալները, վոր նրանք մտցրել են արտադրության մեջ։ Մոնոպոլիաները կասեցնում են տեխնիկական գյուտարարությունը։ Մոնոպոլիաները դառնում են տեխնիկայի հետագա զարգացման և արտադրողական ուժերի աճման արգելակներ։

Լենինն իր իմպերիալիզմի մասին աշխատության մեջ ել որինակ ե բերում Ոուենսի շշի մեքենայի հետ պատահած դեպքը, վորը հնարվել եր Ամերիկայում։ Գերմանական շշի կարտելը գնեց Ոուենսի իրավագիրը (գյուտի կիրառման թույլտվություն) և կանգնեցրեց նրանց կիրարկումը։ Հետպատերազմյան շրջանը շատ այդպիսի դեպքեր գիտե։ Սրանից միքանի տարի առաջ հնարված եր ելեկտրական անկեզ լամպ՝ «մշտնջենական լամպ»։ Սակայն այդ գյուտը չի կիրարկվում, վորովհետև նա սպառնում ե կրճատել ելեկտրական արդյունաբերության տրեստների վաճառահանումը։ Գերմանիայում զտված քարածխից նավթ ստանալու յեղանակը գնված ե ամերիկական նավթային տրեստի կողմից, վորը պահել ե այն՝ սեղանի մահուդի տակ։ Ամերիկայի յերկաթուղիներն ելեկտրիֆիկացիայի չեն յենթարկվում, վորովհետև այդ ձեռնտու չե այժմ գոյություն ունեցող յերկաթուղիների տերերին՝ մոնոպոլիստներին։

Կանգ առնելու ձգտումը, տեխնիկայի զարգացման կասեցումն առանձնապես ուժեղ ե այժմ՝ կապիտալի յերկրներում բռնած համաշխարհային տնտեսական կրիզիսի շրջանում։ Կապիտալիստները կոչ են

անում՝ «Հետ, դեպի անցյալ դարու տեխնիկան», հուսալով, թե գուցե այն ազատի կապիտալիզմը կործանումից:

Իմպերիալիստական դարաշրջանում առանձնապես ակնբախ է դրըսևորվում տիրող դասակարգերի գործունեության պորտաբույծ բնույթը: Կապիտալի մագնատների ճնշող մեծամասնությունը վոչ մի կապ չունի արտադրության պրոցեսին, կապիտալիստները դարձել են ակցիաների, օբլիգացիաների, պետական փոխառությունների և այլ արժեթղթերի տերեր, վորոնք նրանց յեկամուտ են բերում: Ձեռնարկությունների ղեկավարությունը գտնվում է վարձու տեխնիկական պերսոնալի ձեռքում: Բուրժուազիայի զգալի խավեր դարձել են պարապ պորտաբույծներ, վոր ապրում են միայն «կտրոն խուզելով»: Նրանց կապիտալները ներդրված են ձեռնարկությունների ակցիոներական ընկերությունների մեջ, «զբոսնում են» ամբողջ աշխարհը և այդ պարազիտներին բերում են խոշոր յեկամուտներ: Ամբողջ պետություններ դեռևս պատերազմից առաջ (Անգլիա, Ֆրանսիա), իսկ այժմ նաև ՀԱՄՆ դառնում են վաշխառուներ, պարազիտային և նեխվող կապիտալիզմի պետություններ:

Իմպերիալիզմը սաստկացնում է կապիտալիզմի հիմնական հակասությունը՝ արտադրության հասարակական և նրա արդյունքի յուրացման մասնավոր բնույթների միջև, ուժեղացնում է արտադրության անարխիան, սրում է կապիտալիստական սիստեմի բոլոր հակասությունները: Կրիզիսները, կապիտալիզմի այդ անխուսափելի ուղեկիցը, իմպերիալիզմի շրջանում կրկնվում են ավելի կործանիչ ուժով, բերելով կործանում ու ավերում միլիոնավոր աշխատավորների համար:

Այսպես նեխվում է և դեպի կործանումն է գնում կապիտալիստական սիստեմը:

Սակայն այն բանից, թե կապիտալիստական սիստեմն իր ամբողջությամբ գնում է դեպի վերջնական կործանում, յերբեք չի կարելի յեզրակացնել, թե կապիտալիզմն ինքն իրեն կկործանվի, վոր իբր թե «ավտոմատիկ» ձևով անկում կապրի, վոր միջազգային պրոլետարիատը կարող է հանգիստ, ձեռքերը ծալած սպասել, մինչև վոր կապիտալիզմը փտած կքայքայվի և վերջնականապես կնեխվի: Իրականում այդպես չի կատարվի կապիտալիզմի վախճանը: Իմպերիալիզմի քայքայման պրոցեսը յերկարատև պրոցես է, վոր կապված է կապիտալիստական յերկրների պրոլետարների և հալածված ժողովուրդների աշխատավորական մասսաների չլսված տանջանքների ու զրկանքների հետ: «Իմպերիալիզմը,—ասում է Լենինը—վերջին որերն ապրող, սակայն վոչ արդեն վերջացած, մեռնող, սակայն վոչ մեռած կապիտալիզմն է: Նրան պետք է խեղդել, նա պետք է պայթեցվի և վոչնչացվի միջազգային պրոլետարական հեղափոխությամբ, վորն անխուսափելիորեն հասունանում է շնորհիվ այն պայմանների, վոր ստեղծվել են կապիտալիզմի զարգացմամբ ընդհանրապես և նրա իմպերիալիստական շրջանի պայմաններում մասնավորապես:

Իմպերիալիզմը համաշխարհային սոցիալիստական հեղափոխության նախօրյակն է: Նա ամբողջ աշխարհը կապել է ֆինանսական կապիտալի շղթաներով՝ արյունով, յերկաթով ու քաղցով հարկադրում է բոլոր յերկրների պրոլետարներին և ժողովուրդներին տնքալ իր լծի տակ: Իմպերիալիզմը կենտրոնացնելով համաշխարհային արդյունաբերությունը, իր ազդեցության տակ առնելով հետամնաց յերկրներն ու գաղութները, ստեղծում է ել ավելի խոշոր կապ ու կախվածություն տարբեր յերկրների տնտեսությունների միջև, առաջ բերելով բանվորների միասնական ինտերնացիոնալ բանակի մեջ սերտորեն միանալու անհրաժեշտություն, անկախ պետական սահմաններից, ազգության, կուլտուրայի և լեզվի տարբերություններից:

Իմպերիալիզմն առաջ է բերում բոլոր յերկրների բանվորների միացում, ուժեղացնում է դժգոհությունն ու զայրույթը դեպի գոյություն ունեցող բուրժուական կարգերը, սրում է աշխատավորության պայքարը շահագործողների դեմ, մղում է նրանց դեպի գործադուլ, ցույց և ապստամբություն, զգաստացնում է նրանց կազմակերպվելու և կապիտալների իշխանության դեմ պայքարելու համար: Բոլոր յերկրներում կոմունիստական կուսակցությունները կազմակերպում և գլխավորում են պրոլետարիատի հեղափոխական պայքարը, քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաներին համախմբում են բանվոր դասակարգի շուրջը, պատրաստում են նրանց և մոբիլիզացիայի յենթարկում պրոլետարիատի ղեկավարության տակ, վորն համախմբված ու դիսցիպլինայի յե յենթարկված նույն այդ կապիտալիստական արտադրությամբ: Կոմունիստական կուսակցությունները կազմակերպում են մասսաներին՝ վերջնական գրոհ տալու բուրժուական հասարակությանը, խորտակելու կապիտալիստական տիրապետությունը, կործանելու նրա պետական մեքենան, հաստատելու իրենց դիկտատուրան, կառուցելու անդասակարգ սոցիալիստական հասարակություն:

Կապիտալիզմը կատարել է իր պատմական միսիան,—սոցիալիզմի համար հիմքեր—նյութական բազա ստեղծելու գործում: Նրա հետագա գոյությունը դառնում է մարդկության համար անհանդուրժելի: Նրա արտադրական հարաբերությունները և արտադրական ուժերը անհաշտելի հակասության մեջ են գտնվում: Այն ուժը, վորի պատմական խնդիրն է ամբողջ աշխարհում կործանել բուրժուազիայի տիրապետությունը—հանդիսանում է հեղափոխական պրոլետարիատը: Աշխարհի մեկ վեցե-

քորդ մասի վրա նա արդեն իշխանության գլուխն է կանգնած։ Համաշխարհային հեղափոխության այդ ամրոցին հենվելու դեպքում, կոմունիստական կուսակցությունների և նրանց կենտրոնի՝ Կոմունիստական Ինտերնացիոնալի ղեկավարությամբ, գյուղացիական լայն մասսաների և առանձնապես գաղութային ժողովուրդների օժանդակությամբ, հեղափոխական պրոլետարիատի համար ապահովված է վերջնական հաղթանակը բուրժուազիայի նկատմամբ։

«Սկսվեց համաշխարհային պրոլետարական կոմունիստական հեղափոխության դարաշրջանը»։

(Համ· Կ(բ)Կ ծրագիրը)

II

ԳԼՈՒԽ

# ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ—ՅԵՐԿՈՒ ՍԻՍՏԵՄ

## 1. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԻԶԻՍԸ

Իր և գաղութային բանվորներից ու գյուղացիներից գերշահի հսկայական գումարներ վերցնելով, շահագործումից կուտակելով հսկայական յեկամուտներ, աշխարհը սասանելով վոսկով ու սվինով, իմպերիալիզմը սրում է կապիտալիստական յերկրների միջև հակասությունը, ծնում է պատերազմներ, վորոնք անկման են հասցնում համաշխարհային տնտեսությունը։ 1914—18 թ.թ. իմպերիալիստական պատերազմն այդպիսի պատերազմ եր։ Այդ պատերազմը բաց արեց կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի շրջանը։

«Արդի տնտեսական կրիզիսը,—ասում է ընկ. Ստալինը—ծավալվում է կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի բազայի վրա, վոր ծայր է առել կապիտալիստական պատերազմի շրջանում, վորը խարխլում է կապիտալիզմի արմատները և դյուրացնում տնտեսական կրիզիսի վերահասը։

Ի՞նչ է նշանակում այս։

Այս ամենից առաջ նշանակում է, վոր իմպերիալիստական պատերազմն ու նրա հետևանքները ուժեղացրին կապիտալիզմի նեխումը և խախտեցին նրա հավասարակշռությունը, վոր մենք այժմ ապրում ենք պատերազմների և հեղափոխությունների դարաշրջանը, վոր կապիտալիզմն արդեն չի հանդիսանում համաշխարհային տնտեսության միակ և համայնապարփակ սիստեմը, վոր կապիտալիստական տնտեսական սիստեմի կողքին գոյություն ունի սոցիալիստական սիստեմ, վորն աճում է, բարգավաճում, հակադրվում է կապիտալիստական սիստեմին և վորը հենց իր գոյության փաստով ցուցադրում է կապիտալիզմի նեխվածությունը, ցնցում է նրա հիմքերը։

Ապա, այս նշանակում է, վոր իմպերիալիստական պատերազմը և հեղափոխության հաղթանակը ԽՍՀՄ-ում ցնցեցին իմպերիալիզմի հիմքերը գաղութներում և կախյալ յերկրներում, վոր իմպերիալիզմի հեղինակությունն այդ յերկրներում արդեն խախտված է, վոր նա այլևս անզոր է հին յեղանակով տնորինել այդ յերկրներում։

*Ապա այս նշանակում է նաև, որ պատերազմի ժամանակ ու նրանից հետո գաղութային կախյալ յերկրներում առաջ յեկավ և աճեց սեփական կապիտալիզմը, վորն հաջողությամբ շուկաներում մրցում է հին կապիտալիստական յերկրների հետ, ուժեղացնելով և սրելով սպառման շուկաների համար մղվող պայքարը:*

*Այս ի վերջո նշանակում է, որ պատերազմը կապիտալիստական շատ յերկրների համար ծանր ժառանգություն թողեց ի դեմս ձեռնարկությունների խրոնիկական, թերի բեռնվածության ու գործազուրկների միլիոնավոր բանակի գոյության, վորը կապիտալիզմի համար շատ դժվարություններ ստեղծեց դեռ մինչև այժմյան տնտեսական կրիզիսը և վոր գործն ավելի կբարդանա կրիզիսի ընթացքում»:*

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԻԶԻՍԸ

*Կապիտալիստական սիստեմի ընդհանուր կրիզիսի հիման վրա աճեց արդի տնտեսական կրիզիսը, վոր սկսվեց 1929 թվին կապիտալիզմի ամենահզոր յերկրում, Միացյալ Նահանգներում և աստիճանաբար ընդգրկեց բոլոր կապիտալիստական պետությունների առանց բացառության: Ինչքան էլ վոր դաժան էին անցյալի կրիզիսները, ինչքան էլ նրանք կզր-*

ՆՐԱՆՑ ՄՈՏ՝ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄ




*Արդյունաբերական արտադրանքի անկումը կրիզիսի տարիներում (1929—1932).*



*ծանիչ էին մինչև վերջին իմպերիալիստական պատերազմը, արդի կրիզիսը, վոր ընդգրկում է վողջ կապիտալիստական աշխարհը, տնտեսության բոլոր բնագավառները՝ թե արդյունաբերությունը, թե գյուղատնտեսությունը, թե առևտուրը և թե ֆինանսները*—արդի կրիզիսը գերազանցեց նախորդ բոլոր կրիզիսները: *Կապիտալիզմի ընդհանուր կրիզիսն, իր անջնջելի կնիքն է դնում արդի տնտեսական կրիզիսի ընթացքի վրա, խորացնում, յերկարատև է դարձնում նրան, խստագույն սրման է հասցնում կապիտալիզմի բոլոր հակասությունները: Արդի տնտեսական կրիզիսն իր հերթին խորացնում է կապիտալիզմի ընդհանուր կրիզիսը և մոտեցնում է վողջ կապիտալիստական սիստեմի կործանումը: Չի յերևում կրիզիսի վերջը: Նույնիսկ բուրժուական աշխարհի յերևելի դիտնականները, խոշորագույն տնտեսական միավորումների ղեկավարները, կապիտալիստական ամենակատաղի ջութակները դրությունը գնահատում են չափազանց անմխիթար: Ելեկտրականության ընդհանուր ընկերության ակցիոներների ժողովում, վորը կապիտալիստական խոշոր միավորումներից մեկն է աշխարհում, ընկերության դիրեկտոր Բյուխերը հայտարարեց՝*

*«Մինչև վոր ներկա պայմանների մեջ սկզբունքային փոփոխություն չառաջանա և մինչև վոր նորից նախադրյալներ չստեղծվեն ձեռնարկչության ռենտաբելության (շահեկանության), մինչ այն ժամանակ առանձին ձեռնարկատիրոջ պատվաստիրությունը կլինի միայն այն, վոր վերջինների մեկը կլինի այն գերեզմանն ուղարկվողներից, ուր թաղվելու յէ մասնավոր կապիտալիստական տնտեսությունը:*

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՀԵՏ Է ՇՊՐՏՎԱԾ ԴԵՊԻ XIX ԴԱՐԸ

*Վորո՞նք են տնտեսական կրիզիսի կոնկրետ ցուցանիշները: Արդի տնտեսական կրիզիսը* գերարտադրության կրիզիս է: 1929 *թվի համեմատությամբ, յերբ կրիզիսը միայն նոր սկսվում էր, կապիտալիստական յերկրների արդյունաբերական արտադրանքն ընկել է* 35—40 *տոկոսով: Արտադրության չափերի տեսակետից կապիտալիստական աշխարհը հետ է շպրտված մինչպատերազմյան մակարդակից շատ հեռու: Կապիտալիստական արդյունաբերության հիմնական ճյուղերը ավելի քան* 25—40 *տարի հետ են շպրտված: Ածխի արտադրությունը Միացյալ Նահանգներում կրճատվել և հասել է* 1905 *թ. մակարդակին, Անգլիայում*—1900 *թվի մակարդակին: Գերմանիայում նույն այդ չափով իջել է* 1892 *թ. արտադրության մակարդակին, պողպատինը*—1898 *թվի մակարդակին: Անգլիան չուգունի ապարեզում գլորվել է հետ մինչև* 1866 *թ. մակարդակը, պողպատինը*—1897 *թվի մակարդակին: Նավաշինարարությունն Անգլիայում գտնվում է կատաստրոֆիկ վիճակում: Նա իջել է ամենա-*

ցածր՝—մինչև 1887 թ. մակարդակը: Բամբակի սպառումը Միացյալ Նահանգներում—կրճատվել ու հասել է 1906 թ. մակարդակին, իսկ Անգլիայում—նույնիսկ 1872 թվի մակարդակին:

Ահա այսպես կրիզիսը հարվածում է կապիտալիստական արդյունաբերության հիմնական ճյուղերին: 1932 թ. առաջին կիսամյակը բերեց գրության հետագա վատթարացում: Արդյունաբերական արտադրությունն ամսե-ամիս ընկնում է, պայթում են տրեստներն ու բանկերը, փակվում ձեռնարկությունները, հանգչում են դոմենյան վառարանները: Խստորեն կրճատվում է ծանր արդյունաբերության բոլոր տեսակի արտադրանքների պահանջը: Այդ կարելի յե ակնհայտնի ցույց տալ այս տարվա առաջին վեց ամսվա տվյալներով՝ չուգունի ձուլման ասպարեզում:

Կրիզիսի խորությունը յերևում է արտադրության խիստ ցածրացումից և ձեռնարկության խոշոր չափի թերաբեռնվածությունից: Այսպես, Գերմանիայի մեքենաշինական արդյունաբերության մեջ բեռնվածությունը կրճատվել է և հասել մինչև 26 տոկոսի: Այս նշանակում է, վոր մեքենաշինական ձեռնարկությունների սարքավորման միայն մեկ չորրորդ մասն է բեռնավորված, իսկ բոլոր մեքենաների, դազգյահների, ա-

ՆՐԱՆՑ ՄՈՏ ԴՈՄՆԱՆԵՐԸ ՀԱՆԳՉՈՒՄ ԵՆ, ՄԵ ՄՈՏ ՇԱՐՔԻ ՄԵՋ ԵՆ ՄՏՆՈՒՄ ՆՈՐ ԴՈՄՆԱՆԵ




Դոմենյան վառարանների քանակը կապիտալիստական յերկրներում և ԽՍՀՄ-ում (նկարում յուրաքանչյուր դոմնա պայմանական կերպով հավասար է 50 դոմենյան վառարանի), մայիս 1932 թ.



րեղատների յերեք քառորդը կանգնած են անշարժ և սպասում են «կրիզիսի վերջին»: Գերմանիայի 155 դոմենյան վառարաններից այս տարվա հուլիս ամսում աշխատում եր միայն 36-ը: Միացյալ Նահանգների պողպատաձուլական արդյունաբերության բեռնվածությունը հունիս ամսին 20 տոկոսից չեր անցնում: Համաշխարհային նավաշինական արդյունա-







Այս դիագրամով ցույց է տրված, թե ինչպես տարեց-տարի ընկնում է մետաղի պատրաստումը (միլիոն տոններով):

Այս դիագրամով ցույց է տրված չուգունի ձուլման տոկոսը՝ 1929 թ. համեմատությամբ:

բերության բեռնվածությունը հազիվ 18 տոկոսի յե հասնում: Խստորեն կրճատվել է ավտոմոբիլների համաշխարհային արտադրությունը. 1929 թվի համեմատությամբ ավտոմոբիլի արտադրությունը Միացյալ Նահանգներում կրճատվել է 80 տոկոսով:

Այսպիսին է կրիզիսի կործանիչ ուժը, այսպիսին է նրա ազդեցությունը համաշխարհային արտադրության վրա:

## ՀԻՍՈՒՆ ՄԻԼԻՈՆ ԳՈՐԾԱԶՈՒՐԿ

Արտադրության խիստ կրճատումը չեր կարող չբերել նաև գործազրկության թվի խիստ մեծացում: Կապիտալի յերկրներում, գործազուրկների թիվը հասել է 50 միլիոն մարդու. յեթե հաշվենք նաև գործազուրկների ընտանիքի անդամներին, դուրս կգա, վոր կապիտալիզմի կողմից 200 միլիոն մարդ մատնված է քաղցի, աղքատության և մահացության: Գործազրկությունը ընդգրկել է վոչ միայն արդյունաբերական բանվորներին. նա հսկայական չափերի յե հասել նաև ծառայողների և տեխնիկական ինտելիգենցիայի շրջանում և գյուղատնտեսական բանվորների մեջ:

Աղքատություն՝ գործազուրկների շրջանում, կարիք՝ բոլոր բանվորական ընտանիքներում—զուգորդված շահագործական և կողոպուտի ուժեղացմամբ՝ առանձնապես բանվորուհիների ու յերիտասարդության նկատմամբ—ահա բուրժուազիայի կողմից բանվոր դասակարգի կենսական մակարդակի վրա հարձակվելու պտուղները, ահա այն միջոցները, վորոնցով կապիտալիզմը, սոցիալ-ֆաշիստների լիակատար օժանդակությամբ, ձգտում է դուրս պրծնել կրիզիսի ճեղքվածքներից:

1930 թ. վերջին գործազրկությունից պարտադիր ապահովագրություն 77 յերկրից ունեյին միայն 9-ը (Անգլիա, Իռլանդիա, Գերմանիա, Իտալիա, Լեհաստան, Ավստրիա, Ավստրալիա, Բուլղարիա և Շվեյցարիա): Այս նշանակում է, վոր ապահովագրությունն ընդգրկում է գործազրկության մի չնչին մասը միայն: Այնպիսի յերկրներ, ինչպիսին ՀԱՄՆ-ը, Լատինական Ամերիկան (Հարավային Ամերիկա), Հունգարիան, Հարավ Սլավիան, Հունաստանը, չունեն բանվորների վորևէ ապահովագրություն: Բուրժուական բարեգործական կազմակերպությունների մուրացկանային վողորմություն, ձրի խոհանոցների լափ— ահա թե ինչ է տալիս գործազրկությանն օգնելու անվան տակ կապիտալիզմի ամենահզոր յերկիրը՝ ՀԱՄ Նահանգները:




Կապիտալի յերկրներում 50 միլիոն գործազուրկ կա: Փակվում են ֆաբրիկաները հանգչում են դոմնաները, պրոլետարները հազարներով ու միլիոններով մատնվում են գործազրկության արհավիրքներին:

Գործազուրկներին կենսաթոշակ տրվում է վոչ գործազրկության ամբողջ ընթացքում, այլ 12 շաբաթից (Բուլղարիա) մինչև 30 շաբաթ (Ավստրալիա) միայն: Անգլիայում կենսաթոշակ տրվում է տարեկան 26-ից մինչև 46 շաբաթ: Կենսաթոշակի չափը շատ չնչին է: Մեկ շաբաթվա համար —Գերմանիայում շաբաթական 4 մարկից (մոտավորապես 1 ռ. 85 կոպ.) մինչև 12 մարկ (մոտավորապես 5 ռ. 40 կոպ.), Անգլիայում 17 շիլինգ (մոտավորապես 7 ռ. 50 կոպ.), իսկ կանանց տրվում է 15 շիլինգ (մոտավորապես 6 ռ. 50 կոպ.), Բուլղարիայում 10 լեվ—ամուրիներին (14 կոպ.) և 16 լեվ ընտանիքավորներին (մոտ 23 կոպ.), Լեհաստանում 10 զլոտ (2 ռ. 50 կ.) միայնակներին, իսկ ընտանիքավորներին (1—2 յերեխա)—12 տոկոս, 5 յերեխայից ավելի ունեցողներին 18 տոկոս ավել:



Սակայն այնտեղ էլ, ուր գոյություն ունի գործազրկությունից ապահովագրություն, չի ընդգրկում բոլոր բանվորներին: Գերմանիայում կենսաթոշակ է ստանում գործազրկության մոտավորապես 30 տոկոսը: Յեթե կենսաթոշակի չափն համեմատենք կենսական մինիմումի հետ, կտեսնենք, վոր ամենաբարձր դրույթի ժամանակ անգամ այդ շատ հեռու յե կենսական մինիմումն ապահովելուց: Յեթե ընդունենք, վոր մի մարդու կերակրվելը կպահանջի որական 1 մարկ, իսկ բնակվարձն առանց տաքության՝ տարեկան 124 մարկ, ուրեմն ամբողջ կենսաթոշակը չի բավարարի նույնիսկ մի մարդու այդ կարիքները:

Գործազուրկներին անխնա դուրս են շպրտում փողոց բնակվարձը չվճարելու պատճառով: Բնակարանից դուրս վռնդված գործազուրկը ընկնում է հեղձուկ և խոնավ վորջի մեջ: Հաճախակի յեն դառնում այն դեպքերը, յերբ տրորված, սովալլուկ գործազուրկը սեղծված դրությունից յելք է գտնում ինքնասպանության մեջ:

Յեթե գործազուրկների դրությունն այսպես է այնտեղ, ուր գոյություն ունի կենսաթոշակ, ապա ավելի վատթար է այնտեղ, ուր չկա գործազրկությունից վորևէ ապահովագրություն: Միայն Նյու-Յորկում 1931 թվին—5 ամսվա ընթացքում, բնակվարձ չմուծելու համար դատական կարգով դուրս են վտարված իրենց տներից 72,728 գործազուրկներ: ՀԱՄՆ-ում այդ կատարվում է գործազուրկին իր խղճուկ իրերով ամենադաժան կերպով փողոց շպրտելու ձևով: Դրա հետևանքով գործազուրկները ստիպված են ապրել քաղաքից դուրս՝ արկղներից պատրաստված բնակարաններում, և հաճախ շան վորջն այդ բնակարանային պայմանների համեմատությամբ իդեալ է թվում: Այն մասին, թե ինչպես են ապրում գործազուրկները մեր հարևան Լեհաստանում, վկայում են մի ուսումնասիրության հետևյալ տեղեկությունները, վոր մոտ ժամանակներս կատարվել է Վարշավայում:

## ԱՌԱՆՑ ԿԵՐԱԿՐԻ, ԱՌԱՆՑ ԱՊԱՍՏԱՆԻ, ԱՌԱՆՑ ՀԱԳՈՒՍՏԻ

Սոցիալական քաղաքականության լեհական ընկերությունը, վորի կազմի մեջ են մտնում բուրժուական պրոֆեսորներ ու քաղաքական գործիչներ, Վարշավայում անցկացրեց 204 գործազուրկի ընտանիքի ուսումնասիրություն: Այդ ընկերության ներկայացուցիչներն ուսումնասիրեցին միայն այն գործազուրկների դրությունը, վորոնք վորակյալ բանվորներ են և պրոֆմիության անդամներ: Ուսումնասիրության արդյունքները ցնցող են: Պարզվում է, վոր ֆաշիստական պետության մայրաքաղաքում, ըստ պաշտոնական տվյալներով հաշվում են 20.000-ից ավելի գործազուրկներ՝ քաղցից մեռնում են բանվորական հազարավոր ընտանիքներ:

Ահա թե ինչ է ասվում «Սոցիալական քաղաքականության ընկերության» հաշվետվության մեջ:

«Պետք է արձանագրել, վոր սնունդը ճնշող մեծամասնության մեջ նվազագույն մինիմումից ցածր է: Ահա օրինակներ.

Կաղապարող մետաղագործի ընտանիքը, վոր բաղկացած է 4 անձից, սննդի համար շաբաթական ծախսում է 12 զլոտ (մոտ 3 ռուբլի): Օրական յերկու անգամ ուտում են կարտոֆիլ, կաղամբ և հաց: Միս և կաթ բոլորովին չեն գնում:

Դերձակի 6 անձից բաղկացած ընտանիքը, ընկերության ներկայացուցչի այցելության միջոցին—յերեք որ շարունակ չի ունեցել և վոչ մի կերակուր՝ չի յեղել վոչ վառելանյութ, վոչ նավթ:

Մի ուրիշ դեպք—մի ընտանիք՝ բաղկացած 4 անձից—յերեք շաբաթ շարունակ տաք կերակուր չի կերել: Միակ կերակուրը թեյն ու հացն եր:

Գործազուրկի ընտանիքն ապրում է կնոջ վաստակով, վորը փողոցում եժանագին թխվածք (բուբլիկ) է վաճառում: Վաստակը կազմում է 1—1½ զլոտ (մոտ 30 կոպ.) և այդ 10 անձից բաղկացած ընտանիքի յեկամտի միակ աղբյուրն է»:

Հաշվետվության հեղինակը հավաստիացնում է, վոր «վերոհիշյալ դեպքերը բացառություններ չեն, այլ տիպական փաստեր, վորին ամենուրեք հանդիպում եյին հետազոտության մասնակիցները»:

Հանրագումարի բերելով՝ հաշվետվության հեղինակը արձանագրում է. «Գործազուրկների և նրանց ընտանիքի հիմնական սնունդը կազմում է կարտոֆիլն ու կաղամբը, հազվադեպ է հացն ու թեյը, յերբեմն ել չիլան, միանգամայն հազվադեպ են խմորեղենն ու կանաչեղենը: Միս ուտում են շաբաթական մեկ անգամ 204 ընտանիքներից 20-ը միայն»:

Վարշավայում խանութների դարակները կոտրվում են եժանագին գներով հագուստի, վոտնամանի, սպիտակեղենի և այլնի շատությունից: Կարո՞ղ են գործազուրկները հագնել:

Այս հարցը հետաքրքրել է նաև «Սոցիալական քաղաքականության ընկերությանը»: Ահա հետազոտության հետևանքները:

«Ամենից խիստ զգացվում է վոտնամանի և վերնաշորի կարիքը: Օրինակ, գործազուրկ հացթուխի 6 անձից բաղկացած ընտանիքը վորևէ վոտնաման չունի: Հայրը տանից դուրս գալիս վոտի տակ թելեր է կապում, յերեխաներն առհասարակ փողոց դուրս չեն գալիս: Մի ուրիշ դեպք. յերկու յերեխան ունեն միայն մեկ վերարկու: Մայրը դպրոց է տանում կրտսեր յերեխային, հանում է նրա վերարկուն, վազում է տուն և հագցնում այն մեծ յերեխային: Նույնը կրկնվում է նաև դպրոցից վերադառնալու միջոցին»:

Գործազուրկների բնակարանային սարսափելի պայմանների մասին շատ է գրվում: Քաղվածքներով այստեղ բերված հաշվետվության



տվյալներն ավելորդ անգամ հաստատում են, վոր գործազուրկներն ապրում են վոչ մարդավայել պայմաններում:

«Հետազոտված բնակարաններից շատերը,—ասվում է հաշվետվության մեջ,—չեն համապատասխանում առողջապահության տարրական պահանջներին»:

Ահա բնորոշ օրինակներ. «Բնակարանը տեղավորված է նկուղում: Պատերից ջուր է հոսում: Բնակարանը տանող միջանցքի հատակը շարունակաբար ծածկված է 3 սանտիմետր ջրով: Սենյակում ապրում են յերեք հասակավոր մարդ և չորս յերեխա: Մի շարք դեպքերում մեկ սենյակում ապրում են 10-ից ավելի մարդ: 929 հարցաքննվածներից միայն 199-ը քնում են առանձին անկողիններում: Այստեղ պետք է հաշվել 11 մարդ, վոր քնում են հատակին, 14 յերեխա օրորոցներում, 3 յերեխա, վոր քնում են արկղների և նստարանների վրա: Բացարձակ մեծամասնությունը քնում են 2 և ավելի հոգով մեկ անկողնում. 9 դեպք է արձանագրված, վոր մեկ մահճակալի վրա քնում են 5 մարդ, իսկ 3 դեպք, յերբ նույնիսկ 6 մարդ:

Զարմանալի չե, վոր այսպիսի սարսափելի պայմաններում լայնորեն տարածվում են ամեն տեսակի հիվանդություններ: «Թոքախտի հետ մեկտեղ,—կարդում ենք հաշվետվության մեջ,—գործազուրկների շրջանում տարածված է յերիկամների հիվանդությունը, յերեխաների մեջ՝ արնապակասություն, վոսկրների ծռվածություն և այլն: Ծծկեր յերեխաները հազվադեպ են ընչում մաքուր ոդ: Հետազոտությունն հանդիպեց փաստերի, յերբ մեկ տարեկան և ավելի մեծ յերեխաները մաքուր ոդ ընչելու համար մի տարի և ավելի դուրս չեյին տարվում, նրանք անընդհատ մնում եյին չոդափոխված և կեղտոտ կացարաններում:

Ընտանիքի հայրերը սովորաբար դուրս են գնում տանից պարզապես նրա համար, վոր չտեսնեն իրենց քաղցած յերեխաներին: Աննպատակ թափառում են փողոցներում: Անկողնից վեր են կենում ուշ, վորովհետև, ինչպես իրանք են ասում, պառկած միջոցին քաղցն այնքան ել ուժեղ չի զգացվում: Բացի այդ, դրանով նրանք տնտեսում են նախաճաշը:

Այսպես են «ապրում» գործազուրկները Լեհաստանում:

Գործազրկության չտեսնված աճը, նրանց նյութական դրության վատթարացում, միլիոնների քաղց և այլասերում—ահա համաշխարհային տնտեսական աճող ճգնաժամի վառ պատկերը:

## ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՔԱՅՔԱՅՎԵԼԸ, ՔԱՂՑՆ ՈՒ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Արդի ճգնաժամի առանձնահատուկ կողմերից մեկն այն է, վոր արդյունաբերական ճգնաժամը տեղի յե ունենում գյուղատնտեսության խոր ճգնաժամի հետ միաժամանակ, վոր նա հյուսվել է գյուղատնտեսական,

ագրարային ճգնաժամին։ 1929—1932 թվերի ագրարային ճգնաժամը խիստ սրվելն առաջացրեց քաղաքներում պարենի սպառման կրճատում, վոր հետևանք եր հսկայական գործազրկության և քաղաքային բնակչության մեծագույն մասի գնողունակության անկման։ Մյուս պատճառն արդյունաբերական հումքի՝ բամբակի, կաուչուկի, ջութի և այլնի սպառման խիստ կրճատումն է, աշխարհի բոլոր յերկրամասերում արդյունաբերական արտադրության կրճատման հետևանքով։ Հումքի սպառման կրճատումը գլխավորապես հարվածում է գաղութային և կիսագաղութային յերկրներին։ Մի քանի թվեր ակներև ցույց են տալիս ագրարային ճգնաժամի խորությունն ու թափը։ Նյու-Յորկում 1924—26 թվերին հարյուր ֆունտ բամբակին վճարում եյին 23 դոլլար, իսկ 1931

ՆՐԱՆՑ ՄՈՏ




Համաշխարհային ցանքատարածության կրճատումը (միլիոն հեկտարներով)։

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ
ՆՐԱՆՑ ՄՈՏ




Ամերիկայում (ՀԱՄՆ) աշխատավարձի ֆոնդը տարեց-տարի ընկնում է (միլիոն դոլլարով)։

թվի վերջին՝ 7 դոլլար, այսինքն՝ 70 տոկոսով պակաս։ Հազար ֆունտ բամբակի բերք ստացող բամբակացանը 1926 թվին կստանար 232 դոլլար, իսկ այժմ ստանում է միայն 65 դոլլար։ Ցորենը Չիկագոյում (քաղաք Միացյալ Նահանգներում) 1924—1926 թվերին հարյուր բուշելն արժեր 153 դոլլար (բուշել—12 ցենտներ), իսկ 1931 թվի վերջին 48 դոլլար։ Հնդկաստանում ցորենի գինն այս տարվա սկզբին կազմում եր 1926 թվի գնի 20 տոկոսը։ Նույնքան խիստ ընկան նաև կաուչուկի, ջութի, սուրճի, շաքարի և այլնի գները։ Զգալի կերպով ընկան նաև անասունների գները։ Արդի գները քայքայիչ են գյուղացու համար. նրանք հսկայական վնասներ են կրում. այդ գները չեն հասնում ինքնարժեքի





նույնիսկ կեսին, յերբեմն էլ 1/8-ին: Իսկ նույն այդ միջոցին բարձրանում են հարկերը, կապալավարձը մնացել է անփոփոխ, մեծացել է գյուղացիական տնտեսության պարտքը:

Ճգնաժամը ամբողջ ուժով հարվածում է գյուղացիական տնտեսություններին, վորովհետև նրանք չեն կարող մրցել կուլակային և կալվածատիրական տնտեսությունների հետ: Մանր և միջակ գյուղացին ի վիճակի չէ ձեռք բերել ժամանակակից մեքենաներ: Մանր և միջակ տնտեսությունների արտադրության ինքնարժեքն ավելի բարձր է, քան այն տնտեսություններում, ուր գործադրվում են տրակտոր և բարդ մեքենաներ: Մերձ-Դունայան և լեհական գյուղացին, ամերիկյան մանր ֆերմերը, յեգիպտական ֆելլահը, հնդկական և չինական չքավորն ի վիճակի չեն մրցել Կանադայի, Ամերիկայի և Արգենտինայի խոշոր ֆերմերների հետ, վորոնք գործադրում են գյուղատնտեսական նորագույն մեքենաներ:

Լեհական բուրժուական գրող Սվենտոխովսկին վառ գույներով նկարագրում է լեհական գյուղացիների թշվառ վիճակը.

«Ով ուզում է տեսնել աղքատությունն իր մերկությամբ, նիհարությամբ, լի տանջանքներով և հուսահատությամբ, թող դիտի այն գյուղում: Այստեղ նա կտեսնի մութ, կեղտոտ, հոտած վորջերը, վորտեղ մարդիկ ապրում են անասունների հետ միասին, այստեղ հագներին ցնցոտիներ են, մոխրագունացած են քաղցից, այստեղ դեմքերը տխրությամբ են լի, վորոնցից հազվադեպ ժպիտը շուտ է անհետանում: Այստեղ մեռելային լռություն է, վորը յերբեմն ընդհատվում է զայրույթի ձայներով, բայց համարյա յերբեք չի լսվում ուրախության ձայներ: Արդեն յերկու տարի յե, վոր յես աշխատանքի մարդկանց շրջանում չեմ լսել յերգեր, վոր մի ժամանակ հնչում եյին դաշտերում ու խրճիթներում...Ինձ ծանոթ վայրից տասնյակ կիլոմետր շառավղի վրա չկա նույնիսկ 20 գյուղացի, վոր ունենան թեկուզ 50 զլոտ (11 ռուբլի) խնայողություն...Բնակչության մեծագույն մասը որեկան ուտում է մեկ կամ յերկու անգամ, գլխավորապես կարտոֆիլ...Գյուղն էլ ունի իր գործազուրկները, չհաշված և չցուցակագրված, սակայն բավական մեծ քանակությամբ»:

Այսպես է պատմում բուրժուական գրողը լեհական գյուղացու դրության մասին: Այսպես է գյուղացու դրությունը վոչ միայն Լեհաստանում, այլև Յեվրոպայի բոլոր ագրարային յերկրներում (Ֆինլանդիա, Լիտվա, Ռումինիա, Բուլղարիա, Վենգրիա, Հունաստան, Հարավսլավիա և այլն):

Սակայն Յեվրոպայի սահմաններից այն կողմն էլ միլիոնավոր գյու-

ղացիների կարիքը հասնում է հսկայական չափերի: Համաձայն ամերիկական «Կարմիր խաչի» տվյալների Կենտուկկիի շրջանում 500 հազար մարդ կամ վողջ բնակչության 29 տոկոսը չուտափույթ ոգնության կարիք են զգում: Այսպես է դրությունը նաև Արկանզասում, Տեխասում, Ոկլախոմում, Միսիսիպում և այլ հարավային, կենտրոնական ու արևելյան շրջաններում: Նույն այդ «Կարմիր խաչի» տվյալներով Վիսկոնսի նահանգի սահմաններում «30 մղոն տարածության—շրջագայելու ընթացքում—վոչ մի տեղ չկար կերակուր պատրաստելու մթերք և չեր նախատեսվում, վոր այդպիսի մթերք կլինի»:

Ֆերմերների վրա ընկնող հարկերը, նախապատերազմյանի համեմատությամբ բարձրացել են յերկու և կես անգամից ավելի: Բանկերն ոգտվելով ֆերմերների անելանելի ծանր վիճակից, կողոպտում են նրանց վաշխառուական տոկոսներով, վոր յերբեմն հասնում է տարեկան 30 և ավելի տոկոսի: Հազարավոր ֆերմաներ ծախվում են: Ամերիկական ֆերմերների թշվառ դրությունը հասցրեց նրանց սովի ցույցերի (բունտերի): Հաճախակի դարձան ֆերմերների քաղցած ամբոխների արշավները, վոր զինված են յեղաններով և մահակներով, քաղցած ֆերմերները գնում են կանանց և յերեխաների ուղեկցությամբ: Նրանք ջարդուփշուր են անում կենսամթերքի խանութները: Նույնիսկ պաշտոնական հաշվումներով ՀԱՄՆ-ում հողը թողնող և քաղաք ուղևորվող ֆերմերների թիվը կազմում է 4 միլիոնից ավելի: Յեթե յերեք-չորս տարի առաջ հողը թողնող ֆերմերը հույս ուներ քաղաքում աշխատանք ստանալ, ապա նրա դրությունն այժմ անտանելի յե, վորովհետև քաղաքներում մասսայական գործազրկություն է: Ֆերմերն ընկնելով քաղաք, միայն ավելացնում է քաղցածների բանակը:

Գաղութներում և կիսագաղութներում դրությունն ավելի ծանր է: Քայքայված է Ցեյլոնի, Հարավ-Ամերիկյան յերկրների (Բրազիլիայի, Արգենտինայի), Կանադայի և Ավստրալիայի գյուղացիությունը: Տնտեսական ճգնաժամն աշխատավոր գյուղացիության հսկայական զանգվածները մատնում է ֆիզիկական վոչնչացման, քաղցի և մահացության:

Աշխատավոր գյուղացիության միլիոնավոր մասսաների աղքատացում, քաղց, մահացություն, կապիտալիստական յերկրներում աշխատավորական գյուղի քայքայում, ահա ժամանակակից տնտեսական ճգնաժամի խորության յերրորդ ցուցանիշը:

## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՎՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Արդյունաբերական ճգնաժամի հյուսումը գյուղատնտեսականին, քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաների աղքատացումը հասցնում է առանձին յերկրների միջև գոյություն ունեցող առևտրի կրճատման:



Ճգնաժամի տարիներին խոշորագույն կապիտալիստական յերկրների առևտուրը կիսով չափ ընկել է: Ճգնաժամն առանձնապես հարվածեց Միացյալ Նահանգների, Անգլիայի և Ցապոնիայի առևտրին: Հսկայական քանակությամբ ապրանքներ սպառում չեն գտնում և ընկած են պահեստներում և խանութներում: 1932 թվի սկզբին չծախված ապրանքների պաշարը հասնում եր հետևյալ չափերին—ամերիկական բամբակ 9 միլ. տոնն, պղինձ—500 հազար տոնն, արճիճ—150 հազ. տոնն, կաուչուկ—650 հազ. տոնն—շաքար—10 միլիոն տոնն, կոֆե —3 միլիոն տոնն, ցորեն—10 միլիոն տոնն:

Այն ժամանակ, յերբ ժողովրդական միլիոնավոր մասսաներ սննդազուրկ են ու քաղցած (իսկ Հնդկաստանում և Չինաստանում սովամահ են լինում հարյուր հազարավորներ), այն ժամանակ, յերբ հարյուր հազա-




[illegible] անկումը 1932 թ. առաջին կիսամյակում (տոկոսներով 1929 թ. համեմատությամբ):




Տարեց-տարի աճում են հացահատիկի չվաճառված պաշարները (հազար տոններով), մինչդեռ աշխատավորները քաղցից մեռնում են:

րավոր գործազուրկներ տկլոր են և մերկ, այն ժամանակ, յերբ ճգնաժամի հարվածների տակ կապիտալիստական յերկրների բնակչության ճնշող մեծամասնությունը լայն սպառման առարկաների սուր կարիք է զգում—մոնոպոլիստական միավորությունների շտեմարաններն ու ելևատորները լցված են բերնե-բերան, կապիտալիստների պահեստներն ու խանութները հեղեղված են ապրանքով, չեն գտնում վաճառա-սպառում: Սրա հետ միաժամանակ մեծածախ վաճառքի գներն ուժգնորեն ընկնում են: Մի տրեստի կողմից մյուսի նկատմամբ չկա ապրանքի պահանջ, մի խոշոր ձեռնարկություն չունի ապրանքի պահանջ մյուսից: Սակայն ապրանքի մանրածախի գները չեն իջնում: Կապիտալը հարվածում է իր սպառողներին վոչ միայն ճգնաժամով, այլ և մանրածախ ապրանքի գներով:

Կապիտալիստները փորձում են բարձրացնել մեծածախի գները մեծ

գանգվածներով ապրանքներ վոչնչացնելու միջոցով։ Գերմանական «Բանվորական իլլյուստրատիվ լրագիրը» մոտ ժամանակներս տվել եր լուսանկարներ՝ Բրազիլիայի շրջաններից մեկը, վորտեղ յերկաթուղագծի յերկու կողմերում, Ալեմոն և Սանտոս կայարանների միջև յուրաքանչյուր որ այրում են 10 հազար պարկ կոֆե (յուրաքանչյուրը 60-ական կիլոգրամ), Հոլլանդիայում, վորտեղ ծովն են նետում հազարավոր փութ գունավոր կաղամբ, Կալիֆորնիայում (ՀԱՄՆ), ուր մոտ ժամանակներս այրել են 30 հազար ճուտ—թռչունի գները բարձրացնելու նպատակով.—այս նկարներն արտադրության կապիտալիստական յեղանակի քայքայումը պարզելու համար լավագույն փաստաթղթերն են հանդիսանում։ Ահա ցանկը վոչնչացումների այն դեպքերի, վոր կատարում են կապիտալիստական միավորությունները պահանջ չգտնող ապրանքների նկատմամբ։ Բալտիմորում (ՀԱՄՆ) ջուրն է նետվում 3 հազար բուշել բանան «չափազանց ցածր գների պատճառով»։ Ֆերմերային բյուրոն—ՀԱՄՆ-ում պետական պաշտոնական հիմնարկությունը—1931 թվին առաջարկեց բոլոր բամբակ արտադրողներին վոչնչացնել բերքի մեկ յերրորդ մասը։ Նյու-Յորկում գները բարձր մակարդակի վրա պահելու նպատակով յուրաքանչյուր որ թափվում է հարյուր հազարավոր բալոն կաթ։ Բրազիլիայում վոչնչացված է ամենաքիչը 5 միլլիոն պարկ կոֆե։ Մի շարք յերկրներում միլլիոնավոր տոնն ցորեն գործադրվում է վորպես վառելիք։ Հարյուր հազարավոր տոնն բանջարեղեն գործադրվում է վորպես անասունի կեր։ Վերջին ամիսներին ապրանքի գները բարձր մակարդակի վրա պահելու նպատակով նկատվում է նաև արդյունաբերական ապրանքների նույնպիսի վոչնչացում։ Այսպես, մոտ ժամանակներս անգլիական գավառական մի ֆիրմա, վոր արտադրում է դաշնամուր, յերաժշտական այլ գործիքներ, որը ցերեկով կազմակերպեց ավելորդ դաշնամուրների հրապարակային այրումը։

Այսպես են ժամանակակից տնտեսական ճգնաժամի հիմնական գծերը։ Շնորհիվ ճգնաժամի, առանց ապագայի հեռանկարների քաղցի տանջանքներում կործանվում են 50 միլլիոն գործազուրկ, նրանց կանայք ու յերեխաները։ Ճգնաժամը տասնյակ տարիներով հետ է տանում նույնիսկ ամենազարգացած կապիտալիստական յերկրները։ Այս ճգնաժամը հանդիսանում է մինչև այժմս առաջացած տնտեսական ճգնաժամերից ամենալուրջն ու ամենատևականը։ Այդ ճգնաժամը զարգանում է կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի հողի վրա, խորացնում է ընդհանուր ճգնաժամը, սրում է ներքին և արտաքին բոլոր հակասությունները, մոտեցնում է կապիտալիստական սիստեմի անխուսափելի կործանման ժամը։ Այդպիսով յեկավ վախճանը 1918—1923 թ.թ. սուր ճգնաժամից հետո առաջացած կապիտալիզմի մասնակի կայունացման։



## 2. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՇԽԱՐՀԸ

### ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կապիտալիստական սիստեմի գոյության կողքին, սկսած Հոկտեմբերյան հեղափոխությունից, աճում և զարգանում է ժողովրդական տնտեսության սոցիալիստական սիստեմը։ Արդեն միայն այն, վոր նա՝ սոցիալիստական սիստեմը գոյություն ունի արդեն տասնհինգ տարի և իր զարգացման ճանապարհին տանում է նորանոր հաղթանակներ, վկայում է կապիտալիստական սիստեմի անկարության մասին, կապիտալիզմի նեխվածության մասին, այն մասին, վոր նրա բախտը վորոշված է։

Ի՞նչն է խորհրդային տնտեսական սիստեմի առավելությունը՝ կապիտալիստականի նկատմամբ։ Աշխարհի մեկ վեցերորդ մասում, վորը կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, չկա կապիտալիստների իշխանություն, չկա շահագործողների տիրապետություն։ Կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը տապալված է և փոխարինված է խորհրդային իշխանությամբ, բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության իշխանությամբ։

Խորհրդային Միության պրոլետարիատն իրագործում է իր դիկտատուրան, ճնշելով նախկին տիրող դասակարգերի դիմադրությունը, կապիտալիստական տարրերի մնացորդների փշրանքներին և բեկորներին, վորոնք ձգտում են վիժեցնել սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում։ Միայն մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ է, վոր իշխանությունը պատկանում է բանվոր դասակարգին։

Կապիտալիստներն ու կալվածատերերն ոգտագործում են պետական ապարատի բոլոր հարկադրման և ճնշման միջոցները, վորպեսզի պահպանեն գործիքների և արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը։ Տնտեսության խորհրդային սիստեմի ժամանակ գործիքներն ու արտադրության միջոցները. հողը, ֆաբրիկաներն ու գործարանները, հանքերը, նավթահորերը, տպարանները, յերկաթուղիները և այլն—խլված են կապիտալիստներից և հանձնված բանվոր դասակարգին ու աշխատավոր գյուղացիությանը, պրոլետարական պետության սեփականությունը։ Մեր ֆաբրիկաներում այլևս կապիտալիստները տեր ու տնօրեն չեն, մեր հողի վրա այլևս չի իշխում կալվածատերը։ Նրանք բոլորը, այդ կապիտալիստներն ու կալվածատերերը քաղաքացիական անխնա պատերազմի, դասակարգային անհաշտ պայքարի ընթացքում մաքրվեցին հեղափոխության յերկաթե ցախավելով։ Մեր ֆաբրիկաները գործարաններն ու մեր հողը բանվորական պետության ձեռքումն են։

Լենինյան կուսակցության ղեկավարությամբ մենք վերականգնեցինք իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմների ընթացքում




Սոցիալիզմի աշխարհը անշեղորեն գնում է վեր, կապիտալիզմի աշխարհն անխուսափելիորեն հատակն է իջնում:

*Խորհրդային Միության արդյունաբերությունը 1926 թ. մինչև 1931 թ. ժամանակաշրջանում իր արտադրանքը մեծացրեց 119%-ով, իսկ կապիտալիստական աշխարհի արդյունաբերությունը նույն հնգամյակի ընթացքում նվազեց 20%-ով:*



ավերված տնտեսությունը, վերասարքավորեցինք մեր ֆաբրիկաներն ու գործարանները, մեր հանքահորերը, նավթահորերն ու գործարանները, մենք կառուցեցինք նոր ֆաբրիկաներ ու գործարաններ, մենք ընդարձակեցինք մեր ցանքսի տարածությունը, բարձրացնում ենք մեր երկրի վարկը: Մագնիտոգորսկը, Կուզնեցկոստրոյը, Դնեպրոստրոյը, Լենինգրադի, Խարկովի և Ստալինգրադի տրակտորի գործարանները, Մոսկվայի և Նիժնի-Նովգորոդի ավտոգործարանները, Ռոստովի և Սարատովի գյուղատնտեսական մեքենաների գործարանները, հազարավոր կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները—մեր վողջ հսկայական սոցիալիստական շինարարությունը վկայում է այն բանը, թե ինչ կարող են անել աշխատավոր մասսաները կապիտալիստներին տապալելուց հետո:

Խորհրդային պետության մեջ, այդ շինարարության վրա բանվորներն ու գյուղացիներն աշխատում են վոչ թե պորտաբույծներին հարստացնելու համար, այլ իրենց իշխանությունն ամրապնդելու համար, իրենց նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացման համար, անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար:

Խորհրդային սիստեմի ժամանակ տեղ չունեն արտադրության անարխիան, անպլանայնությունը, մրցությունը, գերարտադրության ճգնաժամերը: Խորհրդային սիստեմի ժամանակ արտադրությունը կատարվում է պլանով, վորը լավանում է կվարտալ առ կվարտալ, տարի առ տարի: Միաժամանակ բարձրանում է Խորհրդային Միության աշխատավոր միլիոնավոր մասսաների նյութական և կուլտուրական մակարդակը:

Շահագործող, ավազակային, կողոպտող դասակարգերը կապիտալիստական յերկրներում, շնորհիվ գործիքների և արտադրության միջոցների մասնավոր սեփականության, իրենց պառլամենտների, զինվորական ուժի, վոստիկանության, ժանդարմերիայի, կրոնի, դատարանի և որենքների ոգնությամբ, իրենց և իրենց սպասարկուների գրպանն են լըցնում այն հարստությունները, վոր ստեղծվել են աշխատավորության ջանքերով: Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջ տվեց այդ կողոպուտին: Խորհրդային յերկրում ժողովրդական յեկամուտն ոգտագործվում է սոցիալիստական ինդուստրացման համար, գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման համար, բանվորների և գյուղացիների նյութական դրության բարձրացման ու բարելավման համար, դպրոցների, հիվանդանոցների, գրադարանների, մանկամսուրների ցանցի լայնացման համար, բնակարանային շինարարության, քաղաքների բարեկարգության համար:

Յերբ այդ կերպ է ոգտագործվում ժողովրդական հարստությունը, յերբ այդպես է բաշխվում ժողովրդական յեկամուտը՝ հանուն բոլոր աշ-

*խատավորների շահերի և վոչ թե շահագործողների և նրանց անգործ սպասարկուների փոքրաքանակ խմբակի համար, ապա հնարավորություն է ստեղծվում բավարարելու աշխատավոր մասսաների շարունակաբար աճող պահանջը և արտադրության հետագա ընդլայնումը՝ հանուն այդ իսկ մասսաների շահերի: Իսկ այդ զերծ է պահում բանվոր դասակարգին ճգնաժամերից, վորոնք չգիտե Խորհրդային Միությունը, գործազրկությունից, վորը Խորհրդային Միության մեջ լիովին լուծարքի յե յենթարկված:*

Այս ամենը մեր յերկրում կատարվում է այն պատճառով, վոր յերկրի տերը հանդիսանում է բանվորը, նա աշխատում է վոչ թե կապիտալիստի, այլ իր սեփական դասակարգի համար, ստեղծում է սոցիալիստական աշխատանքի նոր ձևեր, սոցիալիստական մրցություն, հարվածայնություն, առաջադրում է հանդիպական պլաններ, իր ստեղծագործական ենտուզիազմով աշխատանքը դարձնում է «փառքի, պատվի և հերոսության գործ»:

## ԿԱՊԻՏԱԼԻ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՒՄ

Կապիտալի յերկրներում *պրոլետարիատն իրավազուրկ է: Նրա հեղափոխական, կոմունիստական կուսակցությունն հալածվում է, նրա մամուլը բռնագրավման է յենթարկվում, նրա ժողովները ցրվում են, նրա ցույցերը գնդակոծվում են, նրա գործադուլները վիժեցվում են, նրա լավագույն ներկայացուցիչները փակվում են կապիտալիստական բանտերի քարե պատերի մեջ:*

Խորհրդային սիստեմն *ապահովում է բանվոր դասակարգի և գյուղի ու քաղաքի բոլոր աշխատավորության բոլոր ուժերի և ընդունակությունների զարգացումը: Բանվոր դասակարգի կուսակցությունը—կոմունիստական կուսակցությունը ղեկավարում է սոցիալիստական շինարարությունը: Պրոլետարիատի դիկտատուրան անխնա հաշիվ է տեսնում բոլոր թշնամիների հետ: Բոլոր լավագույն և հարմարագույն շենքերը գտնվում են բանվորական պետության տրամադրության տակ: Թղթի վողջ պաշարը, բոլոր տպարանները—գտնվում են նրա թերթերի խմբագրությունների տրամադրության տակ: Հեղափոխական տոների օրերին նա ազատորեն դուրս է գալիս կարմիր, մարտական դրոշների ներքո:*

Կապիտալի յերկրներում, *առանձնապես համաշխարհային տնտեսական ճգնաժամի սրվածության կապակցությամբ, լուծարքի յեն յենթարկվում բանվոր դասակարգի համարյա բոլոր քաղաքական ու տնտեսական նվաճումները—յերկարում է բանվորական օրը, պակասեցվում են սոցիալական ապահովագրության վճարումները, կրճատվում են ընտրա-*



*կան իրավունքները և այլն: Կապիտալիստական յերկրները հետզհետե դառնում են ֆաշիստական յերկրներ, վորոնք լի յեն բացարձակ բուրժուական դիկտատուրայի ամենաանամոթ վոտնձգություններով:*

Խորհրդային իշխանությունը, *սոցիալիստական պլանային տնտեսության խոշորագույն հաջողությունների հիման վրա, թե քաղաքում և թե գյուղում ապահովում է պրոլետարական դեմոկրատիայի ամենալայն ծավալումը և քաղաքական զարգացման չտեսնված վերելքը նույնիսկ բանվորության և գյուղացիության ամենահետամնաց շերտերի համար: Բուռն թափով աճում և զարգանում են բանվոր դասակարգի մասսայական քաղաքական կազմակերպությունները, կուսակցությունը, խորհուրդները, պրոֆմիությունները, կոմյերիտմիությունը: Տարրական և միջնակարգ դպրոցը, բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատությունները, համալսարաններն ու ինստիտուտները առավելություն են տալիս բանվորների և աշխատավոր գյուղացիների յերեխաներին: Տնտեսական ղեկավար կազմակերպություններն ու պետական հիմնարկությունները գլխավորվում և ղեկավարություն են ստանում բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչների կողմից:*

Կապիտալիստական պետությունն *իր քաղաքականությունը կառուցում է ազգությունների հալածանքի վրա, նրանց կուլտուրայի ճնշման վրա, նրանց ինքնուրույն գոյության սահմանափակման վրա: Հրով և սրով, իմպերիալիստական դաժանությամբ և պատերազմներով վոչնչացնում են գաղութային ժողովուրդներին (հնդկացիները անգլիական, ռիֆերը՝ ֆրանսական գաղութներում և այլն): Ազգային փոքրամասնությունները (ուկրայնացիները, բելոռուսները—Լեհաստանում, կորեացիները—Ճապոնիայում, մոլդավանները—Ռումինիայում և այլն) տնքում են իմպերիալիստական զինված բանակների և հափշտակիչների յերկաթե կրունկի տակ: Տիրապետող դասակարգերը ճարպակալվում են գաղութների կողոպուտով: Ազգությունները իրար դեմ լարելով, ավերումով ու կոտորածով նրանք ձգտում են ամրացնել իրենց բռնության արյունոտ ռեժիմը:*

*Բռնության և արյան այդ քաղաքականությունը իմպերիալիստների համար այլևս անպատիժ չի մնա: Հետզհետե ավելի ու ավելի յեն սրվում հակասությունները իմպերիալիստական պետությունների և գաղութային ժողովուրդների միջև, աճում է հեղափոխական շարժումը գաղութներում և կիսագաղութներում (Հնդկաստանում—անգլիական իմպերիալիզմի դեմ, Հնդկա-Չինում—ֆրանսական, Ֆիլիպյան կղզիներում—ամերիկական, Ինդոնեզիայում—հոլանդական, իսկ Կորեայում—ճապոնական իմպերիալիզմի դեմ և այլն):*

*Ազգային ազատագրական շարժումների այդ վերելքը հետզհետե փոխվում է ազգային-ազատագրական պատերազմի, իմպերիալիստական*

հափշտակիչներից ու կողոպտիչներից վերջին ազատագրվելու պատերազմի:

Միայն սոցիալիզմի լագերում, միայն պրոլետարիատի դիկտատուրան, իրագործելով լենինյան ազգային քաղաքականությունը, արմատապես վոչնչացնում է ազգային ճնշումը, հաստատում է վստահություն ու խաղաղություն, ազգությունների իսկական ազատություն և հավասարություն, ժողովուրդների խաղաղ կենակցություն և յեղբայրական աշխատակցություն: Խորհրդային սիստեմի գոյությունն ինքնին մղում է աշխատավոր մասսաներին դեպի համախմբում, դեպի սոցիալիստական միասնական ընտանիք: Խորհրդային Միությունը հանդիսանում է սոցիալիզմ կառուցող իրավահավասար ժողովուրդների կամավոր համախմբությունը: Խորհրդային Միությունը, սոցիալիստական շինարարության բոլոր ճակատամասերում ձեռք բերելով հսկայական նվաճումներ, դարձել է ամբողջ աշխարհի աշխատավորության հայրենիքը, միջազգային պրոլետարական հեղափոխության հարվածային բրիգադը:

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՆ Է

Կապիտալիստական յերկրներում շահագործող բուրժուազիայի տիրապետությունը պահպանվում է իմպերիալիստական բանակների ուժով: Այդ բանակներում—ցածր ողակներից մինչև գլխավոր շտաբները ղեկավարում են շահագործող դասակարգերի ներկայացուցիչները: Կուլակների և կալվածատերերի զավակներ, արդյունաբերական, ֆինանսական և առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներ, խոշոր բյուրոկրատիայի շրջանից դուրս յեկածներ, չինովնիկներ—այսպես է սպայական կադրերի ու բարձր գեներալիտետի կազմն արդի կապիտալիստական բանակներում: Այդ բանակները պատրաստվում են իմպերիալիստական նոր պատերազմների: Նրանք միևնույն ժամանակ մահ են բերում բուրժուական տիրապետության դեմ, քաղցի և գործազրկության դեմ ապստամբող պրոլետարներին և գաղութային ժողովուրդներին: Ժամանակակից բուրժուական պետությունները անընդհատ սպառազինվում են, նրանք հսկայական միջոցներ են ծախսում, վոր շահագործմամբ և հարկերով խլել են աշխատավոր մասսաներից: Նրանք իրենց բանակներն հզորացնում և պատերազմական մահաբեր գործիքներ են ստեղծում, վորոնք առաջին հերթին ուղղված են սոցիալիզմի յերկրի դեմ:

Ինչպես խորհրդային սիստեմը խստորեն տարբերվում է կապիտալիստական սիստեմից, այնպես ել բանվորա-գյուղացիական Կարմիր



բանակը տարբերվում է բոլոր կապիտալիստական յերկրների բանակներից: Կարմիր բանակը պրոլետարիատն ստեղծել է պաշտպանելու Խորհրդային Միությունը նրա բազմաթիվ թշնամիներից, հետ շպրտելու բուրժուական գիշատիչների՝ սոցիալիզմ կառուցող յերկրի վրա ուղղված հարձակումները: Կարմիր բանակն ստեղծված է սոցիալիստական շինարարության և այն բոլոր նվաճումների պաշտպանության համար, վոր ձեռք են բերել Խորհրդային Միության բազմաթիվ ժողովուրդների բանվորներն ու գյուղացիները: Մեր Կարմիր բանակը կազմված է քաղաքի և գյուղի աշխատավորությունից: Բանակը ղեկավարում են նույնպես աշխատավոր ժողովրդի զավակները, վորոնք գործնականում ապացուցում են իրենց նվիրվածությունը պրոլետարական հեղափոխության շահերին: Կարմիր բանակը Խորհրդային Միության թշնամիների անհաշտ հակառակորդն է: Կարմիր բանակը, վոր արթուն պահակ է կանգնած միջազգային պրոլետարիատի ամրոցի սահմաններում, միջազգային սոցիալիստական հեղափոխության բանակն է:

Խորհրդային Միության քաղաքականությունը խաղաղության քաղաքականություն է: «Այդ քաղաքականության հետևանքը,—հայտարարեց ընկ. Ստալինը XVI համագումարում,— հանդիսանում է այն փաստը, վոր մեզ հաջողվեց խաղաղություն պահպանել, հնարավորություն չտալով թշնամիներին մեզ կոնֆլիկտների մեջ քաշել, չնայած պատերազմ հրահրողների մի շարք պրովոկացիոն և ավանտյուրիստական ակտերին ու յելույթներին: Խաղաղության այդ քաղաքականությունը մեր բոլոր ուժերով ու միջոցներով վարելու յենք նաև առաջիկայում: Ուրիշի հողից վոչ մի թիզ չենք ուզում, բայց և մեր հողից վոչ մի վերշոկ չենք տա վոչ վոքի»:

# 3. «Ո՞Վ ՈՒՄ»

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐԿԱՆԱԼՆ ՈՒ ՍՐՎԵԼԸ

Կապիտալիստական աշխարհն ընկավ ճգնաժամի այնպիսի մի ջրապտույտի մեջ, վոր նրա անխուսափելի կործանումը հետզհետե մոտենում է ավելի ու ավելի: Կապիտալիստական աշխարհին փոխարինող գալիս է դասակարգային պայքարում, ապստամբություններում ու հեղափոխություններում ծնունդ առած պրոլետարիատի աշխարհը, միջազգային պրոլետարական հեղափոխության հարվածային բրիգադի՝ Խորհրդային Միության գլխավորությամբ:

Նրա հաղթանակները, Խորհրդային Միության հաղթանակները, պայմանավորված են տնտեսության խորհրդային սիստեմի՝ հանդեպ կապիտալիստական սիստեմն ունեցած առավելություններով, խորհրդային

իշխանության պրոլետարական բնույթով, վոր ղեկավարվում է բանվոր դասակարգի միակ հեղափոխական կուսակցության—բոլշևիկների կոմունիստական կուսակցության կողմից: Հատկապես այդ ապահովեց մեր հաղթանակը, չնայած վոր բուրժուական յերկրները հարուստ են մեզանից, չնայած վոր մեր տեխնիկական փորձված ուժերն անհամեմատ քիչ են և մեր կուլտուրական զարգացման մակարդակն էլ ցածր է: Իսկ կապիտալիստական առաջավոր յերկրները, չնայած կապիտալների, տեխնիկական կադրերի առատության և կուլտուրականության ավելի բարձր մակարդակին, գտնվում են տնտեսական անօղ ճգնաժամի և անկման պայմաններում:

Կապիտալիստական աշխարհը լցուն է անլուծելի հակասություններով: Այդ հակասություններն առանձնապես մերկացան և սրվեցին ներկա տնտեսական ճգնաժամի կապակցությամբ, վորն սկսվեց վողջ կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի հիման վրա:

Ներկայումս էլ ավելի յեն մերկացել ու սրվել հակասությունները իմպերիալիստական կարևոր յերկրների միջև: Պայքարն ապրանքների շուկաների համար, հումքի համար, կապիտալներն ուրիշ յերկրներ արտահանելու համար ուժեղանում է ամիս առ ամիս, որ ավուր: Այդ պայքարը, վոր սպառնում է առաջ բերելու նոր զինված ընդհարումներ, տեղի յե ունենում Անգլիայի ու Ամերիկայի միջև, և Ֆրանսիայի ու Անգլիայի, և Իտալիայի ու Ֆրանսիայի, և Ֆրանսիայի ու Գերմանիայի,

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՎՈՒՄ Է




Ռազմական գործարանների թվի շատանալը



և Գերմանիայի ու Լեհաստանի, և Ամերիկայի ու Ճապոնիայի միջև և այլն:

Բազմապիսի յեն պայքարի միջոցներն իմպերիալիստների միջև—նրանք իրարից ցանկապատվում են մաքսային տարիֆներով, նրանք այնպիսի մաքսեր են բարձում արտասահմանից ներմուծված ապրանքների վրա, վոր այդ ապրանքները չեն կարողանում մրցել տեղական ապրանքի հետ: Դեմպինգի (այսինքն ապրանքի վաճառահանումն արտասահմանյան շուկա չափազանց ցածր գներով) ճանապարհով նրանք աշխատում են իրենց հակառակորդներին դուրս քշել շուկայից: Պատրաստվելով գալիք պայքարին, իմպերիալիստները կազմում են զանազան ռազմական միություններ, սպառազինման համար չլսված գումարներ են ծախսում, բորբոքելով ամեն ճանապարհով ու միջոցներով նոր պատերազմ:

Առանձին կապիտալիստական յերկրների միջև հակասություններն էլ ավելի բարդացան շնորհիվ վերջին իմպերիալիստական պատերազմի

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԸ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ




Կապիտալիստական յերկրների բյուջեներում սպառազինման ծախքերի տոկոսը չափազանց մեծ տեղ է բռնում

հետևանքների: Հակասությունները խստորեն մերկացան ու սրվեցին հաղթանակ տարած յերկրների (Անգլիա, Ֆրանսիա և այլք) և պարտվածների (առանձնապես Գերմանիա) միջև: Ի լրումն այն հսկայական ավերումների, վոր պատերազմն իր հետ բերեց, համաձայն Վերսալի պայմանագրի՝ Գերմանիան հետպատերազմյան տարիներում արդեն վճարել է և նորից պարտավոր է վճարել հաղթող յերկրներին շատ միլիոններ թե փողով, թե մթերքով: Սակայն Գերմանիայի քաղաքի և գյուղի աշխատավոր ու պրոլետարական լայն մասսաների աղքատացումն ու ավերվածությունը հասել է վերջին ծայրահեղության: Գերմանական բուրժուազիան, հաղթողներին իր պարտքերը վճարելու համար, աշխատավորությանը կողոպտելու ինչպիսի միջոցների էլ վոր դիմի, միևնույն է—այդ նրան չի հաջողվի: Ֆաշիստական դիկտատուրայի հանդեպ, վորը ձգնում է պարտքերի ծանրությունը գցել աշխատավորության ուսերին,

պրոլետարական մասսաների դիմադրությունը հետզհետե աճում է։ Կոմունիստական կուսակցությունը, աշխատավորական մասսաների առաջնորդն ու կազմակերպիչը, վոր կռվում է հանուն խորհրդային Գերմանիայի, լայն մասսաների մեջ հետզհետե նորանոր ազդեցություն է նվաճում։ Այս մասին են խոսում գերմանական ռայխստագի նոյեմբերի 6-ի ընտրությունները, վոր կոմունիստներին տվին մոտ 6 միլիոն ձայն։

Մեծանում ու սրվում են նույնպես իմպերիալիստական պետությունների և գաղութային ու կախյալ յերկրների միջև հակասությունները։ Անող և չարունակաբար սրվող համաշխարհային տնտեսական ճգնաժամը չի կարող չուժեղացնել իմպերիալիստների ճնշումը գաղութների և կախյալ յերկրների նկատմամբ։ Յեվ ծայրահեղ աստիճանի հզորանում է ճնշումը։ Այդ ճնշումն արտահայտվում է գաղութային ժողովրդներին առանց վարագուրման ավազակաբար կողոպտելու մեջ, վոր այնտեղի բնակչությանը հասցնում է ծայրահեղ ավերածության ու աղքատության։ Սակայն այս առաջ է բերում գաղութների և կիսագաղութների աշխատավոր մասսաների ավելի ուժգին դիմադրությունը, վորոնք բարձրանում են պայքարելու և ազատագրվելու իմպերիալիստների և իրենց սեփական բուրժուազիայի ու կալվածատերերի լծից։ Գաղութների կեղեքվող մասսաների՝ իմպերիալիստների դեմ մղվող պայքարով լեցուն է կապիտալիզմի հետպատերազմյան վողջ պատմությունը։ Հեղափոխական շարժման աճը, պայքարը հանուն խորհուրդների Չինաստանում, բանվորների ու գյուղացիների հեղափոխական յելույթները Հնդկաստանում, Հնդկաչինում և այլն — իմպերիալիզմի և գաղութային ժողովրդների միջև յեղած հակասությունների սրվածության փայլուն ցուցանիշներն են։

## ՍՈՑԻԱԼ-ՖԱՇԻՍՏՆԵՐԸ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԵՆԱՐԱՆ

Համաշխարհային տնտեսական ճգնաժամն էլ ավելի ուժեղացրեց կապիտալիստների ճնշումը բանվորական մասսաների նկատմամբ։ Ամենուրեք մեծանում է բանվորական որը, կրճատվում է աշխատավարձը, աճում է գործազրկությունը, կազմակերպված հարձակում է կատարվում բանվոր դասակարգի ամենատարրական պահանջների վրա։ Այս ամենը հեղափոխականացնում է բանվորական մասսաներին, սրում է դասակարգային պայքարը և մղում է պրոլետարիատին դեպի նոր դասակարգային մարտեր։ Սոցիալ-ֆաշիզմը, իմպերիալիզմի կողմից կերակրված իմպերիալիստական բուրժուազիայի այդ գործակալը բանվոր դասակարգի շրջանում, պրոլետարիատին հեղափոխական պայքարից հեռու պահելու նպատակով դիմում է ամեն տեսակ միջոցների՝ «բժշկե-



լու» մեռնող կապիտալիզմը։ Սոցիալ-ֆաշիստները հավատացնում են հուսահատված աշխատավոր մասսաներին, վոր կարելի յե առանց ցնցումների և հեղափոխությունների, առանց դասակարգային մարտերի և քաղաքացիական պատերազմի վերաճել սոցիալիզմի մեջ։

Սոցիալ-ֆաշիստները բուրժուական դիկտատուրայի սոցիալական գլխավոր հենարանն են։ Սոցիալ-դեմոկրատիան միլիոնավոր պրոլետարների ուղարկում էր 1914—1918 թ. թ. իմպերիալիստական սպանդանոցը «հայրենիքի պաշտպանության» դրոշի տակ։ Սոցիալ-ֆաշիստները պաշտպանում էին կողոպտչի պայմանագրերը. գերմանական սոցիալ-դեմոկրատները պաշտպանում էին իրենց կայզերին և գեներալներին Խորհրդային Ռուսաստանի բանվորության և գյուղացիության դեմ՝ Բրեստի հաշտության պայմանագիրը կնքելիս. Ֆրանսիական, անգլիական, բելգիական և ամերիկական սոցիալ-դեմոկրատները պաշտպանում էին իրենց իմպերիալիստներին Գերմանիայի դեմ, յերբ կնքվում էր կողոպտիչ ու բռնի Վերսալի պայմանագիրը։

Սոցիալ-դեմոկրատիան օգնում էր Խորհրդային Միության դեմ ռազմական ինտերվենցիա կատարելուն, նա փրկեց կապիտալիստներին 1918—1923 թվերին՝ պրոլետարական հեղափոխությունից (Գերմանիայում, Ավստրիայում, Վենգրիայում, Իտալիայում, Ֆինլանդիայում և այլն)։ Նա ակտիվորեն պաշտպանում է բանվոր դասակարգի ամենառեակցիոն դահիճներին։ Նա իր վրա յե վերցնում իմպերիալիստական «ռազմական օրենքների» կատարման նախաձեռնությունը (Ֆրանսիա)։ Նա դավաճանեց անգլիական պրոլետարիատի 1926 թվի ընդհանուր գործադուլի ժամանակ։ Նա օգնել և օգնում է խեղդել Չինաստանն ու Հնդկաստանը։ Նա հանդիսանում է Ազգերի Լիգայի պրոպագանդիստը, կապիտալի մունետիկը, և Խորհրդային Միության պրոլետարիատի կապիտալի մունետիկը... դիկտատուրայի դեմ մղվող պայքարի կազմակերպիչ ուժը։ Սոցիալ-դեմոկրատիան պաշտպանում է ճապոնական իմպերիալիզմը Մանջուրիայում և Չինաստանում։ Նա կազմակերպելով շտրեյկբրեխեր—գործադուլաբեկներին՝ վիժեցնում է պրոլետարիատի դասակարգային յելույթները, վորպիսիք վերջին տարիների ընթացքում տեղի յեն ունեցել Ամերիկայում և Յեվրոպայում. Նա իր բոլոր ուժերով աշխատում է խանգարել, վիժեցնել ֆաշիզմի դեմ ընդհանուր միասնական հեղափոխական ճակատ ստեղծելու գործը։ Սոցիալ-ֆաշիստներն Իսպանիայում օգնեցին հանուն խորհուրդների տեղի ունեցող բանվորական շարժումը ճնշելու գործին։ Նրանք բուրժուական մարդասպանների հետ մեկտեղ թափում էին Հարավային Ամերիկայի ապստամբած պրոլետարիատի արյունը։ Սոցիալ-ֆաշիստների II Ինտերնացիոնալը փորձեց տապալել Ամստերդամում կայացած հակապատերազմական կոնգրեսը։

Հակասությունները բուրժուազիայի և պրոլետարիատի միջև կապիտալիստական յերկրներում ծայր աստիճան սրվում և մերկանում են: Բանվորներն ել ավելի շրջադարձ են կատարում դեպի կոմունիզմի կողմը: Պրոլետարիատի բոլոր կարևոր ելույթները (ընդհանուր գործադուլը Լեհաստանում, լեռնագործների գործադուլը Բելգիայում) տեղի յեն ունենում յեղբայրական կոմունիստական կուսակցությունների անմիջական ղեկավարության ներքո: Հանձին նրանց պրոլետարիատը տեսնում ե միակ կուսակցությունը, վորն ընդունակ ե պայքարել կապիտալիզմի դեմ, միակ կուսակցությունը, վորն արժանի յե աշխատավոր մասսաների վստահությանը, վորին, հանուն կապիտալիզմի շղթաներից ազատվելու պայքարում, կարելի յե և արժե հետևել:

## ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՅԵԼՔ Ե ՎՈՐՈՆՈՒՄ ՃԳՆԱԺԱՄԻՑ

Կապիտալիստական աշխարհի այս բոլոր հակասությունները, վոր ավելի մերկացել են ու սրվել շնորհիվ համաշխարհային տնտեսական ճգնաժամի զարգացման, բուրժուազիան կամենում ե վերացնել կապիտալիստական ճանապարհով ու միջոցներով:

Բուրժուական աշխարհը փորձում ե վերականգնել իր հզորությունը բանվոր դասակարգի հետագա ճնշման ճանապարհով, նրա տնտեսական ու քաղաքական սորկացման ճանապարհով, գաղութների հետ ել ավելի ավազակաբարո հաշվեհարդար կատարելու և կողոպտելու ճանապարհով:

Բուրժուազիան փորձում ե դրությունից յելք գտնել ներքին քաղաքականության հետագա փաշիզացման միջոցով: Ֆաշիզմը—բուրժուազիայի բացարձակ դիկտատուրան ե, Ֆաշիզմը— կապիտալի կողմից բանվոր դասակարգի վրա հարձակվելու ամենասուր ձևերից մեկն ե: Ֆաշիստները հալածում են կոմունիստներին, հեղափոխական պրոֆմիություններին, սպանում են բանվոր դասակարգի առաջավորներին և ակտիվիստներին, վորոնք նվիրված են կոմունիզմին և պայքարում են Խորհրդային Միության համար: Ֆաշիստները կառավարության օժանդակությամբ և ֆինանսական կապիտալիստների փողերով սպառազինվում են և կազմակերպում ռազմական մարտական խմբեր, վորոնք ղեկավարվում են միապետական սպաների կողմից: Նրանք հարձակվում են բանվորական ժողովների վրա, սպանում են թիկունքից, նռնակ են նետում տները, ներս են խուժում բնակարանները, իրագործելով կապիտալի ամենամերկապարանոց սպիտակ տեռորը:

Տարբեր յերկրների բուրժուաները ճգնաժամերից և բոլոր հակասություններից դուրս գալու համար յելք են վորոնում նոր իմպերիալիստական պատերազմի մեջ, վորն ավելի ավերիչ ե լինելու, քան 1914—1918 թվերի պատերազմները:



## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԿԱՌՈՒՑՈՂ ՅԵՐԿԻՐԸ

Ամենասուր և ամենաանլուծելի հակասությունը կապիտալիստական աշխարհի և Խորհրդային Միության, կապիտալիզմի և սոցիալիզմ կառուցող յերկրի միջև գոյություն ունեցող հակասությունն ե: Այդ հակասությունն ավելի ևս քայքայում ու խախտում ե կապիտալիստական կարգերի արմատները: Այդ հակասությունը, վոր բխում ե սոցիալիզմի յերկրի գոյության փաստերից, դնում ե կապիտալիստական ամբողջ սիստեմի մահու և կյանքի հարցը: Կատաղի պայքարն այս յերկու սիստեմների միջև, «ով-ում» հարցի լուծման պայքարը, միջազգային մասշտաբով արդի միջազգային դրության հիմքն ե, վորովհետև «խորհրդային հանրապետության յերկարատև գոյությունը—ինչպես ասում եր Լենինը —կապիտալիստական պետությունների կողքին անիմաստ ե: Վերջիվերջո մեկը կամ մյուսը հաղթելու յե»:

Ահա թե ինչու Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի հենց սկզբի որերից բուրժուազիան հավաքում ե իր բոլոր ուժերն ու միջոցները, վոր լուծի կապիտալիստական աշխարհի հակասությունն ի հաշիվ մեր յերկրի, ի հաշիվ Խորհրդային Միության հարյուր վաթսուն միլիոն բնակչության: Բուրժուազիան ուզում ե թեթևացնել իր դրությունը, «բժշկել» իրեն՝ ճգնաժամի բոլոր հիվանդություններից՝ պրոլետարական դիկտատուրայի հետ արյունոտ հաշիվ տեսնելու ճանապարհով, Խորհրդային Միության խորտակման ճանապարհով: Նա այդ ուզում ե կատարել ի հաշիվ Խորհուրդների յերկրի, նրա համար, վոր Խորհուրդների յերկիրը հանդիսանում ե միջազգային պրոլետարական հեղափոխության ամրոցը: ԽՍՀՄ-ն դիմադերծ ե անում իմպերիալիստների ռազմական մեքենայությունները, խանգարում ե նրանց պատրաստելու նոր պատերազմներ, նրանց թույլ չի տալիս տեր ու տնորեն լինելու, ինչպես ցարի ու կապիտալիստների ժամանակ, մեր յերկրի ընդարձակ տարածությունների վրա:

Բուրժուազիան ամեն կերպ փորձում ե խանգարել սոցիալիզմի կառուցումը ԽՍՀՄ-ում, կասեցնել այն: Կապիտալիստական աշխարհը գրել ու դնում ե մեզ ամեն տեսակի դժվարությունների մեջ, շարունակաբար սպառնալով Խորհրդային Միության գոյությանը: 1918—20 թվերին բուրժուազիան կազմակերպեց ռազմական ինտերվենցիա (գերմանացիներն ու լեհերը Արևմուտքում, ամերիկացիները—Հյուսիսում, ճապոնացիները՝ Սիբիրում և Հեռավոր Արևելքում, անգլիացիները—Կովկասում և Միջին Ասիայում, ֆրանսացիները հարավում—Սև ծովի վրա): Սպառազինված կերպով բուրժուազիան փորձում եր ճզմել յերիտասարդ Խորհրդային հանրապետությունը: Մեր յերկրի բանվոր դասակարգն ու աշխատավոր մասսաները հետ մղեցին իմպերիալիստների հար-

ձակումը, պահպանեցին Խորհուրդների յերկիրը: Ոտարերկրյա բուրժուազիան դավեր էր նյութում մեր յերկրում, հարաբերությունների մեջ էր մտնում մեր յերկրի ներսի բուրժուական և մանր բուրժուական հակահեղափոխական և կուլակային տարրերի հետ: Վնասարարների արդյունաբերական կուսակցության գործը, մենշևիկ վնասարարների գործը, Շտեռնի դավադրությունը, վորը մահափորձ էր կատարել գերմանական դիվանագիտական ներկայացուցչի վրա, վորպեսզի փչացնի ԽՍՀՄ-ի և Գերմանիայի փոխհարաբերությունները, Գորգուլովի կողմից Ֆրանսիական հանրապետության նախագահ Դումերի սպանությունը—բացահայտ դիմակազերծ արին այն փորձերը, վոր կատարում են ոտարերկրյա բուրժուազիայի ավելի անհաշտ, ավելի մարտականորեն տրամադրված խմբակցությունները՝ ԽՍՀՄ-ում պրոլետարական դիկտատուրան կործանելու համար: Բուրժուազիան հակախորհրդային ամեն տեսակի կամպանիաներ է կազմակերպում:

Հռոմի պապի որհնությամբ և ղեկավարությամբ բուրժուազիան «խաչակրաց արշավանք» կազմակերպեց Խորհրդային Միության դեմ, իբր թե պաշտպանելու աստծուն, յեկեղեցին և կրոնը մեր յերկրում: Բուրժուազիան ոգտագործում է բոլոր տեսակի կեղծ փաստաթղթերը Խորհրդային Միության դեմ, վորոնք պատրաստվում են սպիտակ տարագիրների կողմից:

Բուրժուազիան, նրա պատգամավորներն ու հրապարակագիրները,—այդ «գրչի ավազակները», ինչպես նրանց անվանել է ընկ. Ստալինը, մեր դեմ կամպանիա յեն տանում, մեր արտահանության դեմ, լուրեր տարածելով, վոր իբր թե մեզ մոտ գոյություն ունի հարկադիր աշխատանք: Կապիտալիստները չեն կարող թաքցնել, վոր մեզ մոտ գործազրկություն չկա, իսկ կապիտալի յերկրներում գործազրկությունը հասնում է չլսված չափերի: Բուրժուազիային չի հաջողվում թաքցնել իր պրոլետարիատից, վոր մեզ մոտ արդյունաբերությունը հիմնականում ավարտեց 7-ժամյա բանվորական որվանն անցնելը, վոր մեզ մոտ տեղի յե ունենում աշխատավարձի անընդհատ աճ, այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում բանվորական որվա նկատմամբ անընդհատ հարձակում է կատարվում, այդ որվա ամենաշատ յերկարացման համար, հարձակում նաև աշխատավարձի վրա—այն պակասեցնելու նպատակով: Կապիտալիստական յերկրների բանվորներն այժմ կարող են յերազել այն մասին, վոր կարողանան պահպանել գոնե այն 8-ժամյա բանվորական որը, վոր նրանք վորոշ տեղերում առաջներում ձեռք են բերել:

Իսկ սոցիալիզմի յերկրում բանվորների մի շարք խմբեր, որինակ



ընդերկրյա լեռնագործ բանվորները, քիմիական արդյունաբերության վորոշ ճյուղերի բանվորներն անցել են 6-ժամյա բանվորական որվա: Այս ամենը վառ կերպով ընդգծում են կապիտալիստական սիստեմի և սոցիալիստական սիստեմի հակադրությունը, ընդգծում են մեր սիստեմի առավելությունները: Հենց այդ պատճառով էլ մեզ բամբասում են բուրժուական վարձկանները, վորպեսզի բոլոր յերկրների պրոլետարներին, բոլոր գաղութների ճնշված ժողովուրդներին դժվարացնեն իմանալ ճշմարտությունը սոցիալիզմ կառուցող յերկրի մասին և ամեն միջոցներով խանգարել մեր հոյակապ սոցիալիստական շինարարությունը:

Բուրժուազիան ուժգնորեն պատերազմի յե պատրաստվում Խորհրդային Միության դեմ: Չնայած անասելի ճգնաժամին, արդյունաբերության մի ճյուղ միայն լիակատար ընթացքի մեջ է—այդ ռազմական արդյունաբերությունն է: Բուրժուազիան ուժգնորեն սպառազինվում է:

1929 թվին իմպերիալիստները փորձեցին մեզ քաշել պատերազմի մեջ, շոշափել մեզ սվիններով, մեր վրա նետելով չինական գեներալներին: Վիժեց կապիտալիստների այդ փորձը, իսկ չինական գեներալների համար վողբալի վախճան ունեցավ: Մեր հեռավոր արևելքի հատուկ բանակը—մեր Կարմիր բանակի մարտական ջոկատը—ցույց տվեց վոչ միայն իր սվինի ուժն ու սրությունը, այլ նաև պրոլետարական բանակին, միջազգային պրոլետարական բանակին հատուկ բարձր գիտակցությունը, դիսցիպլինան և որինակելի վարվեցողությունը:

Ներկա մոմենտի առանձնահատկությունն այն է, վոր էլ ավելի յե վերանում սահմանը խաղաղ դրության և պատերազմի միջև—իմպերիալիստները պատերազմ են ձեռնարկում և պատերազմում են առանց բացարձակ պատերազմ հայտարարելու, ուստի սոցիալիզմի աշխարհը ավելի քան պատրաստ պիտի լինի հակահարվածի:

ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցողները, բոլոր յերկրների հեղափոխական պրոլետարներն անխախտ հավատ ունեն, վոր այժմ Խորհրդային Միության վրա զինված հարձակում գործելու դեպքում գլխավոր վտանգի կենթարկվի նա, ով կհամարձակվի խախտել խաղաղությունը և հարձակվել ԽՍՀՄ-ի վրա:

Չնայած թշնամիների պրովոկացիաներին, հակառակ սոցիալիստական շինարարությունը խանգարելու նրանց ջանքերին, սոցիալիզմի աշխարհն իր գոյության տասնհինգ տարվա ընթացքում ձեռք է բերել նորանոր հաղթանակներ: Նրա վերելքը շարունակվում է չտեսնված տեմպերով:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒՂՈՒ ՎՐԱ

Այդ հաջողությունները ձեռք են բերվել շնորհիվ այն բանի, վոր սոցիալիստական շինարարության ամբողջ գործը տարվել է բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ: Պրոլետարական դիկտատուրան ամրանում է շնորհիվ պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի պահպանմանն ու ամրացմանը, վորի մեջ պրոլետարիատին ղեկավար դեր է պատկանում: Խորհուրդները, ինչպես պրոլետարական դիկտատուրայի ձև, ավելի ու ավելի զարգանում ու ամրապնդվում են, կառավարման մեջ ներգրավելով հարյուր հազարավոր միլլիոն աշխատավորներ: Խորհրդային դեմոկրատիան նպաստում է աշխատավոր մասսաների պրոլետարական կարգապահության և կոմունիզմի վոգով դաստիարակելուն, ապահովելով պրոլետարիատին և գյուղացիությանը իսկական ազատություն, իրական մասնակցություն յերկրի կառավարմանը:

Խորհրդային իշխանությունն ամենայն հետևողականությամբ և առանց խնայելու ճնշում է սոցիալիզմի թշնամիների—շահագործողների և նրանց գործակալների ամեն տեսակի դիմադրությունը: Համատարած կոլեկտիվացման հիման վրա վերացվում է կապիտալիստական շահագործման վերջին մնացորդը—կուլակությունը:

Տնտեսապես հետամնաց յերկրից, քայքայված, աղքատացած ագրարային Ռուսաստանից—խորհրդային իշխանությունը Խորհուրդների յերկիրը դարձրեց ինդուստրիալ յերկիր: Ամենամանր ու ցածր գյուղատնտեսական յերկրից ԽՍՀՄ-ն դարձավ աշխարհի ամենախոշոր գյուղատնտեսական յերկիրը: Լենինյան «ով–ում» հարցը լիակատար կերպով և անվերադարձ լուծված է թե քաղաքում և թե գյուղում կապիտալիզմի դեմ և հօգուտ սոցիալիզմի: Կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերացումը մոտակա հնգամյակի ընթացքում կանխորոշված է:

Սոցիալիզմի այդ հիմնական նվաճումները ձեռք են բերվել շնորհիվ այն բանի, վոր մեր կուսակցությունը միջազգային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ, լենինյան վողջ հետևողականությամբ վարեց սոցիալիստական ինդուստրացման և դրա հիման վրա գյուղական անհատական տնտեսության սոցիալիստական վերակառուցման քաղաքականություն:

Մեր կուսակցությունն ամենայն վճռականությամբ կյանքում իրականացնում էր Լենինի այն ցուցումները, թե սոցիալիստական հասարակության ստեղծման միակ և իսկական մատերիալ հիմքը հանդիսանում է միայն և միայն ծանր արդյունաբերությունը, արտադրության միջոցների արտադրությունը: «Առանց դրան—ասում է Լենինը,—մեր



## ՄԵԶ ՄՈՏ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՏԱՍՆԱՄՅԱԿ Է




Արդյունաբերության համախառն արտադրանքը




Ածխի հանումը




Նավթի հանումը




Չուգունի ձուլումը




Երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառությունը

տնտեսական կյանքի իսկական սոցիալիստական հիմքի մասին, վորևե խոսք լինել չի կարող»։ Մի յերկիր, վորը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը հետամնաց էր, ժողովրդական տնտեսության վերակառուցումն ավարտելու համար այժմ արդեն ունի սոցիալիստական խոշոր մեքենական ինդուստրիայի իր սեփական բազան։

Մեր արդյունաբերության տեխնիկական վերակառուցման հետ միաժամանակ մենք, նորագույն տեխնիկայի հիման վրա, ստեղծեցինք արտադրության այնպիսի նոր ճյուղեր, վորպիսիք չկային ցարական բուրժուա-կալվածատիրական Ռուսաստանում։ Ավտոմոբիլային, տրակտորային, կոմբայններ, գնդառանցքակալների (շարիկոպոդշիպնիկի), վերելակի լծակներ (под'емные краны), ճանապարհային մեքենաներ, բլյումինգներ, ինքնաթիռներ և այլն։ Ծանրի հետ մեկտեղ ուժգնորեն աճեց նաև թեթև արդյունաբերությունը, լայն սպառման ապրանքները։

Պրոլետարական հեղափոխության ամենակարևոր և ամենածանր խնդիրներից մեկը գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման խնդիրն է։ Այս խնդիրը, վորն ուներ համաշխարհային պատմական նշանակություն, արդեն լուծված է։ Գյուղատնտեսության մեջ տիրապետող տեղ գրավեցին սոցիալիստական ձևերը (կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները)։ Սոցիալիզմի այդ հաղթանակը ձեռք բերվեց կոլեկտիվացման, խորհտնտեսությունների ծավալման և մեքենային տեխնիկայի լայն գործադրման հիման վրա։

Աշխատավոր մասսաների բարեկեցությունը, սոցիալիստական սիստեմի գոյության հետևանքով, տարեցտարի աճում է։ Կապիտալիստական յերկրների համար անհասանելի տեմպերով աճում է ժողովրդական յեկամուտը, վոչնչացված են գործազրկությունն ու աղքատությունը, բարձրանում է բանվորների և աշխատավոր գյուղացիության կուլտուրական մակարդակը, պակասում է մահացությունը և արագորեն աճում է Խորհրդային Միության ազգաբնակչությունը։

Աճել է բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության լայն մասսաների հեղափոխական ակտիվությունը, կատարվել է սոցմրցման և հարվածայնության հսկայական վերելք, նոր, սոցիալիստական վերաբերմունք է ստեղծվել դեպի աշխատանքը։

Կուսակցությունը մոբիլիզացիայի յեր յենթարկում և յենթարկում է Խորհրդային Միության լայն մասսաներին դեպի սոցիալիզմի շինարարություն՝ դասակարգային պայքարի սրման պայմաններում վարելով ծավալուն հարձակում կապիտալիստական տարրերի վրա, վորոնք ուժգին դիմադրություն են ցույց տալիս սոցիալիստական շինարարությանը։

Մեր կուսակցությունը վճռական պայքար մղեց աջ ոպորտունիստների դեմ, վորոնք փորձում եյին վիժեցնել սոցիալիստական հարձակման



քաղաքականությունը՝ վախեցնելով յերկրում դասակարգային պայքարի սրմամբ և կոչ եյին անում հանձնել դիրքերը կուլակներին և բուրժուական տարրերին, նրանց հանդեպ ուղղակի կապիտուլյացիայի կատարելու (անձնատուր լինելու)։

Մեր կուսակցությունը փշրեց ու ջախջախեց հակահեղափոխական տրոցկիստներին, վորոնք զարգացնում եյին մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության և կապիտալիզմի վերականգնման անխուսափելիության բուրժուական թեորիան։ Սոցիալիզմի հաղթական կառուցումը ԽՍՀՄ-ում, վոր իր վառ արտահայտությունը գտավ հնգամյակը չորս տարում ավարտելու մեջ, ձեռք բերվեց աջերի,

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԽՍՀՄ-ՈՒՄ
(միլիարդ ռուբլիներով)




Աշխատավարձի ֆոնդը 1928 թ. մինչև 1932 թ. մոտ աճել է յերեք անգամ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ




Նոր կառուցվող բնակարանների տարածությունը (միլիոն քառ. մետրով) հնգամյակում մեծացավ ավելի քան 5 անգամ

երբև ներկա ետապի գլխավոր վտանգի դեմ անխնա պայքար մղելու հետևանքով, վորովհետև աջերը հանդիսանում են կապիտալիստական տարրերի գործակալներ։ Կուսակցությունը միաժամանակ վճռականորեն պայքարում է «ձախ» ցատկումների դեմ, հարվածում է «ձախ» ոպորտունիստներին, վորոնք աղավաղում են կուսակցության գիծը, վորոնք վարչարարությամբ են դրսևորում այնտեղ, վորտեղ հարկավոր է կուսակցության ցուցումների համբերատար և պլանային կատարում։ Կուսակցությունը պայքարել ու պայքարում է աջերի և «ձախերի» նկատմամբ հաշտվողականության դեմ, վորովհետև հաշտվողականությունը իրականում նշանակում է ոժանդակել թեքումներին, փորձել վրիպել
տալ ոպորտունիստներին ուղղած կուսակցության հարվածները։

Մեր կուսակցության լենինյան միասնությունը, վոր ղեկավարվում է ընկ. Ստալինի կողմից, նրա բոլշևիկյան անհաշտությունը դեպի գլխավոր գծից կատարված թեքումները, պայքարը յերկու ֆրոնտի վրա՝ սոցշինարարության դժվարությունները վերացնելու, նրա պրոլետարական վճռականությունը—համախմբում են կուսակցության շուրջը նորանոր միլիոնավոր աշխատավորներ, վորոնք մինչև վերջը նվիրված են սոցիալիզմի գործին, պրոլետարական հեղափոխության գործին ամբողջ աշխարհում։

Այս Խորհրդային Միությանը դարձնում է անխորտակելի, ամրացնում է սոցիալիզմի դիրքերը՝ կապիտալիզմի աշխարհի դեմ մղած նրա պայքարում։ Լենինը դեռևս 1921 թվին ասում եր. «Այժմ միջազգային հեղափոխության վրա մեր գլխավոր ներգործությունը մենք կատարում ենք մեր տնտեսական քաղաքականությամբ։ Բոլորը Խորհրդային հանրապետությանն են նայում, բոլոր յերկրների բոլոր աշխատավորներն առանց չափազանցության...»։ Այս ապահովում է խորհրդային սիստեմի հաղթանակը կապիտալիստականի նկատմամբ։ «Այս ամենը,—ինչպես հայտարարեց XVII կուսկոնֆերենցիան,— էլ ավելի ԽՍՀՄ-ն դարձնում է բոլոր յերկրների բանվորների և ամբողջ աշխարհի ճնշվածների ձգողական կենտրոնը։ Խորհրդային Միության հեղափոխականացնող նշանակությունն աճում է, ԽՍՀՄ-ն ամրանում է իբրև միջազգային սոցիալիզմի բազա»։ Հոկտեմբերյան հեղափոխությունը, ստեղծելով խորհրդային պետություն, իրականացնելով պրոլետարական դիկտատուրան, բաց արեց համաշխարհային պրոլետարական կոմունիստական հեղափոխությունների դարաշրջանը, վորի հաղթանակն ապահովված է ամբողջ աշխարհում։

Ահա թե ինչու յե ճիշտ յերկու աշխարհների— կապիտալիստական սիստեմի աշխարհի և սոցիալիստական սիստեմի աշխարհի գնահատականը, տրված ընկ. Ստալինի կողմից 1930 թվին, կուսակցության XVII համագումարում։

Այն ժամանակվանից սկսած մենք ել ավելի մեծ փլուզում ենք նկատում կապիտալիզմի աշխարհում և մեծ նվաճումներ սոցիալիզմի աշխարհում։ Մենք գործի յենք դցել նոր ֆաբրիկաներ և գործարաններ, մենք վառել ենք նոր դոմնաներ, կառուցել ենք նոր կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ։ Սոցիալիստական սեկտորը 1932 թվին ցանել է Միության ամբողջ ցանքսի տարածության 80 տոկոսից ավելին։

Կապիտալիստական աշխարհն ընդհանուր ճգնաժամի հարվածների տակ հետ է գլորվում—Ամերիկայի արտադրանքը 1928 թվի համեմատությամբ կազմում է 62 տոկոս, այսինքն, ⅔-ից պակաս, Գերմանիայինը—55 տոկոս, այսինքն ընդամենը համարյա կեսը, Ֆրանսիայինը՝ 77 տոկոս, այսինքն նախկին արտադրանքի մոտավորապես յերեք քառորդը։ Իսկ Խորհրդային Միության արտադրանքը 1932 թ. գարնանն արդեն կազմում եր 1928 թ. 218 տոկոսը։



Խորհրդային աշխարհը հաղթահարում է աճման դժվարությունները, անշեղորեն առաջ է ընթանում դեպի սոցիալիզմ, իսկ կապիտալիստական աշխարհը գնում է դեպի հատակը։ Լենինյան հարցը «ով-ում», վոր սիստեմը կհաղթանակի—միջազգային ասպարեզում վճռվում է ավելի շուտ հօգուտ խորհրդային սիստեմի—ի վնաս կապիտալիզմի, հօգուտ սոցիալիզմի։

17-րդ կուսկոնֆերենցիան հանրագումարի բերելով առաջին հնգամյակի առաջին յերեք տարիների արդյունքները, իբրև «յերկրորդ հնգամյակի քաղաքական հիմնական խնդիր» առաջադրեց—«կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերացումը, լիակատար վոչնչացումն այն պատճառների, վորոնք ծնում են դասակարգային տարբերություն ու շահագործում և կապիտալիզմի մնացորդների հաղթահարումն տնտեսության և մարդկանց գիտակցության մեջ, յերկրի վողջ աշխատավոր բնակչությանը սոցիալիստական անդասակարգ հասարակություն կառուցելու գործին ակտիվ մասնակիցներ դարձնելը»։

«Մարդկությունը կապիտալիզմից անմիջականորեն կարող է անցնել միայն դեպի սոցիալիզմ, այսինքն արտադրության միջոցների ընդհանուրի տիրապետության և մթերքների բաշխմանն ըստ յուրաքանչյուրի աշխատանքի չափի: Բայց մեր կուսակցությունը նայում է դեպի հեռուն: Սոցիալիզմն անխուսափելիորեն պետք է վերաճի դեպի կոմունիզմ, վորի դրոշի վրա գրված է. «Յուրաքանչյուրն ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ պահանջի»:

ԼԵՆԻՆ

III
ԳԼՈՒԽ

# ԿՈՄՈՒՆԻԶՄԸ ՄԵՐ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է

Մենք մեզ անվանում ենք կոմունիստներ: Մեր կուսակցությունը բոլշևիկների կոմունիստական կուսակցությունն է:

Համաշխարհային պրոլետարիատի մարտական շտաբը, վորի մեջ մտնում է մեր կուսակցությունը իբրև առաջատար ջոկատ, կոչվում է Կոմունիստական Ինտերնացիոնալ: Այն ծրագիրը, վորի մեջ 80 տարի առաջ գլուխ կան կոմունիզմի հիմնադիրներ՝ Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի կողմից նշված են յեղել պրոլետարիատի՝ աշխարհը վերափոխելու պայքարի հիմնական ճանապարհները, կոչվում է «Կոմունիստական մանիֆեստ»:

Ինչո՞ւ մենք մեզ կոմունիստ ենք անվանում, իսկ մեր կուսակցությունը կոմունիստական:

## 1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑ Է

### ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ Է

Կապիտալիստական սիստեմը, վոր նեխվում է նրա ներքին հակասությունների ծայրահեղ զարգացմամբ, սպառնում է նույնիսկ մարդկության գոյությանը: «Միայն պրոլետարական կոմունիստական հեղափոխությունը,—ասում է մեր կուսակցության ծրագիրը,— կարող է դուրս բերել մարդկությանն այն փակուղուց, վոր ստեղծել են իմպերիալիզմն ու իմպերիալիստական պատերազմները»:

Միջազգային պրոլետարիատը, վորը պետք է ջախջախի և ոչնչացնի կապիտալիստական հասարակությունը, իր հեղափոխական ճանապարհի վրա ունի խոշորագույն դժվարություններ: Պրոլետարիատի հե-



ղափոխական դաժան պայքարի ընթացքում հնարավոր են ժամանակավոր անհաջողություններ, սակայն կապիտալիստական աշխարհին չի հաջողվի դուրս պրծնել անխուսափելի կործանումից: «Կապիտալիստները, բուրժուազիան,—ասում է Լենինը,— իրենց համար «լավագույն» դեպքում կարող են այս կամ այն առանձին յերկրում հետաձգել սոցիալիզմի հաղթանակը, հարյուր հազարավոր բանվորների և գյուղացիների նոր կոտորածների գնով: Սակայն կապիտալիզմը փրկել նրանք չեն կարող... Կապիտալիզմի կործանումն անխուսափելի յէ»: Կապիտալիզմն իր ամբողջ զարգացմամբ նախապատրաստում է պրոլետարական հեղափոխության՝ սոցիալիզմի հաղթանակը: Հսկայական չափերով աճել են այն հարստությունները, վոր կուտակել է մարդկությունը, շնորհիվ տեխնիկայի կատարելագործման, արտադրության միջոցների համակենտրոնացման ու կենտրոնացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման:

Մարդկությունն իր ամբողջությամբ բավականաչափ հարուստ է, վորպեսզի մարդկանց համար ապահովվի արժանավոր գոյության պահպանումը: Արտադրական ուժերի հետագա զարգացմանը խոչընդոտ է հանդիսանում կապիտալիստական սիստեմը: Հսկայական արտադրություններ, գիտության և տեխնիկայի բոլոր նվաճումներն ոգտագործվում են ոչ թե հօգուտ ժողովրդական մասսաների, այլ հօգուտ մի բուռն պարազիտների: Խորանում է անդունդը բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Իմպերիալիզմը խիստ սրության է հասցնում դասակարգային հակասություններն և դասակարգային պայքարը: Աճում է աշխատավոր և չահագործվող մասսաների դժգոհությունը, խստորեն սրվել է նրանց պայքարը չահագործողների դեմ:

Ընդլայնվում է պրոլետարիատի միջազգային կոմունիստական շարժումը: Պատմությունն որակարգի հարց է դարձրել բուրժուական լծի հեղափոխական խորտակումը և կապիտալիստական տնտեսությունը կոմունիզմի համաշխարհային սիստեմով փոխելու խնդիրը: Կոմունիզմի համար մղվող հեղափոխական պայքարում պրոլետարիատը չի յելնում մտացածին դրույթներից և կամ յերևակայությունից այն մասին, թե ինչպես է ցանկալի կազմակերպել ապագա կոմունիստական հասարակությունը: Յերևակայություններ և մտացածին դրույթներ այն մասին, թե ինչպիսին են լինելու սոցիալիստական կարգերը, անցյալում քիչ չեն յեղել: Ուտոպիստ-գրողներ՝ Թոմաս Մորը, Սեն-Սիմոնը, Ֆուրյեն, Ոուենը և ուրիշներն անիծում եյին բուրժուական կարգերը, յերազում եյին լավագույն, կոմունիստական կարգեր ստեղծելու մասին, համոզում եյին կապիտալիստներին, վոր բանվորներին չահագործելն անբարոյական բան է: Այդ սոցիալիզմը, վոր ուտոպիստական սոցիալիզմ

եր կոչվում, չէր կարողանում բացատրել կապիտալիզմի էությունը, ցույց չէր տալիս նրա կործանման անխուսափելիությունը, բացի կապիտալիստներից, չէր տեսնում մի ուրիշ ուժ, որ ընդունակ լիներ վերափոխել հասարակությունը—նոր սկզբունքներով:

Իսկ պրոլետարիատն և նրա կոմունիստական կուսակցությունը ելնում են գիտական սոցիալիզմի հաստատուն հիմքերից, այսինքն—սոցիալիզմի—ոչ թե իբրև յերևակայության և ցնորքի, այլ սոցիալիզմի, իբրև գիտության: Այդ գիտությունը, որ մշակել են Մարքսն ու Էնգելսը, զարգացրեց և հարստացրեց Լենինը, իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանին համապատասխան: Այդ գիտությունը տեսականում և գործնականում շարունակում է զարգացնել լավագույն մարքսիստ-լենինիստ ընկ. Ստալինը:

Մարքսիզմը բաց արեց արդի կապիտալիստական տնտեսության էությունը: Նա ցույց տվեց, որ կապիտալիզմի վողջ զարգացումը հնարավոր ու անխուսափելի յէ դարձնում հասարակության սոցիալիստական վերակառուցումը: Նա դիմակազերծ արեց կապիտալիստական հասարակության բոլոր կարգերը, բաց արեց նրա ներքին մեխանիկան, որ հիմնված է շահագործման և հավելյալ արժեք կորզելու վրա:

Մարքսիզմը սովորեցրեց տեսնել, թե բուրժուական գիտության կողմից ինչպես է աղավաղվում դասակարգային պայքարը, որ մղվում է բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Մարքսիզմը ցույց տվեց, որ «Նախընթաց հասարակության պատմությունը դասակարգերի պայքարի պատմություն է» («Կոմունիստական մանիֆեստ»): Իսկ դասակարգերը կարող է ոչնչացնել ամենաառաջավոր, ամենահեղափոխական դասակարգի դիկտատուրան—պրոլետարիատի դիկտատուրան: Մարքսի գիտությունը սոցիալիզմի մասին պրոլետարիատի առաջ խնդիր է դրել—ջարդուփշուր անել բուրժուազիայի իշխանությունը, հաստատել իր սեփական հեղափոխական իշխանությունը, պրոլետարիատի իշխանությունը, կապիտալիստական սիստեմը փոխել կոմունիստական սիստեմով:

## ՍՈՑԻԱԼ-ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ «ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ» ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՄԱՍԻՆ

II Ինտերնացիոնալի կուսակցությունները, որ մասսաներին խաբելու համար իրենց կոչում են սոցիալիստական բանվորական կուսակցություններ (սոցիալիստներ, սոցիալ-դեմոկրատներ), հավատացնում են բանվորներին, որ սոցիալիզմ կարելի յէ կառուցել առանց պայքարի, առանց ապստամբությունների և հեղափոխությունների: Կապիտալիզմը պետք է բուժել և ոչ թե ոչնչացնել, տապալել—պնդում են սոցիալ-ֆաշիստները:



Բանվոր դասակարգի այդ դավաճանները հավատացնում են, որ իբր թե իմպերիալիզմը «կազմակերպված» կապիտալիզմն է:

Նրանց կարծիքով մոնոպոլիաների, տրեստների, սինդիկատների և կարտելների աճումը տանում է դեպի մրցությունների և կապիտալիստների միջև յեղած պայքարի վերացում: Իբր թե վերանում են անարխիան և արտադրության անպլանայնությունը, նրանց կարծիքով, սկսում է տիրապետել պլանային, գիտակցական կազմակերպությունը, որն անհիվանդագին վերածվում է պլանային սոցիալիստական տնտեսության: Սոցիալ-ֆաշիստների հավաստիացումներով կապիտալիզմն աննկատ կերպով, առանց որևէ պայքարի ու հեղափոխության, որի մասին խոսում են բոլշևիկները, ներաճում է սոցիալիզմի մեջ: Որ իբր թե արժե միայն հեռացնել տրեստների և կարտելների տերերի մի փոքրիկ խմբակը (իսկ այդ նույնպես կարելի յէ անել խաղաղ ճանապարհով, հասարակ պարլամենտական ձայնտվությամբ), և սոցիալիզմը կդառնա փաստ:

Սոցիալ-ֆաշիստական տեսությունը «կազմակերպված» կապիտալիզմի մասին, որ իր ջատագովներն էր գտել նաև մեր կուսակցության աջ օպորտունիստների շրջանում, արդեն ջախջախված է կյանքի կողմից: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ծավալումն ու խորացումը, որ տեղի յէ ունենում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հիման վրա, մրցությունների և պայքարի մեծացումն իմպերիալիստների միջև, կապիտալիզմի ներքին և արտաքին բոլոր հակասությունների սրումը—այդ տեսության անկման լավագույն վկայությունն է: Կապիտալիզմը չի կարող լինել «կազմակերպված»: Մոնոպոլիստական միավորումների ստեղծումը չի վերացնում մրցություններն ու պայքարը կապիտալիստների միջև:

Ընդհակառակը, մոնոպոլիան գոյություն ունի մրցության հետ զուգընթաց, սրում է ընդհարումները կապիտալիստների տարբեր խմբակների միջև, խորացնում է կապիտալիստական կարգերի հակասությունները: Տրեստների, սինդիկատների և կարտելների ներսում, շահույթներին մասնակցելու, ազդեցության շրջանների և այլնի համար, խստագույն պայքար է մղվում: Ուժեղանում է պայքարը կապիտալիստական միավորումների միջև—ապրանքի վաճառահանման շուկաների և հումքի աղբյուրների համար: Կատաղի պայքար է մղվում մոնոպոլիաների միջև, որոնք տիրապետում են ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում. այն միավորումների, որոնք մոնոպոլիային յենթարկել հանույթային արդյունաբերությունը, և պատրաստի ապրանքի արտադրության մոնոպոլիաների միջև և այլն: Վողջ այդ պայքարը խորացնում է կապիտալիզմի հակասությունները, ավելաց-

նում է արտադրության անարխիան: Կապիտալիզմն ու պլանը, կազմակերպումը—անհամատեղելի յեն: «Կազմակերպված» կապիտալիզմի հեքիաթը պետք է սոցիալ-ֆաշիստներին—բուրժուազիայի այդ հավատարիմ սպասարկուներին, կապիտալի սուտ գործակալներին՝ բանվորական և աշխատավոր մասսաներին խաբելու համար, կապիտալիստական կարգերը տապալելու հեղափոխական պայքարից նրանց հեռացնելու համար:

Իմպերիալիզմը վերջին օրերն ապրող, բայց վոչ արդեն վերջացած, մեռնող, բայց դեռ չմեռած կապիտալիզմն է: Կապիտալիզմը պետք է ջախջախել, տապալել:

Սոցիալիստական հեղափոխությունը դրված է որակարգում: Նա պետք է ծանր պայքարներում վերափոխի կապիտալիստական աշխարհը, փոխարինի այն կոմունիզմի աշխարհով, վորը կազմում է միջազգային կոմունիստական կուսակցության վողջ գործունեյության վերջնական նպատակը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը—ասում է մեր ծրագիրը—սկզբնավորեց համաշխարհային պրոլետարական կոմունիստական հեղափոխությունների դարաշրջանը: Հաղթահարելով կապիտալիստներին, կալվածատերերին և նրանց կողմից կազմակերպված հակահեղափոխական ուժերին, մեր յերկրի պրոլետարիատն սկսեց ստեղծել կոմունիստական հասարակության հիմքերը:

Հեղափոխական անցումը կապիտալիզմից դեպի կոմունիզմ՝ յերկարատև ճանապարհ է: Կոմունիստական հասարակությունը չի կարող ստեղծվել միանգամից, «տիրոջ հրամանով»: «Կապիտալիստական և կոմունիստական հասարակությունների միջև,—ասում է Կարլ Մարքսը—ընկած է մեկը մյուսով վերափոխվելու հեղափոխական շրջանը, վորին համապատասխանում է քաղաքական անցման շրջանը, վորի ընթացքում պետությունը չի կարող լինել վոչ այլ ինչ, քան պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրա»:

Այդ անցման շրջանում պրոլետարիատն առաջադրում է իրեն փշրել հեղափոխության կողմից տապալված կապիտալիստների և կալվածատերերի դիմադրությունը, կազմակերպել սոցիալիզմի շինարարությունը, վոչնչացնել դասակարգերն ու դասակարգային տարբերությունները, պատրաստել դեպի կոմունիստական հասարակություն անցնելու համար պայմաններ: Հենվելով իր հեղափոխական իշխանության վրա—պրոլետարական դիկտատուրայի վրա, բանվոր դասակարգը կառուցում է անդասակարգ սոցիալիստական հասարակություն: Ճանապարհը դեպի այդ հասարակությունը—դասակարգային կատաղի պայքարի ճանապարհն է:



## 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌՈՒՑՈՒՄ Է ՍՈՑԻԱԼԻԶՄ

### ԷՆԳԵԼՍԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՏԱՊՈՒՄ

Մեր կուսակցությունը, Լենինի կուսակցությունը, կարողացավ կազմակերպել պրոլետարիատին և նրա ղեկավարության տակ գտնվող նախկին ցարական Ռուսաստանի գյուղի և քաղաքի աշխատավոր մասսաներին պայքարելու կապիտալիստական սիստեմի դեմ: Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով կապիտալիստական կարգերի փոխարեն ստեղծվեցին նոր կարգեր—խորհրդային կարգեր:

Համեմատած բուրժուական տիրապետության յերկարամյա դարերի հետ, խորհրդային սիստեմը կարողացավ շատ կարճ ժամանակաշրջանում, իր գոյության 15 տարվա ընթացքում հիմնականում իրագործել այն միջոցառումները, վոր նշել եյին Մարքսն ու Էնգելսը հեղափոխություն կատարած և հաղթանակած պրոլետարիատի համար:

«Կոմունիզմի սկզբունքներում» Էնգելսը համարյա իննսուն տարի առաջ, յելնելով այն ժամանակ գոյություն ունեցող կապիտալիստական հասարակության զարգացման պայմաններից, նշել է հետևյալ մի շարք հիմնական միջոցառումները պրոլետարիատի դիկտատուրայի առաջին շրջանի համար:

«Մասնավոր սեփականության սահմանափակում: Հողի սեփականատերերի, ֆաբրիկանտների, յերկաթուղագծերի տերերի և ծովային նավատերերի աստիճանական էքսպրոպրիացիա (սեփականազրկումն):

Բոլոր էմիգրանտների և խռովարարների ունեցվածքի կոնֆիսկացիա (ձրի բռնագրավումն հօգուտ պետության):

Ազգայնացված կալվածքներում, ֆաբրիկաներում ու արհեստանոցներում պրոլետարների աշխատանքի կազմակերպումն կամ զբաղմունքի հանձնարարումն:

Միատեսակ պարտադիր աշխատանք հասարակության բոլոր անդամների համար...

Բոլոր բանկերի և փողի առևտրի կենտրոնացում պետության ձեռքում:

Պետական (ազգային) ֆաբրիկաների, արհեստանոցների, յերկաթուղիների և ծովանավերի քանակի ավելացումն:

Մշակումն այն բոլոր հողերի, վորոնք մնացել են խոպան:

Արդեն մշակված հողերի մշակման ե՛լ ավելի բարելավումն, համաձայն այն բանի, թե վորքան են մեծանում կապիտալները և վորքան է այն բանվորների քանակը, վոր իր տրամադրության տակ ունի պետությունը:

Բոլոր յերեխաների դաստիարակումն այն պահից, յերբ նրանք կարող են ապրել առանց մայրական խնամքի—պետական հիմնարկներում և պետության հաշվով...

Քաղաքների բոլոր անառողջ, վատ կառուցված բնակարանների և թաղամասերի քանդումն:

Տրանսպորտային վողջ գործի համակենտրոնացումն պետության ձեռքում»:

## Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային իշխանությունն ազգայնացրել է (հանձնել է պրոլետարական պետության ձեռքը) բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները, յերկաթուղիները, հանքահորերը, նավթագործարանները, հանքերը, վողջ հողն ու անտառները, բոլոր պալատներն ու խոշոր տները, բոլոր ուսումնական հաստատություններն ու գրադարանները, տեղափոխման ու կապի բոլոր միջոցները, բոլոր բանկերը, տպարանները, մեծ խանութները և այլն:

Խորհրդային իշխանությունն իրագործելով կուսակցության և կոմինտերնի ծրագիրը, վերականգնեց ավերված ֆաբրիկաներն ու գործարանները, վերականգնեց գյուղատնտեսությունը: Հեղափոխության տարիների ընթացքում, մասնավորապես առաջին հնգամյակի տարիներին, խորհրդային իշխանությունը վերակառուցեց, վերասարքավորեց մեր արդյունաբերությունը, ստեղծեց իր ծանր ինդուստրիան, սոցիալիզմի այդ բազան, վորը ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմքն է:

Բարձրացան արդյունաբերության այնպիսի գիգանտներ, ինչպես Մագնիտոստրոյը, Կուզնեցկստրոյը, Ստալինգրադի և Խարկովի տրակտորային գործարանները, Մոսկվայի և Նիժնի-Նովգորոդի ավտոգործարանները, Ռոստովի և Սարատովի գյուղատնտեսական մեքենաների և կոմբայնների գործարանները և այլն: Խորհրդային իշխանությունն ստեղծեց ցարական Ռուսաստանում գոյություն չունեցող էլեկտրական, քիմիական, տրակտորային, ավտոմոբիլային, ավիացիոն արդյունաբերությունը, բարձրորակ պողպատի և գնդառանցքակալների (շարիկոպոդշիպնիկ) գործարաններ: Խորհրդային իշխանությունը կառուցել է նաև էլեկտրական էներգիայի այնպիսի հզոր պահեստներ, ինչպես Դնեպրոստրոյը, Վոլխովստրոյը, Նիգրեսը, Շատուրան, Շտերովկան, Զույեվկան են, և խնդիր է դրել ստեղծել ավելի հսկայականները, քան Դնեպրոստրոյը և Վոլգոստրոյն են, այն է՝ կառուցել Անգարաստրոյը:

Խորհրդային իշխանությունը լայնորեն մշակում է խորհրդային հողի ընդերքը:

Ստեղծվում են քարածխի, նավթի, այլազան հանքերի նոր շրջան-






И. СТАЛИН



ներ։ Որ–ավուր ամրապնդվում է Խորհրդային Միության տնտեսական անկախությունը (իր սեփական չուգունը, իր պողպատը, իր բամբակը, ալյումինը, իր թեյը, մեքենաները, իր կոմբայնները, բլյումինգները, իր էլեկտրոլամպերը, իր քիմիական արտադրանքը, իր կաուչուկը և այլն)։ Մեր յերկրի ժողովրդական տնտեսությունը զարգանում է այնպիսի տեմպերով, ինչպիսին չի տեսել վոչ մի կապիտալիստական յերկիր։

Խորհրդային իշխանությունը սոցիալիստականորեն է վերափոխում յերկրի գյուղատնտեսությունը։ Աճել է հացի, անասնապահական, տեխնիկական կուլտուրաների և այլ խորհտնտեսությունների ցանքը։

Գյուղական տնտեսությունների մոտ 2/3-ը կոլեկտիվացած է, ցանքային ամբողջ տարածության մոտ 80%-ը 1932 թ. գարնանից սոցիալիստական սեկտորի—կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների ձեռքումն է։ Խորհրդային Միությունը դարձել է ամենախոշոր և ամենաառաջավոր գյուղատնտեսության յերկիրը։ Կոլտնտեսականը դարձել է յերկրագործության կենտրոնական դեմքը, խորհրդային իշխանության գլխավոր և ամուր հենարանը գյուղում։ Յերկրի գյուղատնտեսական հիմնական շրջաններում հիմնականում ավարտված է համատարած կոլեկտիվացումը և այդ հիմքի վրա կուլակության, իբրև դասակարգի, լիկվիդացիան։

Խորհրդային իշխանությունը մտցրել է ընդհանուր ուսուցում։ Վերացվում է անգրագիտությունը։ Հիմնված են հազարավոր նոր միջնակարգ և տարրական դպրոցներ, բանֆակներ, ֆաբզավուսներ, Բարձրագույն ուսումնական հաստատությունների (համալսարանների, տեխնիկական ինստիտուտների) ցանցն ավելի ու ավելի խիտ կերպով է ծածկում Խորհրդային յերկիրը։ Կուսակցության Կենտկոմի վորոշմամբ կազմակերպվում է բարձրագույն գյուղատնտեսական կոմունիստական դպրոցների հատուկ ցանց, վորի խնդիրն է—կադրեր պատրաստել գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի համար։

Տարեցտարի աճում են ակումբները, հանգստյան տները, սանատորիաները, մանկական հիմնարկները։ Մեր լրագրերի տիրաժը բազմաթիվ անգամ գերազանցում է այն, վոր կար տասնհինգ տարի առաջ, բուրժուական կալվածատիրական կարգերում։ Բանվոր դասակարգն ու կոլտնտեսական գյուղացիությունն իր միջից տալիս է պրոլետարական ինտելիգենցիայի բազմաթիվ կադրեր, ճարտարապետներ, տեխնիկներ, կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների աշխատավորներ, բժիշկներ, գրողներ և արվեստի աշխատավորներ։

Խորհրդային իշխանությունն ազատագրեց կնոջը, ստեղծեց մայրության և մանկության պաշտպանության հզոր սիստեմ, հազարավոր

աշխատավոր կանանց ներգրավվեց արտադրության մեջ և պետության կառավարման գործում:

Խորհրդային իշխանությունը վերափոխում է ազգային շրջանների դեմքը, վորոնք ցարական ռեժիմի համար կողոպուտի ասպարեզ եյին: Խորհրդային Միության մեջ բոլոր ազգությունները իրավահավասար են: Խորհրդային յերկրի բոլոր ազգային մարզերում և շրջաններում կատարվում է հսկայական շինարարություն, աճում է սոցիալիստական յերկրագործությունը, կառուցվում են ֆաբրիկաներ և գործարաններ, աճում ու զարգանում է ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան:

Խորհրդային իշխանությունն ապահովել է խորհրդային դեմոկրատիայի ծավալումը:

Մեծապես աճել է խորհուրդների դերը, վորոնք իրենց մեջ են ներգրավել լայն մասսաները և մասնակից են դարձրել նրանց պետական գործունեության տարբեր բնագավառների անմիջական կառավարման գործին (պատգամավորական խմբակներ, սոցհամատեղություն):

Բանվորներն արդյունաբերական ձեռնարկություններում և խորհտնտեսություններում, գյուղացիները կոլտնտեսություններում վերադաստիարակվում են ու դառնում նոր մարդիկ, վորոնք կրում են խորհրդային կուլտուրան, սոցիալիստական գիտակցությունը:

Այն հսկայական հաղթանակները, վոր մեր կուսակցությունը տարել է սոցիալիզմի շինարարության գործում, հասցրին այն բանին, վոր սոցիալիստական սեկտորը տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում դարձել է բացարձակապես գերակշռող:

«Ո՞վ ում»-ի հարցը թե՛ քաղաքում և թե՛ գյուղում վերջնականապես և անվերադարձ կերպով լուծված է հօգուտ սոցիալիզմի:

Մենք մտանք գործեցինք սոցիալիզմի շրջանը, ավարտեցինք սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը: ԽՍՀՄ-ն վերջնականապես ամրացել է սոցիալիստական նոր ուղու վրա:

## 3. ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՆ Է՝ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՎՈՉՆՉԱՑՈՒՄՆ Է

ԽՍՀՄ-ն մտավ գործեց սոցիալիզմի շրջանն և առաջադրում է խնդիր՝ կառուցելու անդասակարգ սոցիալիստական հասարակություն: Վճռականորեն հաղթահարելով դասակարգային թշնամու դիմադրությունը, հաղթահարելով բոլոր տեսակի օպորտունիզմը թե տեսության և թե պրակտիկայի մեջ, կուսակցությունը ձեռք բերեց վճռական հաղթանակներ, ապահովեց սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում:



Լենինյան կուսակցության XVII կոնֆերենցիան բանվոր դասակարգին առաջադրեց յերկրորդ հնգամյակի ընթացքում անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու հսկայական հարցը:

Ի՞նչ է նշանակում կառուցել անդասակարգ սոցիալիստական հասարակություն:

«Սոցիալիզմը—ասում է Լենինը—դասակարգերի վոչնչացումն է»: Կառուցել անդասակարգ սոցիալիստական հասարակություն—նշանակում է վոչնչացնել դասակարգերը:

Հասարակության դասակարգերի բաժանված լինելը—շահագործողների դասակարգ և շահագործվողների դասակարգ—գոյություն ունի անհիշելի ժամանակներից: Դասակարգային տարբերությունն այն է, վոր թույլատրում է հասարակության մի փոքր մասին սեփականացնել հասարակության աշխատանքը: Ինչի՞ վրա յե հենվում այդ կողոպուտն ու շահագործումը կապիտալիստական հասարակության մեջ: Այն բանի վրա,

ՀՆԳԱՄՅԱԿԸ 3 ՏԱՐՈՒՄ




Մեքենաշինությունը, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը և նավթը 1931 թ. գերակատարեցին հնգամյակի ծրագրումները

վոր շահագործող դասակարգի ձեռքումն են կենտրոնացած արտադրության հիմնական միջոցները—ֆաբրիկաները, գործարանները, հողը, արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը: Վոչնչացնել շահագործողների դասակարգի սեփականությունը—նշանակում է վոչնչացնել շահագործողների դասակարգի առաջացման հիմքը:

1917 թ. հոկտեմբերին մեր յերկրի պրոլետարիատը կապիտալիստներից խլեց ֆաբրիկաներն ու գործարանները, իսկ կալվածատերերից՝ հողը: Սակայն քանի դեռ գոյություն ունի փոշիացած մանր գյուղատնտեսությունը, կապիտալիստական տարրերի ծագման ու աճման համար հիմք է մնում: Մանր տնտեսության հիման վրա հայտնվում և աճում են կուլակային տարրերը: Մանր տնտեսությունն անխուսափելիորեն ծնում է նոր շահագործողներ, ծնում է կապիտալիզմի տարրեր

ամեն օր, ամեն ժամ», ասում էր Լենինը։ Միայն խոշոր կոլեկտիվ գյուղատնտեսության անցնելը, կուլակության իբրև դասակարգի վերացումը համատարած կոլեկտիվացման հիման վրա կխախտեն կապիտալիզմի արմատները, կվոչնչացնեն այն հողը, վորի վրա աճում է կուլակային լուծն ու շահագործումը։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման հաջողությունները, կոլեկտիվացման հաղթանակը, համատարած կոլեկտիվացման ավարտումն ու կուլակության իբրև դասակարգ 1932—33 թ.թ. ընթացքում հիմնականում վերացնելը, քաղաքային բուրժուազիայի առաջացման ու աճման ճանապարհների վերջնական դուրսմղումն ու վոչնչացումը թույլ կտան կուսակցությանը յերկրորդ հնգամյակի ընթացքում իրագործել կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերացման խնդիրը։

Կառուցել անդասակարգ սոցիալիստական հասարակություն՝ նշանակում է հաղթահարել կապիտալիզմի մնացորդները վոչ միայն եկոնոմիկայի (տնտեսական կյանքի), այլև մարդկանց գիտակցության մեջ։

Կապիտալիզմն աշխատավորությանը վոչ միայն անխնա շահագործման է յենթարկում, վոչ միայն նրանց մատնում է քաղցի տանջանքների և ամեն տեսակի զրկանքների,—կապիտալիզմն անդամալուծում է նաև աշխատավորության գիտակցությունը, մասսաները պահում է խավարի և ագիտության մեջ, կրոնական հաշիշի իշխանության ներքո, ազգային և այլ նախապաշարմունքների ազդեցության տակ։

Պրոլետարական դիկտատուրայի պայմաններում բանվոր դասակարգը, վոր իրագործում է սոցիալիստական մեծ կառուցումը, վերադաստիարակելով իր դաշնակցին— աշխատավոր գյուղացիությանը— միաժամանակ դաստիարակում է նաև ինքն իրեն։ Սոցիալիստական շինարարության ընթացքում բանվոր դասակարգն արմատախիլ է անում իր միջից անցյալի մնացորդները—ստրկական վերաբերմունքը դեպի աշխատանքը։ Աճում ու զարգանում է սոցիալիստական մրցությունը, իսկ այդ, ասում է ընկ. Ստալինը, «կատարում է դեպի աշխատանքը յեղած՝ մարդկանց հայացքների արմատական հեղաշրջում, քանի վոր նա այդ աշխատանքը ծանր ու անտանելի բեռից, ինչպես նա համարվում էր առաջ, դարձնում է պատվի գործ, փառքի գործ, պարծանքի և հերոսության գործ»։

Բանվորն հասկանում է, վոր աշխատում է իր համար, սոցիալիստական հայրենիքի բարորության համար։ Բանվոր դասակարգի առաջավոր տարրերը հսկայական աշխատանք են կատարում վերադաստիարակելու պրոլետարիատի հետամնաց շերտերը, վերափոխելու բանվորների նոր կադրերը, վոր ամեն տարի ներհոսում են մեր սոցիա-



լիստական արդյունաբերության մեջ։ Գյուղից յեկած բանվորներն իրենց հետ բերում են մանր բուրժուական հայացքների և սովորությունների մնացորդներ, վոր արմատացել են անհատական մանր տնտեսության շրջապատում։ Մանր բուրժուական մնացորդներն ու ազդեցությունները բանվոր դասակարգի շրջանում տանում են դեպի պարապուրդները, դեպի արտադրական դիսցիպլինայի խախտումն։ Բանվորական միջավայրի մեջ են ներհոսում քաղաքի մանր բուրժուական տարրերի յերեխաներ (ծառայողների, նախկին մանր առևտրականների), ֆաբրիկաներն ու գործարաններն են սողոսկում նաև մեզ համար խորթ շերտեր (կուլակային և բուրժուական միջավայրի մարդիկ)։ Բանվորա-

ԱՆԳՐԱԳԵՏ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ԴԵՊԻ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒԼՏՈՒՐԱՆ




Մինչև պատերազմը ազգաբնակության 4/5 մասն անգրագետ էր։ Հնգամյակի վերջին ազգաբնակության 9/10 մասից ավելին գրագետ են։

ԽՍՀՄ-Ի ԲՈՒՀԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵ-
ՐԻ ԹԻՎԸ (ՀԱԶԱՐՆԵՐՈՎ)




Հնգամյակի ընթացքում ԽՍՀՄ-ի բուհերում սովորողների թիվը շատացել է գրեթե 6 անգամ

կան կադրերի այդ բազմատարր լինելը հիմք է դառնում, վոր ավելի հետամնաց բանվորների շրջանը ներթափանցեն խորթ հայացքներ։

Պայքարն հանուն բանվորական նոր կադրերի դաստիարակման, պայքարն հանուն մանր բուրժուական մնացորդների վերացման, վոր նրանք բերում են իրենց հետ, նրանց սոցիալիստական հասարակության գիտակից մարտիկներ դարձնելու համար, սոցիալիստական ձեռնարկության նկատմամբ իսկական տիրոջ վերաբերմունք մշակելու համար մղվող պայքարը կարևորագույն խնդիր է։ Հարվածայնությունը, սո-

ցիալիստական մրցումը, ձեռնարկության արտադրական վողջ կյանքին ակտիվորեն մասնակցելը, արտադրական պլանների կատարման և գերակատարման համար անձնվեր պայքարը—սրանք են այն ձևերը, վորոնցով արտահայտվում է նոր կոմունիստական վերաբերմունքը դեպի աշխատանքը:

Վճռական պայքար անցյալի բոլոր մնացորդների դեմ, մանր բուրժուական բոլոր արտահայտությունների դեմ, հետամնաց բանվորների մանր-բուրժուական տատանվողականության դեմ—այս ամենը հանդիսանում է դեպի աշխատանքը կոմունիստական վերաբերմունք ստեղծելու անհրաժեշտ պայման: Հաղթահարել կապիտալիզմի մնացորդները մարդկանց գիտակցության մեջ (սորկական վերաբերմունք դեպի աշխատանքը, պրոլետարական դիսցիպլինայի խախտում, վիրավորական վերաբերմունք դեպի կինը, պրոլետարական ինտերնացիոնալ համերաշխության անբավարար զարգացած գիտակցություն, կրոնական նախապաշարումներ, անհատապաշտություն, հարբեցողություն և այլն) կարևորագույն քաղաքական խնդիր է՝ յերկրորդ հնգամյակի ընթացքում:

Կառուցել անդասակարգ սոցիալիստական հասարակություն—նշանակում է յերկրի վողջ աշխատավոր բնակչությունը դարձնել սոցիալիզմի ակտիվ և գիտակից կառուցողներ:

Քաղաքի և գյուղի աշխատավորության սոցիալիստական վերադաստիարակությունը պրոլետարական դիկտատուրայի կարևորագույն խնդիրներից մեկն է: Պրոլետարիատը չի լուծվում փոշիացած մանր-բուրժուական մասսայի մեջ, ընդհակառակը, նա աշխատավոր գյուղացիներից, տնայնագործներից կոփում է սոցիալիստական շինարարության գիտակից մասնակիցներ:

Պրոլետարիատն արդեն զգալի հաջողություններ է ձեռք բերել աշխատավոր գյուղացիության սոցիալիստական վերադաստիարակման գործում: Կոլտնտեսականի վերադաստիարակման համար մղվող հետագա պայքարը, պայքարը մանր սեփականատիրոջ մնացորդների դեմ, կոլտնտեսական մասսաներից սոցիալիստական շինարարության գիտակից, ակտիվ մասնակիցներ կոփելու համար, կատարվի այնքան հաջող, վորքան արագ և լավ ծավալվի գյուղատնտեսության հետագա մեքենայացումն ու էլեկտրիֆիկացիան, մեքենա-տրակտորային կայանների շինարարությունը:

Լենինն ասում է. «Մանր հողագործին վերափոխելու գործը, նրա վողջ հոգեբանության և սովորույթների վերամշակումը մի գործ է, վոր կպահանջի սերունդներ: Վճռել այդ հարցը մանր հողագործի նկատմամբ, առողջացնել, այսպես ասած, նրա վողջ հոգեբանությունը կարող է միայն նյութական բազան, տեխնիկան, մասսայական մաշտա-



բով տրակտորների գործադրումը յերկրագործության մեջ և էլեկտրիֆիկացիան մասսայական չափերով»:

Ընկ. Ստալինը զարգացնելով Լենինի այդ միտքը համապատասխան կոլտնտեսական մասսայական շարժման պայմանների՝ ասում է. «Կոլտնտեսությունների մեծագույն նշանակությունը հենց այն է, վոր նրանք հիմնական բազա յեն հանդիսանում մեքենաներ և տրակտորներ յերկրագործության մեջ կիրառելու համար, վոր նրանք գյուղացուն վերափոխելու համար կազմում են հիմնական բազա, նրա հոգեբանությունը պրոլետարական սոցիալիզմի վոգով վերամշակելու համար»:

Լենինյան կուսակցությամբ ղեկավարվող պրոլետարական պետությունը քաղաքի և գյուղի մասսաների մեջ դաստիարակում է նոր վերաբերմունք դեպի հանրային սեփականությունը: Կապիտալիստական կողոպտիչ կարգերը շահագործվողների մեջ ստեղծում են ատելության զգացմունք դեպի սեփականությունը: Խորհրդային պետությունը սեփականազրկելով սեփականազրկողներին (էքսպրոպրիացիայի յենթարկելով էքսպրոպրիատորներին) և մասնավոր սեփականությունը հանրային

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԸ (ԲԱՆՖԱԿՆԵՐԸ) ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆ ԵՆ




1927 թ. մինչև 1932 թ. բանֆակներում սովորողների քանակն ավելացել է ավելի քան 10 անգամ (50 հազարից մինչև 575 հազար մարդ):

դարձնելով, սոցիալիզմ կառուցողներին վարժեցնում է այն գիտակցության, վոր հանրային սեփականությունը (պետական, կոլտնտեսական, կոոպերատիվային) հանդիսանում է խորհրդային կարգերի հիմքը, վոր նա սրբազան է և անձեռնմխելի և վոր այն մարդիկ, վորոնք նրա վրա հարձակվելու փորձ կանեն, պետք է դիտվեն վորպես ժողովրդի թշնամիներ:

«Դասակարգերի լրիվ վոչնչացման համար,—սովորեցրել է մեզ Լենինը—պետք է տապալել վոչ միայն շահագործողներին, կալվածատերերին և կապիտալիստներին, պետք է վոչ միայն վերացնել արտադրու-

թյան միջոցների նկատմամբ բոլոր տեսակի մասնավոր սեփականությունը, այլև պետք է վոչնչացնել ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև յեղած տարբերությունը»: Այդ գործը շատ դժվարին է. վորպեսզի այդ իրագործվի, պետք է յերկրի արտադրական ուժերի և կուլտուրական մակարդակի հսկայական աճ, աշխատանքի արտադրողականության վերելք: Կուսակցությունը յերկրորդ հնգամյակի խնդիրն է համարում ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտումը, աշխատանքի արտադրողականության հետագա վերելքը արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, ընդհանուր գրագիտության իրագործման ստուգումը, տեխնիկական կրթության վողջ գործի բարձրացումը: Այս ամենն ի մի առյալ նշանակում է ստեղծել նախադրյալներ՝ վոչնչացնելու ֆիզիկական և մտավոր աշխատանքի հակադրությունը:

Սակայն այս խնդրի լիակատար լուծումը դուրս է գալիս յերկրորդ հնգամյակի սահմաններից:

Դասակարգերի վոչնչացման ճանապարհը դասակարգային կատաղի պայքարի ճանապարհն է: Կուլակությունը, վոր վոչնչացվում է իբրև դասակարգ, բուրժուական տարրերի մնացորդները համառ դիմադրություն են ցույց տալիս հանդեպ սոցիալիստական հարձակողականի: Յերկրում վոչ միայն չի դադարում դասակարգային պայքարը, այլ առանձնապես առանձին ճակատամասերում, առանձին փուլերում նա ե՛լ ավելի յե սրվում: Աջ ոպորտունիստական դատողությունները այն մասին, թե յերկրորդ հնգամյակում կլինի ավելի «սահուն» զարգացած և առանց պայքարի զարգացման ընթացք, մի փորձ է վերակենդանացնելու կուսակցության կողմից արդեն ջախջախված «կուլակի դեպի սոցիալիզմ—խաղաղ կերպով—ներաճելու» տեսությունը, պրոլետարական դիկտատուրայի ընթացքում դասակարգային պայքարի մարելու տեսությունը:

«Պրոլետարիատի դիկտատուրան համառ պայքար է—արյունոտ և անարյուն, բռնի և խաղաղ, պատերազմական և տնտեսական, մանկավարժական և վարչական, վոր մղվում է հին հասարակության ուժերի և տրադիցիաների (սովորույթների) դեմ», այսպես է սովորեցրել Լենինը:

Մի՞թե մանր բուրժուական պոկողական տրամադրություններից դեռևս չազատագրված նոր բանվորների սոցիալիստական վերադաստիարակման համար, նրանց՝ սոցիալիստական ձեռնարկության համար գիտակից աշխատավորներ դարձնելու նպատակով մղվող պայքարը դասակարգային պայքարի յուրահատուկ ձև չէ:

Ով մտածում է, թե այդ կադրերի դաստիարակությունը, նոր աշխատանքային դիսցիպլինայի համար մղվող պայքարը կդնի ինքնահո-



սով, նա խորապես սխալվում է, իսկ ով քարոզում է այդ, նա ոպորտունիստ է:

Մի՞թե կոլտնտեսականին սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ շինարար դարձնելու պայքարը դասակարգային պայքարի յուրահատուկ ձև չէ: Կոլտնտեսություններում կան դասակարգային պայքարի տարրեր: Այդ տարրերն արտահայտվում են իրենց տեղական շահերը համայնական շահերին հակադրելու գծով (հացի պաշարը թաքցնելը, մթերման պլանների չկատարելը), արտահայտվում են կուլակների և յենթակուլակային տարրերի կողմից կոլտնտեսական արտադրությունը վիժեցնելու, նրա բարիքն հափշտակելու գծով: Կոլտնտեսականի սոցիալիստական վերադաստիարակման համար մղվող պայքարը, անդասակարգ հասարակություն կառուցելու ճանապարհին, դասակարգային պայքարի ձևերից մեկն է:

Վոչ թե կապիտալիստների, կուլակների դեպի սոցիալիզմ վերաճելով, այլ կուլակի, նրա ազդեցության, կապիտալիզմի մնացորդների և սովորույթների դեմ պայքարելով կարելի յե մինչև վերջը հասցնել անդասակարգ հասարակության կառուցումը, սոցիալիզմի կառուցումը:

## ԲԱՇԽՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Սոցիալիզմի ժամանակ, այսինքն՝ կոմունիզմի զարգացման առաջին փուլում, աշխատանքի արտադրանքի բաշխումը կատարվում է համաձայն աշխատանքի և վոչ թե ըստ պահանջի:

Մեր ծրագիրը—Համկոմկուսի ծրագիրը—ասում է, վոր «ձգտելով դեպի ամեն տեսակի աշխատանքի հավասար վարձատրումն ու լիակատար կոմունիզմը, խորհրդային իշխանությունը չի կարող խնդիր առաջադրել այդ հավասարությունն իրագործել ներկա մոմենտում, անմիջապես, յերբ կապիտալիզմից դեպի կոմունիզմն անցնելու առաջին քայլերն են արվում»: Այնքան ժամանակ, քանի դեռ մենք գտնվում ենք կոմունիզմի առաջին փուլում—սոցիալիստական հասարակության մեջ, անհրաժեշտ է աշխատանքի և սպառման չափի նկատմամբ հասարակության և պետության կողմից խստագույն կոնտրոլ:

Վարձատրությունը կատարվում է համաձայն ծախսված աշխատանքի քանակի ու վորակի:

Լավ աշխատանքը, ավելի խտացած որը, մեքենայի և գազգյահի ավելի լրիվ ոգտագործումը, ներքին միջոցների մոբիլիզացիայի կարողությունը, գյուտարարությամբ պետությանն ոգնելու կարողությունը—այս ամենը պիտի վարձատրվեն բարձր ու ավելի լավ, քան վատ աշխատանքը: Ավելի ծանր աշխատանքը պետք է ավելի լավ վարձատրվի, քան թեթև աշխատանքը:

Հավասարեցումը մարքսիզմ-լենինիզմի հետ վոչ մի ընդհանուր բան չունի: «Ձախ» հավասարեցումը *մանր բուրժուական սկզբունք է, վոր ձեռնտու յե դասակարգային թշնամուն: Խորհրդային պետությունն իրենց գործի մասնագետներին, ավելի փորձվածներին, ավելի վորակավորներին վարձատրում է ավելի լավ, քան նրանց, ովքեր կամ չեն տիրապետում կամ անբավարար են տիրապետում գործի տեխնիկային:*

Խորհրդային պետությունը, համաձայն կուսակցության ծրագրի, վոչ միայն չի հրաժարվում դրամական և նյութական պարգևատրման սիստեմից, այլ ավելի հաջող, հարվածային, կազմակերպչական աշխատանքի համար ամեն կերպ խրախուսում է այդ սիստեմը:

Սակայն հավասար աշխատանքն էլ դեռևս չի նշանակում հավասար նյութական պայմաններ:

*«Առանձին մարդիկ,—մատնանշում է Լենինը,—հավասար չեն. մեկն ավելի ուժեղ է, մյուսն ավելի թույլ, մեկն ամուսնացած է, մյուսը վոչ, մեկը շատ յերեխաներ ունի, մյուսը քիչ: Հետևաբար իրավացիություն և հավասարություն կոմունիզմի առաջին փուլը դեռևս չի կարող տալ: Նյութական դրության տարբերությունները դեռ մնում են:* Սակայն կոմունիզմի առաջին փուլում արդեն,*—ընդգծում է Լենինը,—հնարավոր չէ մարդու շահագործումը մարդու կողմից, վորովհետև չի կարելի ձևել արտադրության միջոցները, ֆաբրիկաները, մեքենաները, հողերը և այլն ու դարձնել մասնավոր սեփականություն»:*

*Այդ փուլում տիրապետում է* «ով չի աշխատում, նա չի ուտում» *պրոլետարական սկզբունքը, իրագործվում է—«հավասար քանակի աշխատանքի համար հավասար քանակի մթերք» սոցիալիստական սկզբունքը:*

*Ընկ. Ստալինն այդ առթիվ այսպես է ասում. «Քանի դեռ դասակարգերը վերջնականապես վոչնչացված չեն և քանի աշխատանքը գոյության համար կյանքի առաջին պահանջից չի դարձել հասարակության օգտին կամավոր աշխատանք, այնքան ժամանակ մարդիկ պիտի վարձատրվեն համաձայն իրենց կատարած աշխատանքի՝ «յուրաքանչյուրից՝ ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր աշխատանքի»—այսպես է սոցիալիզմի մարքսիստական ֆորմուլը, այսինքն՝ կոմունիզմի առաջին փուլի, կոմունիստական հասարակության առաջին փուլի ֆորմուլը: Միայն կոմունիզմի բարձրագույն աստիճանում յուրաքանչյուրն աշխատելով համաձայն իր ընդունակությունների, պետք է իր աշխատանքի համար ստանա համաձայն իր պահանջների՝ «յուրաքանչյուրից ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ իր պահանջների»:*

Միայն արտադրական ուժերի զարգացման բարձրագույն աստիճա-



նում, յերբ տեխնիկայի և արտադրության աճը լիակատար կերպով կապահովի վողջ մարդկությունն ապահովող մթերքների բավարար քանակով, միայն այն ժամանակ, յերբ վողջ աշխատավոր բնակչությունը ձեռք կբերի գիտակից կոմունիստական աշխատանքի ունակություններ, մենք ընդհուպ կմոտենանք լիակատար հավասարության իրագործմանը, աշխատանքի արդյունքի կոմունիստական բաշխմանը: *Միայն այն ժամանակ, յերբ աշխատանքը յուրաքանչյուրի համար կդառնա ուրախություն և անհրաժեշտություն, յերբ աշխատավորներն իրենք կամավոր և ինքնուրույն կերպով կհետամտեն նրանց, ովքեր խուսափում են աշխատանքից, միայն այն ժամանակ՝ կոմունիզմի բարձրագույն փուլում—հասարակությունն իր դրոշի վրա կգրի. «Յուրաքանչյուրից ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ իր պահանջների»:*

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

*«Պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան,— ասում է Մարքսը,—անցումն է պետությունից դեպի վոչ-պետություն—վորևէ այլ բան նա չի կարող լինել»: Այս նշանակում է, վոր պրոլետարիատի դիկտատուրան կապիտալիստական պետությունից դեպի կոմունիստական հասարակություն անցման շրջանի պետություն է: Պրոլետարական պետությունը դասակարգային կատաղի պայքարում հաղթանակող պրոլետարիատի միակ հնարավոր հեղափոխական իշխանությունն է, վոր պետք է նրան՝* խորտակելու *հեղափոխության կողմից տապալված կալվածատերերի և կապիտալիստների դիմադրությունը,* վերացնելու *կապիտալի իշխանության վերականգնման ամեն տեսակի փորձերը: Անկման շրջանի պետությունը—պրոլետարական դիկտատուրան—նրա համար է հարկավոր, վորպեսզի կազմակերպվի սոցիալիզմի շինարարությունը վողջ աշխատավորությունը պրոլետարիատի շուրջն համախմբելու վողով և այդ աշխատանքը տարվի դասակարգերը վերացնելու, վոչնչացնելու ուղղությամբ:* Պրոլետարական դիկտատուրան հարկավոր է անդասակարգ հասարակություն ստեղծելու համար:

*Քանի դեռ հնարավոր են տապալված դասակարգերի իրենց իշխանությունը վերականգնելու փորձերը (վնասարարություն, դավեր, մահափորձեր, պետական ապարատի առանձին օղակների նկատմամբ բուրժուական ազդեցություն, կոլտնտեսությունների վրա կուլակային ազդեցություն), հարկ չկա խոսելու պրոլետարական դիկտատուրայի պետության մահացման մասին: Պարզ է, վոր քանի դեռ դասակարգերը վերջնականապես վոչնչացված չեն, իսկ կապիտալիստական, դասակարգային հասարակության մնացորդները մարդկանց վարմունքի և գիտակցության մեջ դեռևս վերացված չեն, ի վերջո, քանի դեռ*

Խորհրդային Միությունը գտնվում է կապիտալիստական ողակման մեջ,—մինչ այն ժամանակ խոսք չի կարող լինել պրոլետարական դիկտատուրայի վորևէ թուլացման մասին:

Պրոլետարական պետությունն հարկավոր է սոցիալիզմի վողջ շրջանի համար, վորովհետև միայն պրոլետարիատի պետական իշխանությունն է, վոր կարող է ավարտել անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումը, իրականացնել աշխատավորության սոցիալիստական վերադաստիարակման հարցը և ապահովել հսկողությունը աշխատանքի և սպառման չափի նկատմամբ: «Պետության լիակատար մահացման համար,—ասում է Լենինը,—հարկավոր է լիակատար կոմունիզմ»:

Կապիտալիզմից կոմունիզմի անցման շրջանի վերջավորությունը միայն պիտի նշանակի այդ շրջանի պետության—պրոլետարական դիկտատուրայի աստիճանական մահացումը:

Այդ աստիճանական մահացումը կլինի պրոլետարական պետության ճնշման բոլոր որգանների վերացման յերկարատև պրոցես— պրոլետարական դիկտատուրայի աստիճանական անցում դեպի նոր, անպետական հասարակության բարձր տիպ, դեպի կոմունիստական հասարակություն:

Պետական ճնշման ապարատը կմեռնի: Ձևափոխվում և մահանում են այն որգանները, վորոնք չափավորում են աշխատանքն և բաշխումը, մեռնում են դատական և պատժիչ որգանները (դատարանը, միլիցիան և այլն), իսկ վերջում կվերանա նաև պրոլետարիատի ամենասուր զենքը՝ նրա Կարմիր բանակը:

Սակայն սոցիալիստական հասարակություն կառուցել, բարձրացնել այն ավելի բարձր աստիճանի վրա, մեր շինարարությունը վերջնական նպատակին՝ կոմունիզմին հասցնել կարելի յե միայն պրոլետարական դիկտատուրայի ուժեղացման ճանապարհով:

«Մենք պետության մահացման կողմնակիցներ ենք,—ասաց ընկ. Ստալինը կուսակցության XVI համագումարում,—միաժամանակ մենք պրոլետարական դիկտատուրայի ուժեղացման կողմնակիցներ ենք, վորը մինչև այժմ գոյություն ունեցող պետական իշխանություններից ամենահզորն է: Պետական իշխանության բարձրագույն զարգացում, պետական իշխանության մահացման պայմաններ նախապատրաստելու նպատակով—ահա մարքսիստական բանաձևումը»:



## ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ

Մեր յերկրում սոցիալիզմի շինարարության գործում մենք ձեռք ենք բերել հսկայական նվաճումներ: Մենք խնդիր ենք դնում յերկրորդ հնգամյակում կառուցել անդասակարգ սոցիալիստական հասարակություն: Վաղուց չէ, վոր տրոցկիստները Զինովյևի և Կամենևի հետ միասին փորձում էյին կուսակցության վզին փաթաթել մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության տեսությունը:

Սոցիալիզմի՝ մեկ յերկրում հաղթանակելու հարցը Լենինի կողմից առաջադրվել է դեռ 1905 թվին. «Տնտեսական և քաղաքական զարգացման անհամաչափությունը կապիտալիզմի անխախտ օրենքն է: Սրանից հետևում է, վոր սոցիալիզմի հաղթանակն հնարավոր է սկզբում միքանի և նույնիսկ մի, առանձին վերցրած կապիտալիստական յերկրում: Այդ յերկրի հաղթանակող պրոլետարիատը էքսպրոպրիացիայի յենթարկելով կապիտալիստներին և իր համար սոցիալիստական արտադրություն կազմակերպելով, կկանգներ մնացած կապիտալիստական աշխարհի դեմ, իրեն կողմը քաշելով ուրիշ յերկրների ճնշվող դասակարգերը, նրանց մեջ կապիտալիստների դեմ ապստամբություն բարձրացնելով, անհրաժեշտության դեպքում դուրս գալով նաև նրանց պետության դեմ նույնիսկ ռազմական ուժով»:

Կապիտալիստական տնտեսությունը զարգանում է անհամաչափ: Տարբեր յերկրներ տարբեր ժամանակ են կանգնել կապիտալիստական զարգացման ճանապարհին, նրանք զարգացել են տարբեր տեմպերով, հասնելով և անցնելով մեկը մյուսից: Սակայն կապիտալիստական զարգացման իմպերիալիզմի դարաշրջանի անհամաչափությունը խստորեն տարբերվում է մինչկապիտալիստական շրջանի զարգացման անհամաչափությունից: «Այն ժամանակ—ասում է ընկ. Ստալինը,—կապիտալիզմի զարգացումն ընթանում էր շատ թե քիչ սահուն.... և միքանի յերկրներ առաջ էյին անցնում մյուսներից յերկար ժամանակի տևողությամբ առանց թռիչքների և առանց համաշխարհային մասշտաբի ռազմական պարտադիր ընդհարումների»:

Իմպերիալիզմի դարաշրջանում կապիտալիստական զարգացման անհամաչափությունը խստորեն ուժեղանում, սրվում է:

«Անհամաչափ զարգացման օրենքը իմպերիալիզմի շրջանում—ասում է ընկ. Ստալինը—նշանակում է միքանի յերկրների թռիչքային զարգացում մյուսների նկատմամբ, համաշխարհային շուկայից վորոշ յերկրների արագ դուրս մղումը մյուսների կողմից, պարբերական վերաբաժանում արդեն բաժանված աշխարհի՝ պատերազմական ընդհա-

րումների և բաղխումների կարգով, կոնֆլիկտների խորացումն ու սրումն իմպերիալիզմի լագերում, համաշխարհային կապիտալիզմի ճակատի թուլացում»:

Ցերկրների թռիչքային զարգացումն իմպերիալիզմի ժամանակ բղխում է հենց իմպերիալիզմի էյությունից: Այն յերկիրը, վոր ավելի ուշ է մտել արդյունաբերական զարգացման ուղին, կարող է ավելի արագ զարգանալ, քան այլ հին յերկրներ: Օգտագործելով տեխնիկայի նորագույն նվաճումները, զարգացնելով իր տնտեսությունն ի հաշիվ արտաքին շուկաների շահագործման, կարող է արագորեն հասնել և անցնել տասնյակ տարիներով զարգացող հին յերկրների արդյունաբերությանը: Այսպես Ճապոնիան և ՀԱՄՆ հասան Անգլիային, Ֆրանսիային և յեվրոպական այլ յերկրներին: Ցերիտասարդ իմպերիալիստական յերկրների արագ աճը հասցնում է աշխարհի նոր վերաբաժանման պայքարին այն պետությունների միջև, վորոնք առաջ արդեն բաժանել եյին աշխարհը:

Սրանից էլ բղխում են իմպերիալիստական պատերազմների անխուսափելիությունը, ռազմական խոշոր ընդհարումներն ու բաղխումները: Շնորհիվ սրա թուլանում է համաշխարհային իմպերիալիզմի միասնական շղթայի այս կամ այն ողակը, այս կամ այն ճակատամասը:

Այսպիսով զարգացման անհամաչափությունը հասցնում է մեզ պատռելու իմպերիալիզմի շղթան այն տեղում, վորը ամենաթույլն է: Այն յերկրի բանվոր դասակարգը, վորտեղ իմպերիալիզմի ճակատն ավելի թույլ է, պատռում է ճակատը, տապալում է կապիտալիստների իշխանությունը և կառուցում է սոցիալիստական տնտեսություն:

«1917 թվին—ասում է Ստալինը—իմպերիալիստական ճակատի շղթան թույլ եր Ռուսաստանում, քան մյուս յերկրներում, և հենց այդտեղ էլ նա պատռվեց ու յելք տվեց պրոլետարական հեղափոխությանը»:

Պրոլետարիատը կարող է կառուցել սոցիալիզմ մեկ յերկրում: Մեկ յերկրում սոցիալիզմ կառուցել՝ նշանակում է ներքին ուժերով հաղթահանակել սեփական բուրժուազիային, դարձնել մանր ապրանքարտադրողին, գյուղացուն և արհեստավորին սոցիալիստական աշխատավոր, պոկել կապիտալիզմի արմատները, վոչնչացնել դասակարգերը և նրանց առաջացման բոլոր հնարավորությունները: 1923 թվին գրած «Կոոպերացիայի մասին» բրոշյուրում Լենինը գրում է. «Իսկապես պետության իշխանությունը արտադրության բոլոր խոշոր միջոցների նկատմամբ, պետական իշխանությունը պրոլետարիատի ձեռքին, այդ



մանր ու մանրագույն գյուղացիպրոլետարիատի դաշինքը միլիոնավոր
պրոլետարիատի այդ ղեկավարների հետ, գյուղացիների նկատմամբ
ների հետ, գյուղացիների նկատմամբ պրոլետարիատի այդ ղեկավարումը
րության ապահովումը և այլն,—մի՞թե այս այն ամենն, այն անհրաժեշտը չէ, ինչ անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարակու-
ժեշտը չէ, ինչ անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարակու-
թյուն կառուցելու համար»:
Մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու համար անհրաժեշտ բոլոր
պայմանները առկա յեն: Խորհրդային իշխանությունն ոգավում է բան-
վորական և գյուղացիական միլիոնավոր մասսաների ոժանդակությու-
նից: Մեր յերկրի բնական հարստությունները անսպառ են (յերկաթ,
ածուխ, նավթ, հաց, բամբակ): Մեր սոցիալիստական շինարարության
բայլշեվիկյան տեմպերը իրեն հավասարը չեն ունեցել համաշխարհային
պատմության մեջ: Մեր խորհրդային սիստեմը չունի կապիտալիզմ,
հիվանդությունները, նրա մրցությունը, արտադրության անարխիան,
ճգնաժամերն ու գործազրկությունը: Մեր խորհրդային սիստեմը տա-
նում է պլանային քաղաքականություն, պլանաչափ կերպով կուտա-
կում է միջոցներ և ճիշտ կերպով բաշխում է այն ժողովրդական տնտե-
սության ճյուղերի միջև: Մեր արդյունաբերությունն ապահովում է
ամենակատարելագործված տեխնիկայի մուծումն ու աշխատանքի
չտեսնված արտադրողականությունը:
Բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ—պրոլետա-
րական դիկտատուրայի այդ բարձրագույն ձևը— անպարտելի յե:
Գյուղացիության հիմնական զանգվածները ներգրավված են սոցիա-
լիստական շինարարության գործին: Հաչառակ հակահեղափոխական
տրոցկիստների պնդումների՝ մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու
անհնարինության մասին, մեր յերկրի բանվոր դասակարգը լենինյան
կուսակցության ղեկավարությամբ, ամբողջ աշխարհի բանվորության
և աշխատավորության ոժանդակությամբ ավարտել է սոցիալիզմի հիմքի
կառուցումը. մենք մտել ենք սոցիալիզմի շրջանը, նրա հաղթանակը
թե գյուղում, թե քաղաքում լիապես ապահովված է:

## 4. ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՓՈՒԼԸ

«Մեր կուսակցությունը,—ասում է Լենինը,—նայում է հեռուն.
սոցիալիզմն անխուսափելիորեն վերաճելու յե դեպի կոմունիզմ, վորի
դրոշի վրա գրված է. «յուրաքանչյուրին ըստ ընդունակության, յուրա-
քանչյուրին ըստ պահանջի»:
Մեր կուսակցությունը հենց նրա համար էլ կոմունիստական կու-
սակցություն է կոչվում, վոր մենք վերջնական նպատակ ենք դնում
կառուցելու կոմունիզմ, հաստատելու կոմունիստական կարգեր:

Հասկանալի յե, վոր սոցիալիզմից կոմունիզմ ճանապարհը ևս կտարվի միքանի, իրար հետ սերտորեն կապված աստիճաններով: Սակայն այդ չի լինի այն անցման շրջանը, վորը տանում ե կապիտալիզմից դեպի սոցիալիզմ, մի շրջան, վորը լի յե հին բուրժուական կարգերի ազդեցություններով ու մնացորդներով: Այդ աստիճաններն արդեն կտանեն վոչ թե կապիտալիզմից, այլ սոցիալիզմից. կոմունիզմը կզարգանա իր իսկ սեփական բազայի, սոցիալիզմի բազայի վրա:

Անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու միջոցին կսկսեն յերևալ կոմունիստական հասարակության հիմնական գծերը: Կոմունիզմն իբրև հասարակության բարձրագույն տեսակ կարող ե զարգանալ միայն այն ժամանակ, յերբ լիակատար կերպով ամրապնդվում ե սոցիալիզմը:

Ընկ. Ստալինը ապագա կոմունիստական հասարակության մասին հետևյալ բնութագիրն ե տալիս.

«Կոմունիստական հասարակության ընդհանուր բնութագիրը տրված ե Մարքսի, Ենգելսի և Լենինի աշխատություններում: Յեթե տանք կոմունիստական հասարակության անատոմիան հակիրճ ձևով, այն դեպքում նա կլինի այսպիսի մի հասարակություն. ա) վորտեղ չի լինի արտադրության գործիքների և արտադրության միջոցների մասնավոր սեփականություն, այլ կլինի հանրային, կոլեկտիվ սեփականություն, բ) վորտեղ չի լինի դասակարգ և պետական իշխանություն, այլ կլինեն ինդուստրիայի և գյուղատնտեսության աշխատավորներ, վորոնք տնտեսապես կառավարվում են, վորպես աշխատավորների ազատ ասոցիացիա. գ) վորտեղ ժողովրդական տնտեսությունը կազմակերպված ե համաձայն պլանի, վորը հիմնված կլինի բարձրագույն տեխնիկայի վրա թե ինդուստրիայի, թե գյուղատնտեսության բնագավառում. դ) վորտեղ չի լինի քաղաքի և գյուղի, ինդուստրիայի և գյուղատնտեսության միջև հակադրություն. ե) վորտեղ մթերքները կբաշխվեն համաձայն ֆրանսական հին կոմունիստների սկզբունքի—«յուրաքանչյուրից ըստ ընդունակության, յուրաքանչյուրին ըստ պահանջի», զ) վորտեղ գիտությունն ու տեխնիկան կոգտվեն այնպիսի պայմաններից, վոր լիապես բավարար լինեն դրանց լրիվ ծաղկման համար. է) վորտեղ անհատը, վորն ազատ ե մի կտոր հացի հոգսից և «աշխարհի հզորներին» խոնարհվելու անհրաժեշտությունից, կդառնա իսկապես ազատ և այլն և այլն»:

Այստեղ, կոմունիստական հասարակության այս հակիրճ ստալինյան բնորոշման մեջ ցույց ե տրված, թե ինչ ուղղությամբ պիտի կատարվի սոցիալիզմի—կոմունիզմի առաջին փուլի վերելքը դեպի նրա բարձրագույն փուլը:



Ինչպես վոր կոմունիստները վոչինչ չեն հնարում, չեն զբաղվում հասարակության կառուցման պլաններ հորինելով, այլ յելնելով կապիտալիստական կարգերի զարգացման պայմաններից, կազմակերպում են սոցիալիզմի շինարարությունը, նույնպես նաև այս դեպքում կոմունիստները չեն զբաղվում կոմունիզմի մասին «գուշակություններ» անելով:

Յելնելով սոցիալիզմի նվաճումներից, արդեն նրա հիման վրա նրանք նշում են կոմունիզմի առաջին փուլի հետագա զարգացման ճանապարհը դեպի լիակատար կոմունիստական կարգեր:

## ԿՈՄՈՒՆԻԶՄԸ ԳԻՏԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՅՆ ՄԻ ՏԵՍԱԿԸ ՅԵՎ ԱՅԴ ՀԱՆՐԱՅԻՆ, ԿՈԼԵԿՏԻՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե

Յերկրորդ հնգամյակում անդասակարգ սոցիալիստական հասարակության ստեղծելը նախատեսում ե գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման վերջնական ավարտումն ու նրա հիման վրա կուլակության լիակատար վերացումն իբրև դասակարգ: Սակայն կոլտնտեսական շինարարության արտելային փուլը նշանակում ե հանրայնացված տնտեսության հետ մեկտեղ պահպանել նաև կոլտնտեսականի լրացուցիչ, անհատական տնտեսությունը:

Մերձկալվածային հողերը, մանր անասունները, կաթնատու անասունների զգալի մասը, թռչունները, բանջարանոցները մնում են յուրաքանչյուր կոլտնտեսականի սեփականություն, վորն իր աշխատանքի արտադրանքն իրավունք ունի դուրս տանել վաճառքի շուկա:

Յերկրորդ հնգամյակում մենք դեռ մնում ենք նեպի ռելսերի վրա, չնայած նրա վերջին շրջանն ենք ապրելու, փողը, տնտհաշվարկը, խորհրդային կոլտնտեսային առևտուրը, մանր տնայնագործական արտադրությունը և այլն պետք ե և դեռ կխաղան շատ նշանակալի դեր:

Միայն սոցիալիզմի արտադրական ուժերի հետագա աճման, տեխնիկական վերակառուցման և վողջ ժողովրդական տնտեսության ելեկտրիֆիկացիան ավարտելու, սոցիալիստական կուլտուրայի աճի շնորհիվ կմեռնի մասնավոր սեփականությունն իր բոլոր մնացորդներով, վոր նա բերել ե կապիտալիստական աշխարհից: Կոմունիստական հասարակությունը կճանաչի միայն մի սեփականություն—հանրային, կոլեկտիվ սեփականություն:

Արդեն սոցիալիզմի շրջանը, ուր մտել ե Խորհրդային Միությունը, որինակ ե տալիս այն բանի, թե պլանային ժողովրդական տնտեսության վարելու դեպքում ինչպիսի չտեսնված տեմպերով են աճում արտադրությունը ու ապրանքների սպառումը:

*Արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրական ուժերը կհասնեն այնպիսի հսկայական չափերի, կմշակվեն բնական այնպիսի հսկայական հարստություններ, տեխնիկան իր բոլոր տեսակներով կհասնի այնպիսի զարգացման, մարդիկ սոցիալիզմի ժամանակ կհասնեն աշխատանքի այնպիսի արտադրողականության, որ* հասարակությունը կարտադրի բավականաչափ մթերքներ, որպեսզի բավարարի իր բոլոր անդամների պահանջները:

*Արտադրական ուժերի այնպիսի զարգացման միջոցին, յերբ կվերանա աշխատանքի չափի և սպառման նկատմամբ կոնտրոլի կարիքը,* հնարավոր կդառնա կոմունիզմի բարձրագույն սկզբունքի իրագործումը. *«Յուրաքանչյուրից ըստ ընդունակության, յուրաքանչյուրին ըստ պահանջի»:*

### ԿՎԵՐԱՆԱ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
### ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ,
### ՖԻԶԻԿԱԿԱՆ ՅԵՎ ՄՏԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԵՎ

*Գյուղատնտեսության վերակառուցումը սոցիալիստական սկզբունքներով, գյուղատնտեսության արտադրության մեքենացումը, ՄՏԿ-ների կառուցումը տանում են դեպի քաղաքի և գյուղի հակադրության վերացումը,* դեպի գյուղատնտեսական աշխատանքն ինդուստրիալ աշխատանքի տեսակներից մեկը դարձնելու կողմը, *դեպի ինդուստրիալ և գյուղատնտեսական աշխատանքի միջև սերտ կապի հաստատելը, դեպի գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացումը:*

*Այդ պրոցեսն ավելի ու ավելի կկատարելագործվի և որքան բարձր կլինի սոցիալիստական տնտեսության և կուլտուրայի վերելքը, այնքան շատ նվաճումներ կլինեն այդ ճանապարհին:* Կոմունիզմի բարձրագույն փուլում վերջնականապես կանհետանա քաղաքի և գյուղի հակադրությունը: Միևնույն մարդիկ կկարողանան զբաղվել և յերկրագործությամբ և արդյունաբերական աշխատանքով: Այդ ժամանակ գյուղատնտեսության արտադրողականությունը կհասնի այնպիսի չափերի, որպիսին դեռևս չի գիտցել մարդկությունը:

*Վերջապես կհաղթահարվի մարդու միակողմանի զարգացումը (միայն մի մասնագիտություն սովորելը, միայն մի արհեստին տիրապետելը, հետաքրքրությունը դեպի մի* առանձին գործ):

*Դաստիարակության սիստեմը կտարվի բազմակողմանի զարգացած և բազմակողմանի պատրաստված մարդիկ պատրաստելու ուղղով, որի սկիզբն արդեն դրված է մեր պոլիտեխնիկական կրթության սիստեմով: Ապագա հասարակության մարդիկ կստանան բազմակողմանի կրթություն: Նրանք պատրաստ կլինեն այն բանին, որ կարողանան* 



*արտադրության մեկ ճյուղից անցնել մյուսը, համաձայն հասարակության պահանջների և նրանց սեփական հակումների:* Հակադրությունը ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև կանցնի անցյալի գիրկը:

### ԿՈՄՈՒՆԻԶՄԸ
### ԱԶԱՏ, ԱՆՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ Է

*Բնական է, որ հասարակության զարգացման այդ աստիճանին, այսինքն կոմունիզմի* բարձրագույն փուլում, պետության կարիքն, իբրև ճնշման միջոցի՝ թշնամիների և կազմալուծողների նկատմամբ, միանգամայն վերանում է: *Վատ արարքները, որ յեթե տեղի ունենան առանձին անհատների կողմից կոլեկտիվի կամ նրա առանձին անդամների նկատմամբ, կարող են վերացվել առանց պետական հարկադրական մեքենայի միջամտության: Ազատագրված լինելով կապիտալիստական ստրկությունից՝ մարդիկ աստիճանաբար կվարժվեն պահպանել հանրակեցության տարրական կանոնները, կստեղծեն նոր կանոններ և սովորություններ. այդ սովորությունները կկատարեն առանց հարկադրանքի, առանց յենթարկման, առանց հարկադրման հատուկ* ապարատի:

*Պետությունն աստիճանաբար կմահանա, կմեռնեն նաև բոլոր տեսակի հարկադրման առանձին մարմինները: Նրա տեղը կգրավի* անպետական հասարակությունը, բազմաթիվ, զանազան ազատ աշխատավորների հանրակեցության ասոցիացիան (միություն), որոնք միասին և պլանաչափ կտնօրինեն բոլոր նյութական ուժերը, բնական և կուտակված հարստությունները տնտեսության հետագա զարգացման և բոլոր արտադրական ուժերի անսահման բարձրացման նպատակով:

Չլված չափերով կբարձրանա մարդկանց բարեկեցությունը, կոմունիստական հասարակության աշխատավորները կազատվեն յերկարատև, լարված աշխատանքից: *Մարդը ոչ յոթ և ոչ էլ վեց ժամ կհատկացնի հասարակական աշխատանքին, այլ զգալի չափով պակաս ժամանակ կգործադրի այդ նպատակին: Այդ կազատի մարդկային էներգիան գիտությունների և արվեստի մեծագույն աճման համար, մարդկային պատմության մեջ չտեսնված կուլտուրական ծաղկման համար: Կոմունիզմը կստեղծի մարդկության ինտերնացիոնալ համերաշխության և յեղբայրության ամուր կապերով կապված նոր կուլտուրան, վորը կվոչնչացնի բոլոր և ամեն տեսակի պետական սահմանները (վորոնք հաստատվել էին շնորհիվ կապիտալիստական աշխարհի գազանային կարգերի): Մարդկային այդ նոր կուլտուրան ընդմիշտ կթաղե կրոնը, նախապաշարմունքները, սնոտիապաշտությունը և հզոր զարկ կտա ամեն ինչ հաղթանակող գիտության զարգացմանը:*

*Հենց այն, որ կդադարի անհատական գոյության համար մղվող*

պայքարը, վոր կիրագործվի կոմունիզմի բարձրագույն սկզբունքը աշխատանքի և սպառման մեջ, կստեղծվեն մարդկային անհատականության լիակատար ծաղկման բոլոր պայմանները: Հին բուրժուական օրենքը, վոր մարդը մարդու համար գայլ է, վերջնականապես կթաղվի, մարդիկ կլինեն ազատ այս բառի ճիշտ և լրիվ իմաստով:

Ֆրիդրիխ Էնգելսն իր հռչակավոր «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» աշխատության մեջ տալիս է աննախընթաց նկարագիրը մարդկային հանճարի ու նրա վերաբերմունքի դեպի բնությունը:

«Կյանքի բոլոր պայմանները, վոր ստեղծվել են մարդկանց կողմից և մինչև այժմ ճնշում են մարդուն, այն ժամանակ իրենք յենթարկվում են մարդուն և նրա հսկողությանը, և մարդիկ առաջին անգամ դառնում են գիտակից, բնության իսկական տերեր, վորովհետև միավորված հասարակության մեջ նրանք կլինեն իրենց սեփական արտադրական հարաբերությունների տերեր:

Նրանց սեփական հասարակական գործունեության օրենքները, վոր մինչև այժմ հակադրվում եյին նրանց, իբրև խորթ և այդ պատճառով էլ իշխում եյին նրանց վրա, կգործադրվեն մարդկանց կողմից գործի լիակատար ըմբռնումով և համաձայն նրանց հասարակական շահերի:

Հասարակական կազմակերպությանը յենթարկվելը, վորը մինչև այժմ կարծես թե նրանց վզին փաթաթվում եր բնության և պատմության կողմից, այժմ կդառնա նրանց սեփական գործը, օբյեկտիվ, նրանց համար խորթ ուժերը, վոր մինչև այժմ տիրում եյին պատմության մեջ, կընկնեն մարդկանց հսկողության տակ:

Միայն այն ժամանակ մարդիկ միանգամայն գիտակցորեն կստեղծեն իրենց պատմությունը, իսկ նրանց կողմից շարժման մեջ դրվող պատմական գործոններն ավելի ու ավելի մեծ չափով կտան նրանց իրենց համար ցանկալի արդյունքներ: Այդ կլինի մարդկության թռիչքն անհրաժեշտության թագավորությունից դեպի ազատության թագավորություն»:

## ԽՍՀՄ-Ն ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Այսպես է նաև ամբողջ մարդկության կապիտալիստական տաժանակրությունից ազատագրվելու ճանապարհը, պրոլետարիատի հաղթական ճանապարհը դեպի լիակատար անսահման ազատության թագավորությունը: Այն չափով, ինչ չափով կզարգանան հեղափոխական ճգնաժամերն ու հեղափոխական պոռթկումները կապիտալիստական յերկրներում, այն չափով էլ ավելի ու ավելի պայմաններ կստեղծվեն,



վորոնք անհրաժեշտ են կոմունիստական հասարակության լիակատար հաղթանակի համար:

Սոցիալիզմ կառուցող յերկրի դեմ կանգնած է վողջ կապիտալիստական աշխարհը, վորը ձգտում է տապալել աշխարհի միակ իշխանությունը, այն իշխանությունը, վոր իրագործում է Մարքսի, Էնգելսի և Լենինի գաղափարները սոցիալիզմի և կոմունիզմի մասին: Կապիտալիստներին անտարբեր չեն նաև, թե ինչպես մեկ կամ միքանի յերկրներում բանվոր դասակարգը գնում է դեպի կոմունիզմ:

Կապիտալիստները կանեն իրենցից կախված այն ամենը, վորպեսզի խեղդեն այդպիսի յերկրները: Այնուհանդերձ բանվորներն ու աշխատավոր մասսաները տեսնելով սոցիալիզմի կառուցումը մյուս յերկրներում, անզուսպ կերպով կնետվեն դեպի առաջ՝ պայքարելու կապիտալիզմը կործանելու և իրենց յերկրում սոցիալիզմի հաղթանակի համար:

«Միջազգային հեղափոխության հետագա զարգացման ընթացքում—ասում է ընկ. Ստալինը—կձևավորվեն համաշխարհային մասշտաբի յերկու կենտրոն՝ սոցիալիստական կենտրոն, վոր իրեն կձգի այն յերկրները, վորոնք ձգտում են դեպի սոցիալիզմ և կապիտալիստական կենտրոն, վոր իրեն կձգի այն յերկրները, վորոնք ձգտում են դեպի կապիտալիզմ: Այդ յերկու կենտրոնների պայքարը հանուն համաշխարհային տնտեսության տիրապետության՝ կվճռի կապիտալիզմի և կոմունիզմի բախտն ամբողջ աշխարհում: Վորովհետև համաշխարհային կապիտալիզմի վերջնական պարտությունը մի հաղթանակ է, վոր տարվում է համաշխարհային տնտեսության թատերաբեմում»:

Խորհրդային Միությունը սոցիալիզմի միակ և հիմնական կենտրոնն է, վոր իրեն է ձգում բոլոր յերկրների բանվորներին և ամբողջ աշխարհի ճնշվածներին: Նրա հաղթանակները համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ են:

«Կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևն է...Պրոլետարիատին կուսակցություն հարկավոր է ամենից առաջ վորպես սեփական մարտական շտաբ, վորն անհրաժեշտ է հաջողությամբ իշխանություն գրավելու համար... Սակայն պրոլետարիատին կուսակցություն հարկավոր է վոչ միայն դիկտատուրա նվաճելու համար, նա ավելի շատ հարկավոր է նրան դիկտատուրան պահպանելու, նրան՝ հօգուտ սոցիալիզմի լիակատար հաղթանակի՝ ամրապնդելու և ընդլայնելու համար»:

ՍՏԱԼԻՆ

# IV
# ԳԼՈՒԽ

# ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ— ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՎԱՆԳԱՐԴՆ Է

*Բոլշևիկ—յերկրագնդի բոլոր անկյուններում ամենից շատ տարածված, ամենից հայտնի բառն է: Չկա այնպիսի բանվորական ավան Յեվրոպայի ամենահեռավոր ծայրում, չկա այնպիսի բանվորական թաղամաս Ամերիկայի վորևէ բազմամիլիոն քաղաքում, չկա այնպիսի հարըստահարված ժողովուրդ Աֆրիկայում, Հնդկաստանում, Չինաստանում, Խաղաղ ովկիանոսի կղզիներում, ուր չիմանան այդ բառը—*բոլշևիկ:

*Այդ բառը լսելիս յուրաքանչյուր ընչազուրկ պրոլետարի, յուրաքանչյուր տանջված, հուսահատության դուռը հասցրած գաղութային ստրուկի աչքի առաջ կանգնում է կուսակցության մարտիկը, վորը տոկունություն, դիսցիպլինա, հաստատամտություն և կամք ունի: Բոլոր աշխատավորները բոլշևիկը պատկերացնում են վորպես բանվոր դասակարգի առաջնորդը, առաջավորը, վորն ատում է կապիտալիստական ժամանակի աշխատանքը, նրա կարգերը, նրա բանտապետներին և լրտեսներին, վորը մինչև վերջը նվիրված է բանվոր դասակարգի շահերին, կազմակերպում է մասսաներին հանուն կոմունիզմի հաղթանակի պայքարելու համար:*

## 1. ՄԱՐՔՍԻԶՄԸ ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ԳՐԱՆԻՏՅԱ ԲԱԶԱՆ Է
## ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՈՒԺԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ Է

*Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը—մեր յերկրի բանվոր դասակարգի յերկարատև հերոսական պայքարի արդյունքն է: Այդ պայքարի պայմանները պակաս բարդ չեն, քան պատերազմի պայման-*



*պայմանները, ո՞վ կարող է*
*նները: Ո՞վ կարող է ըմբռնել այդ բարդ բուրժուազիային*
*պրոլետարների միլիոնավոր մասսաներին դրոհի տանել պրոլետարիատի դիկտատու-*
*և կալվածատերերին տապալելու համար,* պայքարում կոփված կու-
*րան հաստատելու համար:* Միայն յերկաթյա, *մասսաների*
*սակցությունը, վորը վայելում է բանվոր դասակարգի լայն*
*վստահությունն ու անսահման ուժանդակությունը:* Այդպիսի կուսակ-
ցությունն է Լենինի կուսակցությունը— Բոլշևիկների կոմունիստական
կուսակցությունը:
*Հատկապես բոլշևիկները—բանվոր դասակարգի այդ լավագույն,*
*ամենաառաջավոր, ամենակազմակերպված մասը—ռուսական և միջազ-*
*գային պրոլետարիատի պայքարի փորձով ցույց տվին, վոր պրոլետա-*
*րիատն առանց իր սեփական կազմակերպության անզեն է պայքարում:*
*Նրանք ապացուցեցին, վոր* բանվոր դասակարգի ուժն իր կազմակերպ-
վածության մեջն է: *Պրոլետարիատն իր ամենօրյա պայքարում սովորեց,*
*վոր* առանց կազմակերպության նրա ուժը վոչինչ է, իսկ կազմակերպված—
նա մեծագույն անպարտելի ուժն է:
*Կապիտալիստների համախմբված շարքերի հանդեպ, վորոնք պրո-*
*լետարիատի դեմ մղվող պայքարում հենվում են իրենց պետական ապա-*
*րատի վրա, բանվորական մասսաները գիտակցեցին սեփական ուժերի*
*կազմակերպության անհրաժեշտությունը: 1905 թ. հեղափոխության*
*փորձը, 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը, մեր յերկրի պրոլե-*
*տարիատի Հոկտեմբերյան հաղթանակի փորձը, ամբողջ միջազգային*
*բանվորական շարժման փորձը—բացորոշ ցույց տվին, վոր բանվոր դա-*
*սակարգի կազմակերպությունը և նրա շարքերի յերկաթյա դիսցիպլինան*
*բուրժուազիայի հանդեպ նրա (պրոլետարիատի) հաղթանակի հիմնական*
*պայմաններից մեկն է:*
Բոլշևիկների կուսակցությունը բանվոր դասակարգի առաջնորդն
ու ղեկավարն է, նրա առաջավոր ջոկատը պրոլետարիատի դիկտատու-
րայի հաստատման և անդասակարգ հասարակության կառուցման հա-
մար մղվող պայքարում:
*Բոլշևիզմի ամբողջ յերեսնամյա պատմությունը բացատրում է, թե*
*ինչու բոլշևիզմը կարողացավ մշակել և ամենադժվարին պայմաննե-*
*րում պահպանել այն յերկաթյա դիսցիպլինան ու կազմակերպությունը,*
*վորն անհրաժեշտ էր պրոլետարիատի հաղթանակի համար:* բոլշևիկյան կուսակցու-
Ինչպիսի հատկություններն ապահովեցին
թյանը ստանալու մեր յերկրի բանվոր դասակարգի շտաբի ու ղեկավարի
դերը: *Մեր յերկրի բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի գիտակ-*
*ցությունը, անձնուրաց նվիրվածությունը հեղափոխության, տոկու-*

նությունը, ցարական տերրորի դժվարությունների և ընդհատակյա աշխատանքի վտանգի պայմաններում անձնազոհության պատրաստակամությունը, հերոսությունը քաղաքացիական անողոք պատերազմի ընթացքում.

բանվոր դասակարգի ամենալայն մասսաների հետ կապվելու կարողությունը, նմանապես նաև ոչ-պրոլետարական աշխատավոր մասսաների—առաջին հերթին գյուղացիության—հետ, նրանց գլխավորելու և ղեկավարելու ունակությունը.

Լենինի կուսակցության, բոլշևիկների կուսակցության իրագործած քաղաքական ղեկավարության ճշտությունը—մասսաների կողմից իրենց ամենօրյա պայքարի և յերեք հեղափոխությունների փորձով ստուգված ղեկավարության ճշտությունը:

Լենինյան կուսակցության այդ հատկությունները մշակվել են ցարի, ֆաբրիկանտների, կալվածատերերի դեմ մղվող կատաղի պայքարում, ծանր փորձի գնով, բուրժուական և մանր բուրժուական կուսակցությունների հետ անհաշտ ընդհարման ընթացքում, ամեն տեսակ օպորտունիզմի դեմ անհաշտ պայքարում:

## ԱՌԱՆՑ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԹԵՈՐԻԱՅԻ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ռուսաստանը բոլշևիզմի օջախն ու հայրենիքն է: Ռուսաստանի զարգացման պայմանները, վորոնք նրան դարձրին իմպերիալիզմի բոլոր հակասությունների հանգուցային կետը, հեղափոխական շարժման բնույթը մեր յերկրում—կոփեցին բանվոր դասակարգի հեղափոխական [illegible]ությունը, նախադրյալներ ստեղծեցին նրա հաղթանակի համար:

Բոլշևիկյան տոկունությունը և դիսցիպլինան, կամքի անհաշտությունն ու աննկունությունը և նվիրվածությունը հեղափոխության գործին—այս բոլոր հատկությունները ապահովեցին բոլշևիկների հաղթանակը: Նրանք բոլշևիկ խոսքը հայտնի դարձրին ամբողջ մարդկությանը, սիրելի՝ բոլոր յերկրների աշխատավորներին, ատելի՝ պարազիտների և նրանց արբանյակների համար: Այս բոլոր հատկությունները սրվել են մարքսիզմի հեղափոխական թեորիայով:

Դեռ այն ժամանակ, յերբ բոլշևիկների կուսակցությունն սկսեց ձևավորվել, Լենինը սովորեցնում եր բանվոր դասակարգի առաջավորներին, վոր պրոլետարիատը չի կարող կատարել բոլոր աշխատավորների առաջավոր մարտիկի դերը, յեթե նա չտիրապետի հեղափոխական թեորիային: Լենինը գրում եր.—«Առաջավոր մարտիկի դերը կարող է կատարել միայն առաջավոր թեորիայով ղեկավարվող կուսակցությունը»:

Այդ առաջավոր, հեղափոխական թեորիան Մարքսի—Էնգելսի ուսմունքն եր—մարքսիզմը:

Մարքսն օգտագործեց և քննադատորեն վերամշակեց այն ամբողջ գիտությունը, վորը կուտակել եր մարդկությունը: Ուսումնասիրելով մարդկային հասարակության զարգացման օրենքները, Մարքսը հանգավ այն յեզրակացության, վոր կապիտալիզմի զարգացումը տանում է կոմունիզմին, և գիտականորեն անհերքելի կերպով ապացուցեց, վոր բուրժուազիայի կործանումն ու պրոլետարիատի հաղթանակն անխուսափելի յեն:

Լենինը մարքսիզմը կոչում է բոլշևիզմի գրանիտյա թեորետիկական բազան, հիմքը:

Հատկապես դրա մասին, Մարքսի—Լենինի այդ թեորիայի մասին ընկ. Ստալինն ասել է, վոր նա բանվոր դասակարգին և նրա կուսակցությանը ուժ է տալիս կողմնորոշվելու, այսինքն ճիշտ հաշվի առնելու կատարվող դեպքերը, և նրանց ուշադիր քննարկումից ու ուսումնասիրությունից ճիշտ յեզրակացություններ անելու հօգուտ սոցիալիզմի:

Հատկապես այդ թեորիայի— մարքսիզմ-լենինիզմի մասին ընկ. Ստալինն ասում է, վոր նա հատուկ հեռանկարներ է տալիս, վորովհետև այդ թեորիան սովորեցնում է, թե ինչպես ճշտորեն գծել կոմունիզմի հաղթանակի համար բանվոր դասակարգի պայքարի ուղին:

Հատկապես այդ թեորիայի—Մարքսի-Լենինի ուսմունքի մասին ընկ. Ստալինն ասել է, վոր նա վստահություն է ներշնչում աշխատանքում, վորովհետև հեղափոխական գործնական աշխատանքը միայն այն ժամանակն է ուժեղ, յերբ նա լուսավորվում է թեորիայով, յերբ նա կարող է օգտագործել առանձին փաստերը, առանձին յերևույթները, առանձին դեպքերը, վորպեսզի նրանց հիման վրա ընդհանուր յեզրակացություններ անել, հանուն կոմունիզմի մղվող պայքարի համար անհրաժեշտ ընդհանուր կանոններ և օրինակներ հանել:

Հատկապես այդ թեորիայի մասին ընկ. Ստալինն ասել է, վոր նա մեր գործի հաղթանակի հավատքն է ներշնչում, վորովհետև մարդկության կուտակած բոլոր գիտություններն ու բոլոր փորձերն օգտագործած Մարքսի-Լենինի թեորիան սովորեցնում է, վոր կապիտալիզմի կործանումն անխուսափելի յե, վոր բուրժուական աշխարհի գերեզմանափորը հանդիսանում է վորպես դասակարգ կազմակերպված և իր հեղափոխական կուսակցությամբ ղեկավարված պրոլետարիատը, վոր կոմունիզմը գալիս է փոխարինելու կապիտալիստական հասարակությանը:

Հենվելով Մարքսի-Լենինի-Ստալինի ուսմունքի գրանիտյա հիմքի վրա, բոլշևիզմը յերեսուն տարվա ընթացքում անցել է հեղափոխական պայքարի—լեգալ և անլեգալ, խմբակային և մասսայական—հաքըստագույն դպրոցը և, վերջապես, զինյալ պայքարի ու պրոլետարիատի հաղթանակած յերկրում սոցիալիստական շինարարության ղեկավարության հարստագույն փորձը:

## ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՈՒՂԻՆ ԴԵՊԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

*Պրոլետարները հարկադրված եյին յերկար, ծանր ճանապարհ կտրել հասկանալու համար իրենց առանձնահատուկ շահերը կապիտալիստական հասարակության մեջ: Պրոլետարները յերևան են յեկել, առաջացել են բուրժուազիայի հետ միաժամանակ: Այնտեղ, ուր կա շահագործող, կա նաև շահագործվող, ուր կա կապիտալիստ, կա նաև բանվոր: Բանվորը հարկադրված իր անելանելի դրությունից—աղքատությունից, սովից, ստրկական վիճակից— սկսեց պայքարել իրեն շահագործողների դեմ:*

*«Կապիտալիզմը—գրում եր Լենինը* 1899 *թ.—բանվորներին անխուսափելիորեն տանում է դեպի կռիվ տերերի հետ, իսկ յերբ արտադրությունը դառնում է խոշոր, այդ պայքարն անխուսափելիորեն դառնում է գործադուլային պայքար»:*

*Սկզբնական շրջանում այդ պայքարը մղվում եր աշխատավարձի բարձրացման համար, բազմաժամ տաժանակիր բանվորական օրվա կրճատման համար, աշխատանքի անտանելի պայմանների բարելավման համար:*

*Այդ պայքարը բանվորներն սկզբում մղում եյին միայնակ, առանձին-առանձին: «...Սակայն,—գրում եր Լենինը «Գործադուլների մասին»* (1899 *թ.) իր հոդվածում,—գործադուլները սովորեցնում են բանվորներին միանալ, գործադուլները ցույց են տալիս նրանց, վոր նրանք միայն համախմբված կարող են պայքարել կապիտալիստների դեմ, գործադուլները սովորեցնում են բանվորներին մտածելու ամբողջ բանվոր դասակարգի պայքարի մասին գործարանատերերի դասակարգի դեմ և ինքնիշխան, վոստիկանական կառավարության դեմ»:*

*Կապիտալիստն իր իշխանության ամբողջ ուժով, իր պետական ապարատի ոգնությամբ ճնշում եր միայնակ մարտիկին:* Սակայն աստիճանաբար միայնակների պայքարը վերածվում եր ամբողջ փաբրիկայի, գործարանի, ռայոնի, վերջապես, արդյունաբերության ամբողջ ճյուղի պայքարի:

Բանվորների միացման *ուղին իրենց պայքարում, նրանց շարքերի համախմբման պրոցեսը—շատ դժվար է, լի խոշորագույն գրկանքներ*



*ռով և անդուլթ հետապնդումներով: Այդ ճանապարհին յեղել են շատ*
*ախալներ, վորոնք բանվորները կատարել են իրենց զարգացման հեղա-*
*փոխական պայքարի սկզբնական շրջանում:*
*Կապիտալիզմի զարգացման արշալույսին բանվորները դեռ չեյին*
*ճանաչում իրենց անելանելի և հուսահատական դրության պատճառ-*
*ները: Նրանք մտածում եյին, վոր չարյաց արմատը դազգյահը, մեքե-*
*նան, փաբրիկան են: Նախկին կյանքը, աշխատանքը սեփական տնային*
*դազգյահի վրա, կամ սեփական ծխոտ, խարխուլ դարբնոցում—այժմ*
*նրանց թվում եր «վոսկե» դար: Մեքենան իրենց թշնամի եյին համա-*
*րում, յենթադրելով, վոր նա յե իրենց քայքայման, և վոչ միայն իրենց,*
*այլև իրենց կանանց ու փոքրահասակ յերեխաներին կապիտալիստա-*
*կան փաբրիկայի մռայլ ու ծանր տաժանակիր աշխատանքի ներգրավե-*
*լու պատճառը:*
*Ցեվ չհամախմբված ու անգիտակից բանվորներն սկսեցին քանդել*
*մեքենաները, ջարդել դազգյահները, հրդեհել փաբրիկաները, պայքա-*
*րել հենց արտադրության միջոցների դեմ:*
XIX *դարի սկզբում Անգլիայում—այն ժամանակվա առաջավոր*
*կապիտալիստական յերկրում—առաջ յեկավ* մասսայական շարժում
մեքենաների դեմ, *վորը հայտնի յե լուդդիտյան շարժում անունով:*
1811 *թվին Նոթինգհեմի, Լանկաշիրի և այլ վայրերի արդյունաբերա-*
*կան ռայոններում սկսվում է* մեքենաների կազմակերպված ջարդ: *Լուդ-*
*դիտները վոչնչացնում եյին փաբրիկայի գույքը, ջարդուփշուր եյին*
*անում թանգարժեք մեքենաները, հրդեհում եյին փաբրիկայի շենքերը:*
*Վոստիկանությունը չեր կարողանում գլուխ հանել մեքենաների դեմ*
*սկսվող շարժումից, վորն ընդգրկում եր ռայոն ռայոնի հետևից:*
*Լուդդիտների դեմ գործի դրվեց բանակը, պարլամենտը մահապատժի*
*օրենք հրատարակեց մեքենաներ ջարդելու համար:*
*Անգլիայի բանվորական մասսաներն աստիճանաբար սովորեցին*
*հասկանալ, վոր բանը մեքենաները չեն, վոր թշնամին կապիտալիստն*
*է, շահագործման և ճնշման ամբողջ հասարակակարգը:*
*Այսպես յեղավ և մյուս յերկրներում: Անցյալ դարի կեսերին Գեր-*
*մանիայում ջուլհակների խոշոր հուզումներ տեղի ունեցան, վորոնք*
*ուղղված եյին մեքենաների և գյուտերի դեմ: Մեքենաների և գյուտերի*
*դեմ նաև Ռուսաստանում սրանից* 40—50 *տարի առաջ,* 1880—90-*ական*
*թվականներին տեղի ունեցան գործարանային խռովություններ, վո-*
*րոնք վերջացան փաբրիկաների կործանմամբ, մեքենաների կոտրատու-*
*մով և գործարանային շենքերի հրդեհումով:*
*Արդյունաբերության զարգացման ջուգընթաց մեծացավ պրոլե-*
*Արդյունաբերության զարգացման ջուգընթաց մեծացավ պրոլե-*
*տարիատի թվական կազմը, աճեց նրա կազմակերպվածությունը: Մեծ*

ֆաբրիկաներն ու գործարանները, ամենուրեք մեքենաների գործադրությամբ առաջացած աշխատանքի միանման պայմանները, փոխադրության միջոցների բարելավումը, միշտ աճող շահագործումը, բանվորների դրության վատթարացումը—պրոլետարական շարքերի աստիճանական համախմբման համար պայմաններ ստեղծեցին և առաջ բերին միացյալ ելույթներ:

Պրոլետարների այդ ավելի հաճախ ծագող միացյալ ելույթները միշտ ավելի ու ավելի գիտակցված դասակարգային բնույթ ընդունեցին:

Ռուսաստանում բանվորական շարժումը ծավալվեց նույնպիսի ուղիով—բանվորների առանձին խմբերի տարերային տնտեսական պայքարից դեպի տասնյակ և հարյուրավոր հազար բանվորների հուժկու ելույթները:

Այդպիսի ելույթի օրինակ է հանդիսանում Մորոզովի հռչակավոր գործադուլը:

«Առանձնապես նշանակալից գործադուլ եղավ Տիմոֆեյ Սավվիչ Մորոզովի հայտնի Նիկոլսկու մանուֆակտուրայում... 1882 թվից, պատմում է Լենինը, Մորոզովն սկսեց նվազեցնել աշխատավարձը, և մինչև 1884 թ. տեղի ունեցավ հինգ նվազեցում: Միաժամանակ ավելի խիստ դարձան տուգանումները... Համբերությունը հատած բանվորները 1885 թ. հունվարի 7-ին աշխատանքը թողին և մի քանի օրվա ընթացքում ջարդեցին գործարանային խանութը, վարպետ Շորինի բնակարանը և մի քանի այլ գործարանային շենքեր: Տասնյակ հազար բանվորների այդ սարսափելի ապստամբությունը... խիստ վախեցրեց կառավարությանը: Այդ խոշոր գործադուլը շատ ուժեղ ազդեցություն թողեց կառավարության վրա, որը տեսավ, որ բանվորները, երբ նրանք միասին են գործում, վտանգավոր ուժ են ներկայացնում, առանձնապես երբ միասին գործող բանվորական մասսաներն ուղղակի դնում են իրենց պահանջները»:

Բանվորների տարերային պայքարը տեղի էր տալիս կազմակերպված պայքարին: Բանվորները, նրանց առաջավորները, ստեղծում էին իրենց կազմակերպությունները, մեծ մասամբ գաղտնի, փոխադարձ օգնության համար, հանուն տնտեսական դրության բարելավման պայքար մղելու համար, գործադուլները ղեկավարելու համար: Այդ առավելապես տնտեսական կազմակերպությունները (փոխադարձ օգնության դրամարկղներ, հիվանդանոցային, պրոֆմիութենական, կուլտուրական և մյուս կազմակերպությունները) առայժմ թույլ էին և փոքրաթիվ:

Բանվորների պայքարը հաճախ վերջանում էր նրանց պարտությամբ: Նույնիսկ այն ժամանակ, երբ բանվորական օրվա կրճատման



համար, աշխատավարձի բարձրացման համար, աշխատանքի ավելի լավ պայմանների համար մղած պայքարում բանվորները հաղթող էին դուրս գալիս, ապա նրանց հաղթանակը լինում էր ծայր աստիճանի անկայուն և ժամանակավոր, որովհետև ֆաբրիկանտի և գործարանատիրոջ կողմն էր կանգնած նրա պետությունը, նրա ձեռքում էին լինում տնտեսական և քաղաքական ներգործության բոլոր ուժերը:

Սակայն այդ պայքարի ընթացքում աճում էին բանվորների ուժերը, բարձրանում էր նրանց դասակարգային գիտակցությունը: Կապիտալիստական ֆաբրիկան, ուր հավաքված կան միանման շահագործվող բազմաթիվ բանվորներ, դառնում էր պրոլետարական կոփման, կազմակերպչական ունակությունների, պրոլետարական դիսցիպլինայի դպրոց:

Որոշ ժամանակից հետո բանվորներն սկսեցին իրենց գիտակցել որպես դասակարգ, որն ունի իր առանձնահատուկ ոչ միայն տնտեսական, այլ և քաղաքական շահերը, որոնք ուղղակի հակադիր են թշնամի կապիտալիստների դասակարգային շահերին:

XIX դարի առաջին կեսի վերջին, մոտավորապես հարյուր տարի առաջ, Անգլիայի բանվորներն առաջին անգամ ինքնուրույնաբար հրապարակ են գալիս քաղաքական պայքարի դրոշի ներքո: Չարտիստական շարժումը (այդպես էր կոչվում այդ անգլիական բանվորական շարժումը),—պրոլետարիատի առաջին ինքնուրույն քաղաքական ելույթն է: Բանվոր-չարտիստները մի շարք տարիների ընթացքում պայքարել են ընդհանուր ընտրական իրավունքի համար, ամեն տարի պարլամենտական ընտրություններ սահմանելու, պարլամենտի ընտրողներից գույքային ցենզի պահանջի վերացման համար և այլն: Չարտիստները միլիոնավոր մասսաներ հավաքեցին իրենց պահանջների շուրջը: Չարտերի (քարտիա—պետիցիա, խնդրագիր, ուր թվարկված էին բանվորների պահանջները) հետևից գնում էին ավելի քան 5 միլիոն բանվոր: Չարտիստական շարժումը ճնշվեց:

1848 թ. հունիսին Փարիզի (Ֆրանսիա) բանվորները դուրս են գալիս բուրժուազիայի դեմ, ապստամբների դրոշակներին գրված էր—հացի և աշխատանքի պահանջը: Հունիսյան ապստամբությունը վերջացավ պրոլետարիատի պարտությամբ: Գազանացած բուրժուազիան կատաղորեն հաշվեհարդար կատարեց բանվորության հետ: Հազարավոր բանվորների արյան մեջ խեղդվեց ֆրանսիական պրոլետարիատի առաջին ինքնուրույն քաղաքական ելույթը:

Թե չարտիստական շարժումը և թե ֆրանսիական պրոլետարիատի 1848 թվի պայքարը վերջացան պարտությամբ, որովհետև բանվոր դասակարգը դեռ չուներ միասնական, կայուն, կարգապահ կուսակցու-

թյուն, պարզորոշ քաղաքական ծրագիր, իր առաջ չէր դնում իշխանության գրավման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման խնդիրը:

1871 թ. հերոսական Պարիզյան Կոմունայի փորձն ավելի բացահայտ կերպով հանդես է բերում պրոլետարիատի հեղափոխական կուսակցության անհրաժեշտությունը: Պարիզի բանվորները 1871 թ. մարտի 18-ին ապստամբեցին, ջախջախեցին պետական մեքենան, դուրս քշեցին բուրժուազիային: Սակայն նրանք— Պարիզի պրոլետարները— իրենց հեղափոխական, ամրակուռ, կազմակերպված կուսակցությունը չունեյին, վորն իմանար, թե ուր պիտի տանել մասսաներին: Պարիզի հերոսական բանվորներն, առանց այդպիսի կուսակցության, չկարողանալով կապվել գյուղացիական մասսաների հետ, ճնշվեցին: Պարիզյան Կոմունան ջախջախվեց, տասնյակ հազարավոր կոմունարներ գնդակահարվեցին և տանջվեցին:

Այսպես, ամենահուսահատական ընդվզումների ու ընդհարումների, «խռովարարների» (կապիտալիստները, հոգևորականությունն ու արքաներն այսպես եյին կոչում ապստամբ բանվորներին ու գյուղացիներին) դաժանական ճնշումների բազմաթիվ տասնամյակների ընթացքում առանձին ձեռնարկությունների, զբաղմունքների, առանձին վայրերի պրոլետարների պայքարն սկսեց դառնալ ընդհանուր դասակարգային պայքար, վորն ընդգրկում է ամբողջ յերկրի, ամբողջ պետության բանվորներին:

Ընդհանուր դասակարգային շահերի հողի վրա միանալով, միասնական ջանքերով յելույթ ունենալով ընդդեմ առանձին կապիտալիստների, նրանց միությունների, պրոլետարիատն անցել է քաղաքական պայքարի կապիտալիստական պետության դեմ, վորի ամբողջ ապարատը (վոստիկանությունը, ժանդարմները, բանակը, դատարանները, բանտերը, պարլամենտները, մամուլը, դպրոցը և յեկեղեցին) գոյություն ունի նրա համար, վորպեսզի պաշտպանի բուրժուազիային, նրա մասնավոր սեփականությունը, նրա շահույթը: Յերբ պրոլետարիատը գործադուլ եր հայտարարում, քշում եր վարպետներին, գործադուլային կոմիտեներ եր կազմակերպում, քշում ու ծեծում եր շտրեյկբրեխերներին, սպանում լրտեսներին, բարիկադներ կառուցում՝ արշավող զորքերի, վոստիկանության, ժանդարմերիայի դեմ, դրանով իսկ նա անմիջականորեն ընդհարվում եր բուրժուական պետության ուժերի հետ:

Պրոլետարական մասսաները միշտ չէ, վոր հասկանում եյին այդ պայքարի քաղաքական իմաստն ու նշանակությունը, միշտ չէ, վոր գիտակցում եյին այդ: Յուրաքանչյուր յերկրի բանվորական շարժումն ունի իր առանձնահատկությունները, իր բնույթը, ընդունում է իր առանձնահատուկ ձևերը: Սակայն պրոլետարիատի և կուսակցության ուղին



ամենուրեք միևնույնն է—միայնակների պայքարից, մասսայական տարերային տնտեսական պայքարից—դեպի քաղաքական պայքար, դեպի պրոլետարիատի ինքնուրույն քաղաքական կուսակցության ստեղծումը: Սոցիալիզմի կուսակցության ուղին դժվարին և բարդ ուղի յե: Պրոլետարիատը միայն այն ժամանակ ստեղծեց իր իսկական հեղափոխական սոցիալիստական կուսակցությունը, յերբ նրա ավանգարդը տիրապետեց գիտական սոցիալիզմի թեորիային, մարքսիզմի թեորիային:

Պրոլետարիատի դասակարգային պայքարը, զրկված սոցիալիստական թեորիայից, թույլ եր, յերբեմն անզոր, չէր կարողանում ամրապնդել իր հաղթանակները և ի վիճակի չէր ավելի բարձր աստիճանի բարձրանալու: Սոցիալ-ուտոպիստների ուսմունքները, կտրված դասակարգային պայքարից, մնում եյին վորպես անուրջներ, բարի ցանկություններ, մտացածին դեղատոմսեր: Բանվորական շարժումը, չլուսավորված առաջավոր թեորիայով—Մարքսի թեորիայով, մնում եր տարերային և մանրացած:

Կարլ Մարքսը (1818—1883) և Ֆրիդրիխ Էնգելսը (1820—1895) վոչ միայն բացատրեցին պրոլետարիատի ինքնուրույն հեղափոխական կուսակցության կազմակերպման անհրաժեշտությունը, այլև իրենք մինչև իրենց կյանքի վերջն ամենաակտիվ, ամենագործունյա մասնակցություն ունեցան սոցիալիզմի համար բանվոր դասակարգի մղած պայքարում: Նրանք ստեղծեցին պրոլետարիատի միջազգային կուսակցությունը—առաջին բանվորական Կոմունիստական ինտերնացիոնալը:

Այսպես մարքսիզմը տարերային անկազմակերպ բանվորական շարժմանը անհրաժեշտ կազմակերպվածություն տվեց, կապեց նրան, վորպես մեկ անբաժան ամբողջություն, պրոլետարական հեղափոխական կուսակցությունների գործունեյության հետ, առաջավոր թեորիայի հետ, այդ տարերային շարժման մեջ մտցրեց ժամանակակից գիտության մակարդակի վրա կանգնած սոցիալիստական իդեալներ, կապեց նրան պետական իշխանության, պրոլետարիատի դիկտատուրայի, իբրև սոցիալիզմի իրականացման միջոցի, համար պրոլետարիատի մղած սիստեմատիկ պայքարի հետ:

## 2. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՎՈՐ ՋՈԿԱՏՆ Է

### ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԱՄԵՆԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՆ Է

Կապիտալիստական հասարակության բոլոր կեղեքվող դասակարգերի ու խմբերի մեջ պրոլետարիատն ամենից շատ շահագործվող դասակարգն է, ամենից ընչազուրկը: Նա այլ հարստություն չունի, բացի

սեփական բանվորական ուժից, որը նա ծախսում է որպես ապրանք: Պրոլետարիատն ամենից շատ տուժում է արտադրության կապիտալիստական անարխիայից, կապիտալիստների և նրանց միավորումների միջև յեղած մրցակցությունից, կապիտալիստական ռացիոնալացումից, գերարտադրության ճգնաժամից: Նրան թալանում ու շահագործում են, յերբ նա աշխատում է, և նրան սպանում են քաղցով, յերբ նա դուրս է շպրտված, գործազուրկ է:

Պրոլետարիատը գլխավոր դերն է խաղում արտադրության մեջ: Նա ստեղծում է կապիտալիստական հասարակության բոլոր հիմնական արժեքներն ու հարստությունները: Նրա աշխատանքով են կառուցվում, գործարկվում և սպասարկվում բոլոր ձեռնարկությունները և կառուցումները: Գործարանային աշխատանքի ծանր դպրոցն անցկացած պրոլետարիատը դասակարգայնորեն կազմակերպվելու ընդունակություն է ձեռք բերում, պայքարի մեջ նա համախմբվելու ունակություն է ստանում, և իր մեջ մշակում է ընկերական և ինտերնացիոնալ համերաշխության զգացմունքը:

Բոլոր մյուս աշխատավորների մեջ նա աչքի յե ընկնում որպես մինչև վերջը հեղափոխական դասակարգ, որպես մեծագույն հերոսության և անձնուրացության ընդունակ դասակարգ: Դա նրան դարձնում է առաջատար—ղեկավար դասակարգ քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորների մեջ: Նրա վրա յե ընկնում նրանց իր շուրջը համախմբելու և ընդհանուր հեղափոխական պայքարում նրանց ղեկավարելու պատմական դերը: Հաղթանակից հետո նա իրագործում է իր դիկտատուրան, կազմակերպելով չքավոր—միջակ մասսաներին, նրանց իր հետևից տանելով անդասակարգ հասարակության կառուցման պայքարում: Պրոլետարիատը հեղափոխության նախապատրաստման տարիներին, անմիջապես հեղափոխության ժամանակ և նրա հաղթանակից հետո բոլոր աշխատավորների վերաբերմամբ իրագործում է ղեկավարողի դերը: Պրոլետարիատը հանուն բոլոր աշխատավորների ազատագրության մղվող հեղափոխական պայքարի հեգեմոնն է (ղեկավարը):

Բանվոր դասակարգի մասին, որպես բոլոր աշխատավորներին ղեկավարելու պատմականորեն ընդունակի, որպես հեգեմոնի—ղեկավարի—Լենինը գրել է այսպես.

«Կեղեքված դասակարգերից միայն նա յե ընդունակ իր դիկտատուրայով վոչնչացնելու դասակարգերը, ով կապիտալի դեմ գործադուլային և քաղաքական պայքարի տասնամյակներով կրթված, միախմբված, դաստիարակված ու կոփված է. միայն նա, ով յուրացրել է ամբողջ քաղաքային, արդյունաբերական, խոշոր կապիտալիստական կուլտուրան, վճռականություն ունի պաշտպանելու նրա բոլոր նվաճումները, այն դարձնելու մատչելի ամբողջ ժողովրդին, բոլոր աշխատավորներին.



միայն այն դասակարգը, վորը կարողանում է տանել այն բոլոր դըժ-
վարությունները, փորձությունները, զոհողությունները, մեծ զոհերը,
վորոնք պատմությունն անխուսափելիորեն դնում է նրա վրա. միայն
նա, ով խզում է կապը անցյալի հետ և համարձակորեն ճանապարհ է
յաց անում դեպի նոր ապագան. միայն այն դասակարգը, վորի լավա-
գույն մարդիկ լի յեն ատելությամբ և արհամարհանքով դեպի ամենայն
ինչ, վոր քաղքենիական է ու ֆիլիստերական, այնինչ դեպի այն հատ-
կությունները, վորոնք այնպես ծաղկում են մանր բուրժուազիայի մոտ,
մանր ծառայողների մոտ, ինտելիգենցիայի մոտ, միայն այն դասակար-
գը ընդունակ է վոչնչացնելու դասակարգերը, վորն «անցել է աշխատան-
քի կոփված դպրոցը» և կարող է յուրաքանչյուր աշխատավորի, յու-
րաքանչյուր ազնիվ մարդու հարգանք ներշնչել դեպի իր աշխատունա-
կությունը»:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՇՏԱԲՆ Է

Վորպեսզի պրոլետարիատը կարողանա գործնականում իրագործել
ղեկավարի—հեգեմոնի դերը, նրան պետք է գլխավորի այնպիսի կու-
սակցություն, վորը համախմբում, միացնում է բանվոր դասակարգի
ամենառաջավոր, ամենագիտակից, ամենահեղափոխական մասը: Կու-
սակցությունը կազմված է ամենաառաջավոր և ամենաանձնուրաց բան-
վորներից, վորոնք ընդունակ են վերջնական նպատակի — կոմունիզմի
համար մղվող պայքարում ղեկավարել մասսաներին, պաշտպանել նրանց
ամենօրյա շահերը, և դրա հետ միասին պաշտպանել ամբողջությամբ
վերցրած բանվոր դասակարգի կարիքներն ու շահերը:
«Կուսակցությունը,—սովորեցնում է ընկ. Ստալինը,—պետք է իր
մեջ համախմբի բանվոր դասակարգի լավագույն տարրերին, նրանց փոր-
ձը, նրանց հեղափոխականությունը, նրանց անձնուրաց նվիրվածությու-
նը հեղափոխության գործին»: Սակայն, իսկապես առաջավոր ջոկատ լի-
նելու համար կուսակցությունը պետք է զինված լինի հեղափոխական
թեորիայով, հեղափոխության օրենքների ու ուղիների գիտելությամբ:
Առանց դրան նա ի վիճակի չէ ղեկավարելու պրոլետարիատի պայքարը,
իր հետևից տանելու պրոլետարական մասսաներին: Կուսակցությունը
չի կարող իսկական ավանգարդ լինել, յեթե նա միայն գրանցում է այն,
ինչ ապրում ու մտածում է բանվոր դասակարգի մասսան, յեթե նա քարշ
է գալիս տարերային շարժման պոչից: Կուսակցությունը չի կարող իսկա-
կան ավանգարդ լինել, յեթե նա չի կարողանում բարձրանալ բանվոր-
ների րոպեական շահերից, չի կարողանում մասսաներին բարձրացնել
պրոլետարիատի ընդհանուր—դասակարգային շահերի մակարդակին:

կուսակցությունը պետք է գլուխ կանգնի բանվոր դասակարգին, նա պետք է իր հետևից տանի մասսաներին և վոչ թե քարշ գա նրանց պոչից։

Այդպիսի կուսակցությունը բանվոր դասակարգի քաղաքական առաջնորդն է, ավանգարդը, վորը կենտրոնացնում է նրա ամբողջ փորձը, ենտուզիազմը, կապիտալի լծի տապալման պայքարը մինչև վերջը, մինչև լիակատար հաղթանակը տանելու վճռականությունը։ Այդպիսի կուսակցությունը պրոլետարիատի մարտական շտաբն է, շտաբ, վորը կարողանում է ըմբռնել դասակարգային պայքարի, ապստամբության, հեղափոխության և քաղաքացիական կռվի ստեղծած իրադրության ամբողջ բարդությունը, շտաբ, վորը կարողանում է յերկաթյա շարքերում կազմակերպել միլիոնավոր պրոլետարների և նրանց ճիշտ մարտական ուղղություն տալ։ Այդպիսի կուսակցությունը—ավանգարդը—ամենամոտ կապերով կապված է անկուսակցական բանվորական մասսաների հետ։ Նա ամբողջ դասակարգի անբաժան մասն է։ Դասակարգն այդ կուսակցությունը համարում է իրենը, հարազատ, մտերիմ, վստահում է նրան և ամրացնում է նրան, նրա շարքերը լրացնելով լավագույն առաջավոր պրոլետարներով։ Այսպես օրինակ Լենինի մահվան օրերին կուսակցության շարքերն անցան 200.000 լավագույն պրոլետարներ։ Կուսակցության 1929 թ. զտման ժամանակ կուսակցության մեջ մտան առաջավոր-բանվորների նոր հազարներ։ Յեվ այժմ, ի պատասխան կուսակցության մարտական կոչին, նրա շարքերը լրացվում են բոլշևիկ-լենինցների նոր ջոկատներով, սոցիալիստական կառուցման լավագույն հարվածայիններով։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՄՆԱՑ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է, ԻՐԵՆ ՄՈՏԵՑՆՈՒՄ

Արտահայտելով բանվոր դասակարգի ընդհանուր շահերը, կուսակցությունը պայքարում է հետամնաց հայացքների դեմ, դասակարգային շահերը պրոլետարիատի առանձին խմբերի ռոպեյական շահերով փոխարինելու դեմ, պոկլողական տրամադրությունների դեմ, վորոնք նրա միջավայրն են մտցնում վոչ-պրոլետարական դասակարգերից—գյուղացիությունից, քաղքենիությունից, ինտելիգենցիայից դուրս յեկածները։

Բանվոր դասակարգի ավանգարդի—բոլշևիկյան կուսակցության խնդիրը չի հարմարվել բանվոր դասակարգի այդ հետամնաց մասերին, այլ ամբողջ բանվոր դասակարգը բարձրացնել իր մակարդակին, կազմակերպված կոմունիստական ավանգարդի մակարդակին։

Ագիտացիայի և պրոպագանդի բոլոր միջոցներով, իր ամբողջ աշ-



խատանքով կուսակցությունն ազդում է բանվոր դասակարգի մասսաների վրա, նրանց տանում է իր հետևից։ Նա ձգտում է այն բանին, վորպեսզի պրոլետարիատի առօրյա շահերը չխափանեն նրա հեղափոխական պայքարի վերջնական նպատակը։

Հեղափոխության նախապատրաստության տարիներին պրոլետարիատի կուսակցությունը ղեկավարում էր նրա բոլոր մասսայական յելույթները՝ տնտեսական պայքարը. նա դաստիարակում էր բանվորներին կապիտալիստական կարգի դեմ անհաշտ պայքար մղելու վոգով, հեղափոխության վոգով։

Ապստամբության, հեղափոխության և քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանում (ինչպես այդ յեղավ մեզ մոտ 1905, 1917 և հետագա տարիներին), բանվոր դասակարգի կուսակցությունը բանվորների և աշխատավորների միլիոններին ապստամբության և պայքարի յե հանում, դեպի բուրժուական աշխարհը, դեպի բանվորի աշխատանքը շահագործողների ավազակախումբը տասնյակ տարիների ընթացքում կուտակված ատելությանը յելք է տալիս։ Նա կազմակերպում է բանվոր դասակարգի հաղթանակելու կամքը, մասսաների մեջ դաստիարակելով հանուն կոլեկտիվի, հանուն իր դասակարգի հաղթանակի զոհաբերվելու պատրաստակամությունը։

Ծավալուն սոցիալիստական կառուցման ժամանակաշրջանում կուսակցությունը—սոցիալիստական շինարարության մարտական շտաբը—կազմակերպում է միլիոնների աշխատանքը սոցիալիստական շինարարության պլանը կատարելու համար, մոբիլիզացիայի յե յենթարկում աշխատավորներին հանուն անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման՝ հաղթահարելու ժամանակավոր դժվարությունները։

Հեղափոխական պայքարի բոլոր ժամանակաշրջաններում բոլշևիկների կուսակցությունը քարշ չի գալիս բանվոր դասակարգի պոչից, այլ նրան տանում է իր հետևից, սակայն կապը չկտրելով մասսաներից, չանջատվելով նրանցից, առաջ չվազելով, չարհամարհելով մասսաների տրամադրությունները։ Նա հետևում է այն բանին, վորպեսզի մասսաները հասկանան իրենց ավանգարդի լոզունգները, վորպեսզի նրանք ընդունակ լինեն արձագանքելու իրենց կուսակցության կոչերին։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԵՆԱՍԵՐՏ ԿԵՐՊՈՎ ԿԱՊՎԱԾ Է ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԵՏ

Բանվոր դասակարգի կազմակերպված ավանգարդն ամենասերտ կերպով կապված է իր դասակարգի ամբողջ մասսայի հետ, անընդհատ լրացվում է քաղաքականապես ամենից ավելի հասուն, գործնականորեն ամենից ավելի պատրաստված բանվորներով։ Պրոլետարիատն, ամբող-

ջությամբ վերցրած, շահագրգռված է իր կազմակերպված ավանգարդի շարքերի ավելացմամբ: Դրա համար էլ նա անընդհատ պատրաստում է իր լավագույն զավակներին, բանվոր դասակարգի գործի լավագույն մարտիկներին, կուսակցության շարքերը մտնելու համար: Կուսակցության աճն ուժեղացվում է առանձնապես պրոլետարիատի կյանքի կարևորագույն դեպքերի ժամանակաշրջանում (քաղաքացիական պատերազմի տարիներին, Լենինի մահվանից հետո եղո օրերին և այլն):

Բանվոր դասակարգը շահագրգռված է, վորպեսզի կուսակցությունը վոչ միայն քանակապես աճի, այլև կազմված լինի վորակապես ամենալավ, ջոկովի պրոլետարական մատերիալից: Ահա թե ինչու բանվորական մասսաներն ամենամոտիկ մասնակցություն են ունենում, յերբ բջիջերը քննարկում են թեկնածուներին կուսանդամ անցկացնելը, կուսակցության շարքերը զտելու ժամանակ, ոգնելով նրան մերկացնելու և դեն շպրտելու հանուն անհատական կամ բանվոր դասակարգին թշնամի շահերի կուսակցության շարքերը մտած խորթ տարրերին:

Սակայն, չնայած բանվոր դասակարգի և նրա ավանգարդի — բոլշևիկյան կուսակցության միջև գոյություն ունեցող անխզելի կապին, չի կարելի կուսակցությունը և դասակարգը խառնել:

Բանվոր դասակարգն իր առաջավորներին տալիս է կուսակցության շարքերը, նա այդ ընտրության վրա բացառիկ ուշադրություն է դարձնում: Սակայն կուսակցությունն ինքնահոսով չի անում: Ինքը կուսակցությունը բոլոր միջոցները ձեռք է առնում, վորպեսզի իր շարքերը ներգրավի ամենից ակտիվ պրոլետարներին, նա պայքարում է իր պրոլետարական կազմի համար, առաջին հերթին ներգրավելով առաջավոր արդյունաբերական բանվորներին: Նա կարգավորում է իր սոցիալական կազմը, ամրապնդում է պրոլետարական միջուկը, սահմանափակում է աճը ի հաշիվ ծառայողների և այլոց:

Իր կազմակերպված ավանգարդի ղեկավարությամբ գործում է վողջ դասակարգը, ավելի ու ավելի սերտ համախմբվելով իր կուսակցության շուրջը:

## 3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՁԵՎՆ Է

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ ՏԱՆՈՂ ՇԱՐԺԻՉ ՓՈԿԵՐԸ

Իր ազատագրության մեծ պայքարում հաղթելու համար բանվոր դասակարգն ստեղծում է իր ըստ կազմի և նշանակության տարբեր կազմակերպությունները: Բանվորական պատգամավորների խորհուրդները — բանվոր դասակարգի հեղափոխական իշխանության օրգանները, պրո-



ֆեսիոնալ միությունները, կոոպերացիան, կանանց պատգամավորական
ժողովները, կոմունիստական յերիտասարդության միությունը, կուլ-
տուր-լուսավորական կազմակերպությունները և այլն: Դրանց մեծա-
մասնությունն անկուսակցական կազմակերպություններ են:
Բանվոր դասակարգին անհրաժեշտ այդ բոլոր կազմակերպություն-
ների ոգնությամբ կուսակցությունն ամրապնդում է նրա (բանվոր դա-
սակարգի) դասակարգային դիրքերը: Կուսակցությունը ղեկավարում է
բանվոր դասակարգի բոլոր կազմակերպությունները հեղափոխության
նախապատրաստության ժամանակաշրջանում և իշխանության գրավու-
մից հետո—պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում:
Պրոլետարիատի դիկտատուրայի ամենօրյա ստեղծագործական հե-
ղափոխական աշխատանքը, նրա ամբողջ կարգի բերված և ամուր մեխա-
նիզմը շարժման մեջ են դրվում բոլշևիկյան կուսակցության ղեկավա-
րությամբ բանվոր դասակարգի կողմից ստեղծված լծակների և շարժիչ
փոկերի ամբողջ սիստեմով: Պրոլետարիատի մասսայական կազմակեր-
պությունները—սրանք են կուսակցությունից դեպի մասսաները տանող
լծակներն ու շարժիչ փոկերը: Առանց այդ մասսայական կազմակերպու-
թյունների բանվոր դասակարգը չի կարող իրագործել իր դիկտատու-
րան, առանց դրանց կուսակցությունը չեր կարող սերտ կապ պահպանել
բանվոր դասակարգի և աշխատավորական մասսաների հետ: Լծակների
և շարժիչ փոկերի վողջ սիստեմում ամենակարևորը և ամենանշանակա-
լիցը հանդիսանում են.
Պրոֆմիությունները պրոլետարիատի մասսայական կազմակերպու-
թյուններն են, վորը կուսակցությանը բանվոր դասակարգի հետ կապում է
ամենից առաջ արտադրական գծով: Ցեթե կապիտալիզմի օրով պրոֆ-
միությունները բանվորների տնտեսական պայքարի կազմակերպություն-
ներն են բանվորական օրը կրճատելու, աշխատավարձը բարձրացնելու,
բանվորների տնտեսական դրությունը բարելավելու և ընդդեմ կապի-
տալիզմի նրանց քաղաքական պայքարի մեջ ներգրավելու համար, ապա
պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ պրոֆմիությունների դերը
փոխվում է: Պրոֆմիությունները բանվորներին և ծառայողներին կր-
թում են կոմունիզմի վոգով, բանվորներին ներգրավում են սոցիալիստա-
կան շինարարության և արտադրության կառավարման մեջ, ոգնում են
կուսակցությանը պետապարատի բարելավման պայքարում, բյուրոկրա-
տիզմի դեմ մղվող պայքարում, բանվորների և ծառայողների մատակա-
րարումը բարելավելու համար, մասսաների նյութական և կուլտուր-
կենցաղային բարեկեցությունը բարձրացնելու համար: Պրոֆմիություն-
ները կուսակցության լավագույն ոգնականն են սոցիալիստական շինա-
րարության բոլոր ֆրոնտներում: Պրոֆմիությունները—կոմունիզմի
դպրոցն են:

Խորհուրդները աշխատավորության մասսայական կազմակերպություններն են, վորը կուսակցությանն աշխատավորների հետ կապում է ամենից առաջ պետական կառավարման գծով: Խորհուրդները պրոլետարիատի դիկտատուրայի օրգաններն են, խորհուրդները բանվոր դասակարգի և աշխատավորության ամենամասսայական կազմակերպություններն են:

Կոոպերացիան մասսայական կազմակերպություն է, վորը կուսակցությանը գյուղացիական մասսաների հետ կապում է ամենից առաջ տնտեսական գծով, գյուղացիությանը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու գծով:

Կոմունիստական յերիտասարդական միությունը կուսակցության օգնականն ու ռեզերվն է, բանվորական և գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպությունը, վորը կոչված է օժանդակելու




Կոմյերիտմիության աճումը հեղափոխության տարիների ընթացքում՝ 1918 թ. 22,000-ից մինչև 1931 թ. 5,124,000-ը:

բանվոր դասակարգի ավանգարդին, նրա կուսակցությանը, նոր սերնդի սոցիալիստական դաստիարակության և յերիտասարդ ռեզերվ պատրաստելու գործում:

Այս բոլոր կազմակերպություններն աշխատավորական մասսաներին ներգրավում են սոցիալիստական հասարակության կառուցման գործում, միացնում են նրանց պայքարելու ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար: Սակայն վորպեսզի նրանք աշխատեն մի ուղղությամբ, համապատասխան պրոլետարական դիկտատուրայի խնդիրներին, վորպեսզի անհամաձայնություն չլինի նրանց աշխատանքում,—հարկավոր է նրանց գործողությանն ուղղություն տվող մի ձեռք, հարկավոր է կուսակցության ղեկավարությունը:



Կուսակցությունը բանվոր դասակարգի բոլոր մասսայական կազմակերպությունների ղեկավարն է: Նա դրա համար ունի քաղաքական պայքարի և ղեկավարության անհրաժեշտ փորձ: Միայն բանվոր դասակարգի այդ մարտական կազմակերպված ավանգարդն է ի վիճակի մասսայական կազմակերպությունների մեջ գտնվող կուսանդամների միջոցով, իր հեղինակության ուժով, իր համոզմունքի ուժով և վոչ թե հրամանատարությամբ ու վարչարարությամբ ազդել անկուսակցական կազմակերպությունների վրա, ղեկավարել նրանց: Միայն այդ միջոցով կուսակցությունը կարող է ամրապնդել բանվոր դասակարգի դիկտատուրան: Ինքը լինելով պրոլետարիատի դիկտատուրայի զենքը, կուսակցությունը դիկտատուրան իրականացնում է բոլոր լծակների և փոկերի օգնությամբ:

Այսպիսով, կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևն է, պրոլետարական դիկտատուրայի սիստեմում հիմնական ղեկավար ուժը:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԶԵՆՔՆ Է

Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի պատմության մեջ քիչ օրինակներ չկան, յերբ, ունենալով հիանալի ուժեր և մինչև վերջ պայքարելու և հաղթելու անձնուրաց վճռականություն, պրոլետարիատը չի կարողացել մինչև վերջը հասցնել սկսած ապստամբությունը: Հեղափոխական շարժման պատմությունը Ֆրանսիայում, ընդհուպ մինչև 1871 թ. Փարիզյան կոմունան, ապստամբությունները Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում պատերազմից անմիջապես հետո (1918—20 թ.)—խոսում են այն մասին, վոր առանձին հերոսական պրոլետարիատը պարտվել է գլխավորապես նրա համար, վոր նա չի ունեցել իր հեղափոխական կուսակցությունը, ինչպես այդ նկատում ենք Ֆրանսիայում, կամ նրա պրոլետարական կուսակցությունը վճռական դեպքերի մոմենտին շատ թույլ է գտնվել:

Ընդհակառակն, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը, պրոլետարիատի հետագա պայքարի հաջողությունները քաղաքացիական կռիվների և սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում արդյունք են այն բանի, վոր մեր յերկրի պրոլետարիատի գլուխ կանգնած է բոլշևիկների լենինյան կուսակցությունը: Յեթե բանվոր դասակարգը չունենար յերկաթյա և պայքարում կոփված բոլշևիկների կուսակցությունը, ապա պայքարում հաղթանակել և հաղթանակը ձեռքում պահել անհնարին կլիներ:

«Հավանորեն այժմ արդեն համարյա յուրաքանչյուր վոք տեսնում է,—ասում եր Լենինը 1920 թ.—վոր բոլշևիկները իշխանության գլուխ չեյին մնա վոչ միայն 2½ տարի, այլև 2½ ամիս առանց խստագույն,

իսկապես յերկաթյա դիսցիպլինայի մեր կուսակցության ներսում, առանց բանվոր դասակարգի ամբողջ մասսայի լիակատար և անձնուրաց ոժանդակության, այսինքն, այն ամենով, ինչը նրա մեջ մտածող է, ազնիվ, անձնուրաց, ազդեցիկ, ընդունակ իր հետևից տանելու կամ գրավելու մնացած շերտերին»:

Ահա թե ինչու բանվոր դասակարգին հարկավոր է կուսակցությունը: Կուսակցությունը նրան հարկավոր է վորպես սեփական դիկտատուրայի նվաճման զենք, իսկ յերբ դիկտատուրան դժվարին մարտերից հետո նվաճված է, ապա կուսակցությունը հարկավոր է պրոլետարիատի դիկտատուրան պաշտպանելու, ամրապնդելու և ընդարձակելու համար:

«Ամրապնդել և ընդարձակել դիկտատուրան,—ասում է ընկ. Ստալինը,—այդ նշանակում է պրոլետարների միլիոնավոր մասսաների մեջ մտցնել դիսցիպլինայի և կազմակերպվածության ոգի, այդ նշանակում է պրոլետարական մասսաներում ստեղծել ամրություն և նեցուկ մանր բուրժուական տարերքի և մանր բուրժուական սովորույթների քայքայիչ ազդեցությունների դեմ. դա նշանակում է ուժեղացնել պրոլետարների կազմակերպչական աշխատանքը մանր բուրժուական շերտերի վերադաստիարակության և վերափոխման գծով. դա նշանակում է ոգնել պրոլետարական մասսաներին դաստիարակելու իրենց վորպես ուժ, վորն ընդունակ է վոչնչացնելու դասակարգերը և պայմաններ պատրաստելու սոցիալիստական արտադրության կազմակերպման համար»:

## ԿԱՄՔԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ

«Հաղթանակը բուրժուազիայի վրա,—ասում է Լենինը,—անհնար է առանց յերկար, համառ՝ կյանքի և մահու կատաղի կռվի, կռիվ, վորը պահանջում է տոկունություն, դիսցիպլինա, կայունություն, անճկունություն և կամքի միասնություն»:

Կուսակցությունը պետք է կամքի լիակատար միասնություն ունենա:

Կամքի միասնությունը նշանակում է կուսակցության բոլոր անդամների գործողության անբաժան և անվերապահ միասնություն: Կամքի այդ միասնությունը և գործողության միասնությունը յերկաթյա դիսցիպլինայի ամենալավագույն յերաշխիքն է, վորն այնպես անհրաժեշտ է կուսակցությանը՝ բուրժուազիայի վրա հաղթանակը կազմակերպելու և այդ հաղթանակն ամրապնդելու համար: «Յեվ ով վոր թեկուզ և աննշան չափով թուլացնում է կուսակցության յերկաթյա դիսցիպլինան,—ասում է Լենինը,—ով խախտում է նրա կամքի միասնությունը, նա գործնականում ոգնում է բուրժուազիային ընդդեմ պրոլետարիատի»:

Առանց իր շարքերի կամքի միասնության կուսակցությունը չի կա-



րող հսկայական յերկրում մեկ ցիրուցան յեղած միլիոնավոր աշխատավորներին միացնել հանուն նոր հասարակության ընդհանուր պայքարի համար: Առանց այդպիսի միասնական կամքի, առանց յերկաթյա դիսցիպլինայի անհնար է հաղթանակել:

Սակայն պրոլետարական յերկաթյա դիսցիպլինա կուսակցության մեջ կարող է ստեղծվել միայն, յերբ յուրաքանչյուր կուսակցական գիտակցորեն, կամավոր կերպով հպատակվի ամբողջ կուսակցության միասնական կամքին: Միայն այդպիսի դիսցիպլինան ամուր է: Կուսակցության դիսցիպլինան, միասնական կամքը խախտողն անհանդուրժելի յե բոլշևիկյան կուսակցության շարքերում:

Կուսակցությունը պետք է լինի միասնական կոլեկտիվ, վորը պայքարում է իր գլխավոր գծի իրականացման համար: Դրա համար էլ կուսակցությունը թույլ չի տալիս վորևէ խմբակի, ֆրակցիայի, հերձվածողական կազմակերպության և կենտրոնների կազմակերպում, վորոնք կապված են իրենց առանձնահատուկ խմբակային, ֆրակցիոն դիսցիպլինայով, վորը տարբեր է կուսակցական դիսցիպլինայից և սեփական յուրահատուկ կամքը հակադրում է կուսակցության միասնական կամքին: Այդպիսի խմբակների և ֆրակցիաների գոյությունն ստեղծում է պրոլետարիատի ավանգարդի կամքն արտահայտող միասնական կենտրոնի փոխարեն յերկու կամ միքանի կենտրոններ: Իսկ դա պրոլետարիատի մարտական շտաբը տանում է դեպի քայքայում, թուլացնում և քայքայում է պրոլետարիատի դիկտատուրան և սոցիալիզմի համար մղվող պայքարի ամբողջ գործը տանում է դեպի կործանում:

Դրա համար հասկանալի յե այն կատաղի պայքարը, վորը կուսակցությունը մղում է իր միասնությունը խախտողների դեմ: Դրա համար հասկանալի յե այն լենինյան անհաշտությունը ոպորտունիստների հանդեպ կուսակցության ներսում, հանդեպ կուսակցության գծից թեքվողների և կուսակցության ներսում խմբակներ ու ֆրակցիաներ ստեղծելու նրանց փորձերի: Հենց դրա համար Լենինը պնդում եր կուսակցությունից վտարելու Կամենևին և Զինովյևին, վորոնք խախտել եյին կուսակցական դիսցիպլինան և կուսակցության կամքի միասնությունը Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին: Հենց դրա համար կուսակցությունն իր շարքերում մնալու հետ անհամատեղելի ճանաչեց «բանվորական ոպոզիցիայի», աջ թեքման և տրոցկիզմի, աջ-«ձախ» ոպորտունիստների և վերջերս յերևան յեկած Ռյուտինի հակահեղափոխական խմբակի հայացքների քարոզը: Կուսակցությունը հանուն իր շարքերի յերկաթյա միասնության և աննկուն միասնական բոլշևիկյան կամքի չի կարող իր ներսում հանդուրժել ոպորտունիստներին, վորոնք փորձում են իրենց հակալենինյան, հակապրոլետարական գիծը հակադրել կուսակցության գլխավոր գծին:

Բ. Վոլին—8

Մեր կուսակցությունը նրա համար կարողացավ իր հաղթանակն ապահովող ներքին միասնություն և աննախընթաց համախմբվածություն ստեղծել, վոր նա բոլշևիկյան վճռականությամբ և անողոքությամբ հեռացրել է և հեռացնում է իր շարքերից ամեն տեսակ օպորտունիստների: «Կուսակցությունը,—ասում է ընկ. Ստալինը,—ամրապնդվում է նրանով, վոր մաքրվում է իրեն օպորտունիստական տարրերից»: Դրանում է կայանում մեր կուսակցության աճման, զարգացման և ամրապնդման հիմքը:

Բանվոր դասակարգի կազմակերպված ավանգարդի — մեր բոլշևիկյան կուսակցության—այդ հիմնական հատկությունները նրան դարձրին վոչ միայն Խորհրդային Միության պրոլետարիատի ընդհանուրի կողմից ճանաչված առաջնորդը, այլև Կոմինտերնի լավագույն առաջատար կուսակցությունը: Այդ հատկությունները մեր կուսակցությունը դարձրել են նոր տիպի կուսակցություն, վորը սուր կերպով զանազանվում է ամբողջ աշխարհի բոլոր հին սոցիալիստական կուսակցություններից: Այդ նոր տիպն այն է, «վոր մեր բոլշևիկյան կուսակցությունը մարտական կուսակցություն է, հեղափոխական կուսակցություն, բավարար չափով համարձակ, վորպեսզի պրոլետարիատին առաջնորդի իշխանության համար պայքարելու, բավարար չափով փորձված, վորպեսզի ըմբռնի հեղափոխական իրադրության բարդ պայմանները, և բավարար չափով ճկուն, վորպեսզի անսայթաք անցնի բոլոր և ամեն տեսակ խութերից դեպի նպատակ տանող ճանապարհին»:

Ահա թե ինչու այնպես ժողովրդական, այնպես հայտնի յե բոլշևիկ անունը համայն աշխարհում, ահա թե ինչու բոլշևիկ կոչումով հպարտանում են բանվոր դասակարգի բոլոր լավագույն զավակները, միջազգային պրոլետարական հեղափոխության բոլոր լավագույն մարտիկները:

«Մենք, կոմունիստներս,—ասաց ընկ. Ստալինը ԽՍՀՄ խորհուրդների II համագումարում Լենինի մահվան օրը,—առանձնահատուկ կառուցվածքի մարդիկ ենք: Մենք առանձնահատուկ նյութից ենք կերտված: Մենք նրանք ենք, վորոնք կազմում են մեծ ստրատեգի, մեծ Լենինի բանակը: Չկա ավելի բարձր բան, քան այդ բանակին պատկանելու պատիվը: Չկա ավելի բարձ բան, քան այն կուսակցության անդամի կոչումը, վորի հիմնադիրն ու ղեկավարը յեղել է Լենինը: Բոլորին չի տրված այդ կուսակցության անդամը լինել: Բոլորին չի տրված դիմանալ այդ կուսակցության անդամության հետ կապված դժվարություններին և փոթորիկներին: Բանվոր դասակարգի զավակները, կարիքի և պայքարի զավակները, անհավատալի զրկանքների և հերոսական ջանքերի զավակները—ահա թե ովքեր պետք է լինեն այդ կուսակցության անդամները»:



## 4. ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

### ՈՎ ԿԱՐՈՂ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԼԻՆԵԼ

Չկա ավելի բարձր բան, քան Լենինի կուսակցությանը, բոլշևիկների կոմունիստական կուսակցությանը պատկանելու պատիվը:

Նա, ով ցանկանում է լինել պրոլետարիատի կազմակերպված ավանգարդի շարքերում, պետք է բավարարի այն գլխավոր պահանջներին, վորոնք կուսակցությունն առաջադրում է նրան:

Միայն նա, ով ընդունում է բոլշևիկների կոմունիստական կուսակցության ծրագիրը, կարող է դառնալ այդ կուսակցության անդամը: Մեր կուսակցության ծրագիրը պարունակում է այն հիմնական խնդիրները, վորոնք կուսակցությունը դնում է իր առաջ սոցիալիստական շինարարության ընթացքում, կոմունիզմի լիակատար կառուցման պայքարում, համաշխարհային հեղափոխության հաղթանակի պայքարում:

Համկ(բ)Կ անդամ դառնալու համար բավական չէ ընդունել կուսակցության ծրագիրը, խոսքով յերդվել հավատարիմ և անձնուրաց լինելու կոմունիզմի գործին: Հարկավոր է այդ ծրագիրը գործնականում կիրառել կյանքում, սոցիալիստական շինարարության յուրաքանչյուր ընթացքում պայքարել կուսակցության ծրագրի և նրանից բխող՝ կուսակցության դիրեկտիվների ու ցուցումների իրագործման համար: Հարկավոր է աշխատել կուսակցական կազմակերպություններից մեկում: Կուսակցականը պետք է մասնակցի ներկուսակցական վողջ աշխատանքին: Նա պետք է նախաձեռնություն հայտաբերի այն հարցերը դնելու և քննարկելու մեջ, վորոնք դրվում են կուսակցական ժողովներում, օգնելով կուսակցությանը նրանց ավելի լավ, ավելի ճիշտ, ավելի արագ լուծելու: Կուսակցության ակտիվ անդամ կարող է դառնալ նա, ով ամենասերտ կապերով կապված է մասսաների հետ:

Կուսակցության մեջ մտնողը պետք է լավ յուրացնի մարքսիզմ-լենինիզմի հիմունքները, վորպեսզի կարողանա գիտակցորեն կիրառել կուսակցության գիծը: Ծրագրի և կանոնադրության ուսումնասիրություն, մարքսիզմ-լենինիզմի հիմունքների յուրացում, գործնական աշխատանքի սեփական փորձը թեորիայի հետ զուգորդելու կարողություն,—սրանք են կուսակցականի անհրաժեշտ հատկանիշները, ինչ պոստում էլ նա գտնվելիս լինի:

Կուսակցականը պետք է կարողանա իրեն հանձնված գործի, ինչքան էլ նա «փոքր» լինի, կապը տեսնել պրոլետարիատի ընդհանուր դասակարգային ինտերնացիոնալ խնդիրների հետ: Կուսակցականը պետք է կարողանա կուսակցության գլխավոր գծի պայքարում իր հետևից տանել անկուսակցական բանվորներին, կոլտնտեսականներին և այլ աշխատավորների, նրանց օրինակ ծառայելով:

*Իր գործողության համար, իր վարքագծի համար իր կուսակցական կոլեկտիվի առաջ, ամբողջ կուսակցության առաջ, իր դասակարգի առաջ պատասխանատվության մեծագույն զգացմունքով աչքի յե ընկնում նա, ով իսկապես արժանի յե լենինյան կուսակցության անդամի բարձր կոչմանը:*

Կուսակցության անդամը պետք ե կազմակերպվածության և կարգապահության որինակ լինի: *Կուսակցական դիսցիպլինայի խստագույն պահպանումը յուրաքանչյուր կուսանդամի և թեկնածուի առաջնագույն պարտականությունն ե: Նա պետք ե մասնակցի կուսակցական կյանքի բոլոր հարցերի քննարկմանը, նա պարտավոր ե աշխատանքի թերությունների ընկերական քննադատության յենթարկել, վորն ուղղված լինի ամրապնդելու կուսակցությունը, նրա շարքերը, նրա աշխատանքը: Սակայն յերբ վորոշումն ընդունված ե, կուսակցության անդամը, ինչպես և ամբողջ կուսկազմակերպությունը, պարտավոր ե ճշտորեն և ան-*

ՀԱՄ Կ(Բ)Կ-Ի ԱՃԸ




*Համ. Կ(բ)Կ-ի անդամների թիվը վերջին 5 տարում մեծացել ե ավելի քան յերկու անգամ*

*առարկելիորեն այդ վորոշումը կատարել:* Կուսակցությունը—դիսկուսիոն ակումբ չե, այլ հեղափոխական գործողության մարտական շտաբ: *Դրա համար ել կուսակցության համար միանգամայն անհանդուրժելի յե կուսակցական դիսցիպլինայի խախտումը: Նա, ով խախտում ե կուսակցական դիսցիպլինան, չի կարող գտնվել բանվոր դասակարգի կազմակերպված ավանգարդի շարքերում: Դիսցիպլինա խախտողը—կուսշարքերի կազմալուծիչն ե:*

*Ցերեսուն տարի առաջ (1903 թ.), կուսակցության II համագումարում, յերբ քննարկվում եր կուսակցության կանոնադրությունը, մենշևիկները պնդում եյին, վոր կուսակցության անդամ համարվել ցանկացող մարդկանց չպարտավորեցնել մտնելու և աշխատելու նրա կազմակերպություններից մեկում: Մենշևիկները ցանկանում եյին, վոր ամեն տեսակ ինտելիգենտների, վորոնք չեն ցանկանում մտնել կուսակցական կազմակերպության մեջ և հպատակվել կուսակցության դիսցիպլինային, հնարավորություն տրվի կուսակցության անդամ համարվելու: Լենինը սուր կերպով հարձակվեց մենշևիկների այդ դրույթի վրա, պաշտպանելով անդամության այն պայմանները (ծրագրի և կանոնադրության ընդունումը, անդամակցական վճարների կանոնավոր մուծումը, կուսկազմակերպություններից մեկում աշխատելը), վորոնք ընդունված են մեր կուսակցության կողմից:*

*Դա կարևորագույն վեճ եր կուսակցության, վորպես բանվոր դասակարգի կազմակերպված ավանգարդի, շինարարության հիմնական հարցերի մասին: Լենինն այն ժամանակ արդարացիորեն մատնանշում եր, վոր մենշևիկների ձևակերպման ընդունումը դռները բաց ե անում ցրվածության, տատանվող, ոպորտունիստական տարրերի համար: Իսկ բոլշևիկները անդամակցության վերաբերյալ իրենց ձևակերպմամբ ցանկանում եյին, ինչպես նկատում ե ընկ. Ստալինը, «կազմակերպական սանձ ստեղծել հակապրոլետարական ելեմենտների հոսանքի դեմ՝ դեպի կուսակցությունը»:*

*Կուսակցության թեկնածուն թեկնածուական ստաժի ժամկետում պարտավոր ե պատրաստվելու բոլշևիկյան կուսակցության լիակատար իրավասու անդամ դառնալու: Թեկնածու ընդունվածը հաղորդակից ե դառնում ներկուսակցական կյանքին. մասնակցում ե կուսկազմակերպության բոլոր ժողովներին խորհրդակցական ձայնով:* Կուսակցական կանոնադրությունը պահանջում ե, վորպեսզի նա, ով անցնում ե թեկնածուական ստաժը, հիմնովին ուսումնասիրի կուսակցության ծրագիրն ու տակտիկան: *Այդ իսկ պատճառով ել թեկնածուի համար պարտադիր ե համառ, խորացված կուսուսուցումը: Նա պետք ե որըստորե լրացնի իր գիտությունը:*

*Թեկնածուական ժամկետի ընթացքում ստուգվում են թեկնածուի անհատական և հասարակական հատկությունները, չնայած վոր թեկնածուին իր շարքերն ընդունած կուսկազմակերպությունը նրան ճանաչել ե, քննարկել ե նրա հատկությունները և թերությունները, հաշվի յե առել դրանք: Անկուսակցական լինելով, նա ուղղակի պարտավորություններ չի ունեցել կուսակցության վերաբերմամբ: Այժմ, թեկնածու դառնալով, նա կամավոր կերպով ընդունել ե մի շարք պարտավորություններ, վորոնք նա պետք ե կատարի: Նա պետք ե շրջապատի անկուսակցականների համար որինակելի լինի:*

## ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՑԵՆՏՐԱԼԻԶՄԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՔՆ Է

Կուսակցությունը պրոլետարիատի մարտական շտաբն է, վորը պայքարում է ամենադժվարին պայմաններում, վորոնք պահանջում են մեծագույն կազմակերպվածություն և դիսցիպլինա, ուժեղ կազմակերպություն և կենտրոնացված ղեկավարություն: Ահա թե ինչու մեր կուսակցությունը, ապահովելով կուսակցական օրգանների ընտրականությունը և նրանց հաշվետու լինելը, միաժամանակ պահանջում է ստորադաս կազմակերպությունների լիակատար և անառարկելի հպատակեցումը վերադասին:

Մենշևիկները, նրանց թվում և Տրոցկին, միշտ պայքարում եյին մեր կուսակցության շինարարության լենինյան բոլշևիկյան հիմունքների դեմ: Մանր-բուրժուական ինտելիգենտները, վորոնք անընդունակ են դիսցիպլինայի և կազմակերպության, միշտ դեմ եյին ուժեղ կենտրոնացված ղեկավարության: Մենշևիկները ձգտում եյին, վորպեսզի կուսակցությունն իրենից ներկայացնի թույլ կապված, ընդհանուր ղեկավարությամբ իրար հետ համաձայնության հանգող առանձին կազմակերպությունների միացում: Դա հեղափոխության նախապատրաստության տարիներին նշանակում էր պրոլետարիատին հանձնել տնտեսական, քաղաքական և ռազմական տեսակետից գլխովին սպառազինված բուրժուազիային: Դա նշանակում էր պրոլետարիատի կուսակցությունը զրկել իր գլխավոր ուժից—շարքերի համախմբվածությունից և դիսցիպլինայից:

Մեր կուսակցության ամբողջ պատմությունը վկայում է այն սկզբունքների ճշտության մասին, վորոնք Լենինը դրել է մեր կուսակցության շինարարության հիմքում:

«Կուսակցության կազմակերպական կառուցման ղեկավար սկզբունքը,—ասում է ՀամԿ(բ)Կ կանոնադրությունը,—դեմոկրատական ցենտրալիզմն է»: Դեմոկրատական ցենտրալիզմի հիմնական հատկանիշները հետևյալներն են.—

Կուսակցության բոլոր ղեկավար օրգանների ընտրականությունը, ինչպես ստորադաս, նույնպես և վերադաս: Նույն ձեռնարկության մեջ աշխատող՝ կուսակցության անդամների ընդհանուր ժողովները յուրաքանչյուր կես տարին ընտրում են իրենց կոլեկտիվների, բջիջների բյուրոները: Կոնֆերանսներն ամեն տարի վերընտրում են իրենց ռայոնական, քաղաքային, մարզային և յերկրամասային կոմիտեները: Կուսակցության համագումարները յուրաքանչյուր յերկու տարին մի անգամ ընտրում են կուսակցության կենտրոնական կոմիտե, կենտրոնական վերահսկիչ հանձնաժողով և կենտրոնական վերստուգիչ հանձնաժողով:



Կուսակցական օրգանների կանոնավոր հաշվետվությունը իրենց ընտրողների առաջ (ընդհանուր ժողովներում, կոնֆերանսներում և համագումարներում):

Կուսակցական վերադաս օրգանների վորոշումների պարտադիր լինելը ստորադաս օրգանների համար, կուսակցական խստագույն դիսցիպլինա և կուսակցական վերադաս կենտրոնների վորոշումների պարտադիր կատարում:

Դեմոկրատական ցենտրալիզմը նշանակում է մարտունակ, խիստ կենտրոնացված ղեկավարություն, վորը կապված է մասսաների հետ և օժանդակում է կուսակցության անդամների և կազմակերպությունների աշխատանքի իրական ամրապնդմանը և զարգացմանը:

Դեմոկրատական ցենտրալիզմը միաժամանակ նշանակում է ներկուսակցական դեմոկրատիայի լայն ծավալումը: Կոլեկտիվորեն քննարկվում են կուսակցական-քաղաքական կյանքի հարցերը, բոլոր կուսանդամները մասնակցում են կուսակցական վորոշումների մշակմանը, կուսակցական կազմակերպությունները լսում են և քննարկում իրենց ընտրական օրգանների գործունեության հաշվետվությունը: Կուսակցական դեմոկրատիան ղեկավար օրգանների շուրջը համախմբում է կուսակցական լայն մասսաներին, վորոնք բոլշևիկյան հաստատամտությամբ, հավատքով դեպի իրենց կուսակցական ղեկավարությունը պայքարում են ընդունված կուսակցական վորոշումները կյանքում կիրառելու համար:

Կուսակցական դեմոկրատիան ինքնանպատակ չէ բոլշևիկյան կուսակցության համար: Կուսակցական դեմոկրատիան կուսակցական շարքերի ամրապնդման, նրանց համախմբվածության և մարտունակության բարձրացման միջոց է: Ներկուսակցական դեմոկրատիան յերբեմն սեղմվում է, յերբ վորոշակի պայմաններն այդ են պահանջում: Բոլշևիկների համար դեմոկրատիան ինքնանպատակ չէ, այլ կուսակցության ամրապնդման միջոց. յեթե հեղափոխական նպատակահարմարությունը պահանջում է ծալել դեմոկրատիան, ապա կուսակցությունը դիմում է այդ միջոցին:

Ցարական ռեժիմի պայմաններում, կուսակցության ընդհատակյա գոյության ժամանակ, ցարիզմի կողմից, նրա ժանդարմների, լրտեսների, պրովոկատորների անողոք հետապնդման ժամանակ վոչ միշտ և վոչ ամենուրեք հնարավոր էր լինում իրագործել կուսորգանների ընտրականությունը, կուսակցական ժողովներում կուսակցական միջոցառումների լայն քննարկումը: Քաղաքացիական պատերազմի տարիներին, յերբ կուսակցությունը հարկադրված էր աշխատելու մարտական իրադրության մեջ, մենք ստիպված եյինք սահմանափակել ներկուսակցական դեմոկրատիայի շրջանակները: Վոչ միշտ հնարավոր էր լինում իրագործել

տեղական ղեկավար օրգանների հաշվետվությունը և նույնիսկ նրանց ընտրականությունը։ Այժմ, սոցիալիստական ծավալուն հարձակման ժամանակաշրջանում, կուսակցությունը միշտ ավելի ու ավելի յե ծավալում ներկուսակցական դեմոկրատիան, վճռականորեն հատելով ինքնաքննադատության ճնշման, խմբակայնության և մասսաներից կտրվելու ամեն տեսակ յերևույթները։

Դեմոկրատական ցենտրալիզմ նշանակում է բոլշևիկյան ցենտրալիզմի և լայն պրոլետարական դեմոկրատիայի ամենասերտ զուգորդությունը։ Ինչքան ավելի լայն է ծավալվում ներկուսակցական դեմոկրատիան, այնքան ավելի բարձր է կուսակցական շարքերի վորակը, նրանց գիտակցականությունը, ակտիվությունը, ինքնագործունեությունը, այնքան ավելի յե բարձրանում կուսանդամների կոմունիստական դաստիարակության մակարդակը, նրանց մարտունակությունը։ Ներկուսակցական դեմոկրատիայի ծավալմամբ կուսակցությունն ուժեղացնում է կուսակցության գլխավոր գծի կիրառման պայքարը, օպորտունիզմի հայտաբերման, մերկացման և հաղթահարման պայքարը թե թեորիայում և թե սեփական շարքերի միասնության ամրապնդման պրակտիկայում, կուսակցության բոլոր ուժերը համախմբելով կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի ղեկավարության շուրջը։

## ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցական դեմոկրատիայի ծավալման կարևորագույն լծակը բոլշևիկյան ինքնաքննադատությունն է։ Կուսակցությունն ինքնաքննադատությունը ծավալում է աշխատանքները բարելավելու, կոնկրետ սխալներն ու թերությունները ուղղելու, իր շարքերը և պրոլետարական դիկտատուրայի օրգաններն ամրապնդելու նպատակով։ Ինքնաքննադատություն նշանակում է մերկացնել այն ամենը, ինչ պիտանի չէ, այլասերված է ու կտրված մասսաներից։ Ինքնաքննադատության նպատակն է բաց անել առանձին անհատների և կազմակերպությունների սխալ, կուսակցության շահերին ու դիրեկտիվներին հակասող պրակտիկան։ Ինքնաքննադատությունը նշանակում է պայքարել՝ ուղղելու համար ամբողջ ապարատի աշխատանքը, արմատախիլ անել բյուրոկրատիզմը, մերկացնել բանվոր դասակարգի թշնամիներին։ Ինքնաքննադատությունն ապահովում է մասսաների զարգացումը, կրթությունն ու դաստիարակությունը սեփական սխալների փորձով։

Համաձայն այն բանի, թե կուսակցական կազմակերպությունն ինչպես է վերաբերվում իր սխալներին, թե ինչպես է նա դրանց ուղղում, ինչպես է գնահատում այդ սխալների քննադատությունը, կարելի յե դատել այդ կազմակերպության և նրա ղեկավարության վորակի մասին։ «Բացահայտ ընդունել սխալները,—սովորեցնում եր Լենինը,—բաց անել նրա պատճառները, ուսումնասիրել նրան առաջացնող իրադարձությունը, ուշադիր կերպով քննարկել միջոցները՝ սխալն ուղղելու համար,—ահա դա հատկանիշն է լուրջ կուսակցության, ահա դա սեփական պարտականությունների կատարումն է, ահա դա դասակարգի, ապա նաև մասսաների դաստիարակություն և կրթություն է»։



Ինքնաքննադատության ծավալման գործում միանգամայն բացառիկ դեր է խաղում մեր բոլշևիկյան մամուլը, սկսած մեր կուսակցության կենտրոնական օրգան «Պրավդա»-յից և վերջացրած պատի թերթով ցեխում կամ կոլտնտեսության մեջ։ Մասսաների կազմակերպության, նրանց դաստիարակման, նրանց կարիքների և պահանջների բացատրման ավելի ներգործուն զենք չկա, քան մամուլը։ Նա լավագույն գործիքն է, վորի միջոցով կուսակցությունը կապված է աշխատավոր մասսաների հետ և խոսում է նրանց համար հասկանալի լեզվով։ Բանթղթակիցները և գյուղթղթակիցները, զինվորական և յերիտասարդական թղթակիցներն օգնում են մամուլին բաց անելու կազմակերպության և նրանց ղեկավարության աշխատանքի թերությունները, պայքարում են բյուրոկրատական, անհոգի վերաբերմունքի դեմ դեպի գործը, խարազանում են օպորտունիստներին և անգործներին, օգնում են կուսակցությանը պայքարելու առանձին ելեմենտների բուրժուական այլասերման դեմ։

Ինքնաքննադատությունը հնարավորություն է տալիս բաց անելու և բուժելու մեր ապարատի մարմնին յերևացած խոցերը, նա հնարավորություն է տալիս հայտաբերելու և մերկացնելու դասակարգային թշնամիների ամեն տեսակ վոտնձգությունները։ Ինքնաքննադատությունը բացառիկ դեր է խաղում սոցիալիստական հարձակման բոլշևիկյան տեմպն ուժեղացնելու գործում։ «Ինքնաքննադատությունը մեզ հարկավոր է, ինչպես օդ, ինչպես ջուր», ասում է ընկ. Ստալինը։ Առանց ինքնաքննադատության հնարավոր չէ հաղթական սոցիալիստական շինարարություն։

Մեր կուսակցությունը վճռականորեն պայքարում է ինքնաքննադատության ամեն տեսակ արատավորման, նրա գռեհկացման դեմ։ Նա պայքարում է ինչպես ինքնաքննադատության ճնշման, այնպես և նրան բոլշևիզմի հետ վոչ մի առնչություն չունեցող նպատակների համար օգտագործելու դեմ։ «Մեզ հարկավոր չէ ամեն տեսակ քննադատություն,—ասում է ընկ. Ստալինը,—մեզ հարկավոր է այնպիսի ինքնաքննադատություն, վոր բարձրացնում է բանվոր դասակարգի կուլտուրականությունը, զարգացնում է նրա մարտական վոգին, ամրապնդում է նրա հաղթանակի հավատքը, բազմապատկում է նրա ուժերը և օգնում է նրան յերկրի իսկական տերը դառնալու»։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ինքնաքննադատությունն օժանդակում է հայտաբերելու կուսակցության մեջ խցկված կարյերիստներին, ավանտյուրիստներին, խորթ տարրերին, վորոնք խցկվել են մեր կուսակցության մեջ, վորովհետև այժմ կոմունիստներն իշխանության գլուխ են կանգնած: Կուսակցությունն իր շարքերից դուրս է շպրտում այդ բոլոր խորթ տարրերին: Կուսակցությունն իրեն կանոնավոր կերպով, մշտապես մաքրում է հակակուսակցական հայացքներ քարոզող, կուսակցության գիծը գործնականում խեղաթյուրող մարդկանցից: «Կուսակցությունը կամավոր միություն է,—ասում է Լենինը,—վորն անխուսափելիորեն գաղափարականապես, հետո նաև նյութապես կքայքայվեր, յեթե նա իրեն չմաքրեր այն անդամներից, վորոնք հակակուսակցական հայացքներ են քարոզում»:

Վերահսկիչ հանձնաժողովներն իրենց ամենօրյա աշխատանքով կուսակցության շարքերը մաքրում են մորթապաշտներից, խցկվող, քայքայված, անհարազատ, կուսակցությունը վարկաբեկող տարրերից: Բացի դրանից, կուսակցությունը ժամանակ առ ժամանակ իր շարքերի գլխավոր զտումներ է կատարում: Կուսակցության զտումը տեղի յե ունենում բաց, անկուսակցական լայն մասսաների ներկայությամբ և օժանդակությամբ: Զտումն ամրապնդում է կուսակցության մարտունակությունը: 1929 թ. զտման ժամանակ կուսակցության շարքերից վտարվել է 300 հազար հոգի: Կուսակցությունն այսպիսի վճռականությամբ իր շարքերը մաքրում է բոլոր անհարազատներից, խցկվածներից, այլասերվածներից:

1921 թ., քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո, Լենինի առաջարկությամբ կատարվեց կուսակցության առաջին գլխավոր զտումը, վորի ժամանակ կուսակցությունից վտարվեց 174.900 հոգի: Իսկ 1922 թվից մինչև 1928 թ. վերահսկիչ հանձնաժողովների կողմից կուսակցությունից վտարվել է 260 հազար հոգի, վորոնք խցկվել եյին կուսակցության մեջ և այս կամ այն ձևով վնաս եյին հասցնում պրոլետարիատի գործին:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

Մեր կուսակցության բարձրագույն որգանը, նրա կամքի արտահայտիչը կուսկացության համագումարն է, վորին մասնակցում են բոլոր տեղական կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչները: Կուսակցության համագումարին հաշվետվություն են անում Կենտրոնական Կոմիտեն, Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովը, և մեր կուսակցության պատվիրակությունը Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեյում: Համագումարը կայացնում է իր վորոշումները



(բանաձևերը) այդ հաշվետվությունների առթիվ, այդ բանաձևերով հանձնարարություններ (դիրեկտիվներ) է տալիս կուսակցության կենտրոնական որգանների հետագա աշխատանքի համար, վորոշում է կուսակցության գիծը ներքին և միջազգային քաղաքականության հիմնական հարցերում, ընտրում է կուսակցության ղեկավար որգանները—Կենտկոմը, ԿՎՀ-ն և Վերստուգիչ Հանձնաժողովը:

Կոմունիստական կուսակցությունը — պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևն է: Այն կենտրոնը, վորն ուղղություն է տալիս ամբողջ աշխատանքին, ղեկավարում է կուսակցությունը մասսաներին կապող հաղորդիչ փոկերը—լենինյան կենտրոնական կոմիտեն է: Կուսակցության Կենտկոմը Լենինյան Կենտկոմ է, վորովհետև նա ամրապնդում է կուսակցության միասնությունը, վորի համար Լենինը պայքարում եր բոլշևիզմի կազմակերպման օրից, վորովհետև նա իրագործում է այն մեծ խնդիրները, վորոնք Լենինը դրել է կուսակցության և մեր յերկրի ամբողջ բանվոր դասակարգի առաջ: Կուսակցության Կենտկոմը Լենինյան Կենտկոմ է, վորովհետև նա կազմված է Լենինի լավագույն աշակերտներից, վորոնք հեղափոխության հաղթանակի համար կուսակցության մղած անողոք պայքարի փորձով սովորել են մասսաների կազմակերպման և մասսաների ղեկավարման գործը: Կենտրոնական Կոմիտեյի գլուխ կանգնած է լավագույն լենինեցը, կուսակցության և Կոմինտերնի առաջնորդը—ընկեր Ստալինը:

Կենտրոնական Կոմիտեն բաղկացած է 69 հոգուց: Դրանք կուսակցության ավագագույն անդամներն են, առավելապես պրոլետարներ—սոցիալիստական շինարարության տարբեր ճյուղերի ղեկավարներ և գործնական աշխատողներ: Այդ բարձրագույն լենինյան կոլեկտիվում կենտրոնացված է մեր կուսակցության բազմամյա ամբողջ փորձը, նրա ամբողջ իմաստությունը: Համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում Կենտրոնական Կոմիտեն ղեկավարում է ամբողջ կուսակցությունը. իր մեջ կազմակերպելով քաղաքական աշխատանքի ղեկավարության համար—Քաղբյուրո (Քաղաքական բյուրո), կազմակերպական աշխատանքի ղեկավարության համար—Կազմբյուրո (Կազմակերպական բյուրո), իսկ կազմակերպական և գործադիր բնույթի ընթացիկ աշխատանքի համար—քարտուղարություն:

Քաղբյուրոյի կազմի մեջ մտնում են՝ ընկ. ընկ. Ստալինը, Կագանովիչը, Մոլոտովը, Կալինինը, Վորոշիլովը, Որջոնիկիձեն, Կույբիշևը, Անդրեյևը, Կիրովը, Կոսիորը:

Համամիութենական համագումարը նույնպես ընտրում է ԿՎՀ-ն (Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովը): Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովը բաղկացած է փորձված, հին բոլշևիկներից և պայքարում է կուսակցության անդամների կողմից կուսակցության ծրագրի,

## ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԿ-Ի



ԸՆԿ. ՍՏԱԼԻՆ
*Համ Կ(բ)Կ ԿԿ-ի Գլխավոր Քարտուղար։*



ԸՆԿ. ՄՈԼՈՏՈՎ
*ԽՍՀՄ ԺԿԽ-ի Նախագահ։*



ԸՆԿ. ՎՈՐԱՇԻԼՈՎ
*Ռազմական և ծովային գործերի Ժողկոմ։*



ԸՆԿ. ՈՐՋՈՆԻԿԻՁԵ
*Ծանր արդյունաբերու-թյան Ժողկոմ։*



ԸՆԿ. ԿՈՒՅԲԻՇԵՎ
*ԽՍՀՄ Պետպլանի Նախագահ։*



## ՔԱՂԲՅՈՒՐՈ



ԸՆԿ. ԿԱԳԱՆՈՎԻՉ
*Համ Կ(բ)Կ ԿԿ-ի Քարտուղար։*



ԸՆԿ. ԿԱԼԻՆԻՆ
*ԽՍՀՄ ԿԳԿ-ի Նախագահ։*



ԸՆԿ. ԱՆԴՐԵՅԵՎ
*Հաղորդակցության ճա-նապարհների Ժողկոմ։*



ԸՆԿ. ԿԻՐՈՎ
*Համ Կ(բ)Կ Լենին-գրադի Մարզկոմի Քարտուղար։*



ԸՆԿ. ՍՏ. ԿՈՍՍԻՈՐ
*Ուկրայինայի Կ(բ)Կ Քարտուղար։*

*կանոնադրության և վորոշումների խախտման դեմ, պայքարում է թեքումների դեմ լենինյան գծից, ամրապնդում է կուսակցության միասնությունը: ԿՎՀ-ի խնդիրն է—պաշտպանել կուսակցությունը անհարազատ, քայքայված տարրերի նրա մեջ մտնելուց, վոչ-պրոլետարական ազդեցություններից, աշխատանքի մեջ դասակարգային գծի մոռացման դեմ և այլն: ԿՎՀ-ն, վորի հետ, Լենինի առաջարկությամբ, ձուլված է Բանվորա-Գյուղացիական Տեսչությունը, պայքարում է բյուրոկրատիզմի*



*Համ. Կ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար ընկ. Պոստիշև*

*դեմ, միջոցառումներ է մշակում ու կիրառում պետական և տնտեսական ապարատի բարելավման համար:*

*Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովը վերստուգում ու հետազոտում է կուսակցության կենտրոնական որգանների ապարատի և կուսակցական դրամարկղի աշխատանքի արագությունը, ճշտությունն ու կանոնավորությունը:*

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԽԵՄԱՆ

*ՀամԿ(բ)Կ կառուցման սխեման այսպես է.*—կուսակցական կազմակերպության հիմքը արտադրական բջիջն է: *Բջիջի անդամների ժողովն ընտրում է իր բջիջի բյուրոն: Քաղաքի տերիտորիայի վրա կազմվում է քաղաքային կազմակերպությունը, վորի մեջ մտնում են քաղաքի տերիտորիայի վրա գտնվող բոլոր բջիջները: Քաղաքային կազմակերպությունները իրենց կոնֆերանսներում ընտրում են իրենց քաղաքային կոմիտեն (քաղկոմը): Շրջանի տերիտորիայի վրա գտնվող բոլոր կուսակցական կազմակերպությունները միասին կազմում են շրջանային կուսակցական կազմակերպություն, վոր իր շրջանային կուսակցական կոնֆերանսում ընտրում է կուսակցության շրջանային կոմիտեն (շրջկոմը) և մյուս ղեկավար որգանները (շրջՎՀ):*



*Մարզի, յերկրամասի կամ ազգային ավտոնոմ հանրապետության բոլոր քաղաքային և շրջանային կազմակերպությունները համապատասխանորեն կազմում են մարզային, յերկրային կուսկազմակերպություններ, վորոնք իրենց մարզային կամ յերկրային կոնֆերանսներում ընտրում են կուսակցության մարզային կամ յերկրային կոմիտեն (մարզկոմ. յերկրկոմ), և մարզի կամ յերկրամասի մյուս ղեկավար որգանները (յերկրային ՎՀ, մարզային ՎՀ):*

*ԽՍՀՄ կազմի մեջ մտնող միութենական հանրապետություններում (Ուկրայինա, Բելոռուսիա, Անդրկովկասի հանրապետությունները, Թուրքմենստան, Տաճիկստան, Ուզբեկստան—բացառությամբ ՌՍՖԽՀ) հանրապետության ամբողջ կուսկազմակերպությունը ներկայացնում է ազգային հանրապետական կուսակցական կազմակերպություն, վորն իր համագումարներում ընտրում է իր Կենտրոնական Կոմիտեն և մնացած ղեկավար կուսակցական որգանները:*

*Խորհրդային Միության ամբողջ տերիտորիայի մարզային, յերկրային և հանրապետական կուսկազմակերպությունները, միասին վերցրած, կազմում են միասնական Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն, վորն իր համագումարներում ընտրում է կուսակցության Կենտկոմը, ԿՎՀ-ն և Վերստուգիչ Հանձնաժողովը: Կուսակցության հիմնադրումից մինչև այժմ* 16 *համագումար է յեղել: Համագումարների արանքում մեկ անգամից վոչ պակաս հրավիրվում է Համամիութենական կուսկոնֆերանս: Վերջին,* XVII *կուսկոնֆերանսում մշակվեցին յերկրորդ հնգամյա պլանի կառուցման դիրեկտիվները: Կոնֆերանսի վորոշումները հաստատվում են կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի կողմից:*

*Կուսակցության աշխատանքի կարևորագույն հարցերի լուծման համար* 3—4 *ամիսը մի անգամ հրավիրվում է Կենտկոմի պլենումը: Առանձնապես կարևոր դեպքերում հրավիրվում է Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը:*

*Այն կազմակերպությունը, վորն սպասարկում է վորևէ շրջան (կամ ձեռնարկություն), վերադաս է համարվում այն բոլոր կազմակերպությունների վերաբերմամբ, վորոնք սպասարկում են տվյալ շրջանի (կամ ձեռնարկության) մասերը: Այսպես, որինակ, գործարանային կոմիտեյի բյուրոն բարձր է ցեխային բյուրոյից և ղեկավարում է նրան: Կուսակցության յերկրային կոմիտեն բարձրագույն կուսակցական ինստանցիան է ազգային ավտոնոմիաների մարզկոմների վերաբերմամբ, վորոնք մտնում են յերկրամասի կազմի մեջ: (Որինակի համար, Նիժնի-Նովգորոդի*

յերկրային կոմիտեն Չուվաշիայի մարզկոմի, Մարիյան ավտոնոմիայի մարզկոմի վերաբերմամբ, և այլն)։ Տեղական հարցերի վորոշման ժամանակ կուսակցական կազմակերպություններն ոգտվում են ավտոնոմիայից (ինքնուրույնությունից)։ Կուսակցական ժողովներում, համագումարներում, բոլոր հարցերը վորոշվում են ձայների մեծամասնությամբ, կուսակցության անդամների փոքրամասնությունը միշտ հպատակվում է մեծամասնությանը։

Իր անդամների միջոցով, վորոնք մտնում են բանվոր դասակարգի բազմազան կազմակերպությունների մեջ, կուսակցությունը ղեկավարում է շարժիչ փոկերը։ Կուսակցության անդամները, վորոնք մտնում են ընտրական որգանների կազմի, խորհուրդների, պրոֆմիությունների, կոոպերատիվների մեջ և այլն, նմանապես կուսակցականներն այդ կազմակերպությունների համագումարներում, կոնֆերանսներում, խորհրդակցություններում կազմակերպում են (յեթե նրանց թիվը յերեքից պակաս չէ) կուսակցական ֆրակցիաներ։

Կուսակցական ֆրակցիաների միջոցով կուսակցությունն իր գիծն է անցկացնում աշխատավորության մասսայական կազմակերպություններում, ուժեղացնում է իր ազդեցությունը և իրագործում է կուսակցական հսկողությունը այդ կազմակերպությունների ու հիմնարկների աշխատանքի վրա։ Ֆրակցիաները յենթարկվում են համապատասխան կուսակցական կոմիտեներին և հաշվետվություն են անում նրանց իրենց աշխատանքի մասին։

## ԲՋԻՋԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Է

Կուսակցական կազմակերպության հիմքն արտադրական բջիջն է։ Բջիջը համախմբում է նույն ձեռնարկության, նույն հիմնարկության, խորհտնտեսության, կոլտնտեսության մեջ աշխատող կուսանդամներին և թեկնածուներին։ Տվյալ տերիտորիայի բոլոր արտադրական բջիջները կազմում են մեկ կազմակերպություն—շրջանային, քաղաքային և այլն։ Կուսակցության կառուցման նման սկզբունքը կոչվում է արտադրական-տերիտորիալ սկզբունք, վորը տարբերվում է ստորին կազմակերպությունները ըստ բնակության տեղի — ըստ շրջանի, թաղամասի, փողոցի ստեղծելու սկզբունքից, ինչպես կառուցված են սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները Արևմուտքում։ Լենինը պայքարել է հանուն մեր կուսակցության կառուցման արտադրական սկզբունքի, հանուն այն բանի, վորպեսզի յուրաքանչյուր գործարան դառնա մեր ամրոցը։ Խոշոր ֆաբրիկաներն ու գործարանները, վորտեղ արտադրության մեջ համախմբված են հարյուրավոր և հազարավոր պրոլետարներ, բանվորական մասսաներում դասակարգային համերաշխության, պրոլետարական դիսցիպլինայի զգացմունք են կոփում։ Խոշոր ձեռնարկություն-



ները հանդիսացել և հանդիսանում են կուսակցության հենակետերը բանվոր դասակարգի մասսաների համար մղվող պայքարում։ Ահա թե ինչու մեր կուսակցությունը միշտ այդպիսի բացառիկ նշանակություն է տվել արտադրական բջիջներին։

Կուսակցական բջիջը քաղաքական և կազմակերպչական բացառիկ կարևոր դեր է կատարում։ Բջիջն ապահովում է կուսակցության լոզունգների և վորոշումների կիրառումը մասսաներում, կուսակցության մեջ նոր անդամներ է գրավում և նրանց դաստիարակում է բոլշևիզմի վոգով։ Բջիջն ամենաակտիվ կերպով մասնակցում է յուր ձեռնարկության տնտեսական և քաղաքական կյանքին։

Սոցիալիստական շինարարության աճման հետ մեկտեղ, պրոլետարիատի շարքերի ավելացման, կուսակցության առաջադրած տնտեսական-քաղաքական բոլոր խնդիրների բարդացմանը զուգընթաց աճում է նաև կուսակցական բջիջների աշխատանքի ծավալը։ Բջջի առաջ կանգնած են հետևյալ խնդիրները—կազմակերպել մասսաներին պայքարելու հանուն կուսակցության գլխավոր գծի իրագործման, կատարելու հերթական տնտեսա-քաղաքական խնդիրները, կատարելու արդֆինպլանը, կիրառելու տնտհաշվարկը, վերացնելու դիմազրկությունը, պատրաստելու և ոգտագործելու բանուժը, վերացնելու հավասարեցումը տարիֆային քաղաքականության մեջ, ուղիղ վերաբերվելու դեպի մասնագետները, կազմակերպելու աշխատավոր մասսաների կուլտուր-կենցաղային պահանջների սպասարկումը, մասսաներին մոբիլիզացիայի յենթարկել տեմպերը բարձրացնելու և ամբողջ աշխատանքն ավելի բարձր աստիճանի վրա դնելու։

Ներկա էտապում առանձնահատուկ նշանակություն է ստանում բջջի կուսակցական-մասսայական աշխատանքը։ Բջիջը պետք է կարողանա հասարակ, կենդանի, պարզ ձևով պատասխանել բանվորներին հուզող հարցերին, բոլշևիկորեն պայքարել բանվորների դաստիարակության և վերադաստիարակության համար։ Աշխատանքը ցեխում, ագրեգատի մոտ, կուսակցության քաղաքականության, Կենտկոմի ու կառավարության վորոշումների բացատրությունը աշխատավորության ամենալայն մասսաների մեջ — ահա մեր կուսակցության բոլոր կազմակերպությունների կարևորագույն խնդիրը։

Ընկ. Ստալինի վեց ցուցումները—ամբողջ բանվոր դասակարգի գործողությունների միասնական մարտական ծրագիրն է։ Պայքարել այդ ծրագրի իրագործման համար—կուսակցական բջջի հիմնական խնդիրն է։

«Արտադրական բջջի հիմնական խնդիրը,—ասում է ընկ. Կագանովիչը,—այն է, վոր կուսկազմակերպությունն ավելի մոտ լինի ցեխին, իր գլխավոր ուժերն ու ուշադրությունը կենտրոնացնի ցեխին և բրիգադին, վոր կուսակցական աշխատանքի վերակառուցումն ոժանդակի կազմա-

կերպելու բոլոր բանվորներին՝ պայքարելու արդֆինպլանի համար, դպրոցի համար, կուլտուրայի համար և այլն»։

Յելնելով ընկ. Կագանովիչի այդ ցուցումներից, Մոսկվայի կոմիտեյի 1932 թ. մայիսյան պլենումը Մոսկվայի կազմակերպության բջիջների առաջ դրեց հետևյալ խնդիրները.

«1. Ձեռնարկությունների կազմակերպություններում, աշխատելով ընկ. Ստալինի վեց պայմանների իրագործման ուղղությամբ, վորոնք գործողության կոնկրետ ծրագիր են բոլոր գործարանային կազմակերպությունների համար, գործարանային կուսկազմակերպությունները վերից մինչև վար պետք է իրենց ջանքերի և ուշադրության ծանրության կենտրոնը փոխադրեն կուսակցական-մասսայական աշխատանքը ծավալելու վրա, իրապես լիովին ընդգրկելով և սպասարկելով յուրաքանչյուր բանվորի—ամենաառաջավորից մինչև ամենահետամնացը։

2. Իրագործելով կուսակցական հսկողությունը կուսակցության դիրեկտիվների կիրառման վրա ձեռնարկության կյանքի բոլոր բնագավառներում, վորի թվում և տնտեսական բնագավառում, գործարանի, ֆաբրիկայի, յերկաթուղային դեպոյի և այլն կուսկազմակերպությունները չպետք է իրենց ծանրաբեռնեն արտադրական, պրոֆմիութենական աշխատանքի զուտ գործնական հարցերով, դրանով իսկ ավելի ուժեղացնելով միանձնյա ղեկավարությունը։

3. Մոսկվայի քաղաքային կոմիտեյի պլենումը գտնում է, վոր կուսակցական-մասսայական աշխատանքի արմատական բարելավման համար անհրաժեշտ է վերակառուցել ֆաբ-գործարանային կուսկոմիտեների և բջիջների աշխատանքը։ Անհրաժեշտ է ի հաշիվ ընդհանուր գործարանային կուսապարատի վճռական կրճատման ամրապնդել ձեռնարկության միջին (ցեխային) օղակը, այնտեղ դնելով ամենափորձված կուսակցականներին, վորպես կուսկոմների հիմնական ոգնականներ, վորոնք մըշտապես կապված են բանվորների հետ և կազմակերպում են բանվորների քաղաքական վերելքի աշխատանքը՝ պայքարելու հանուն արդֆինպլանի, մատակարարման բարելավման, կենցաղային կարիքների լավագույն լուծման և այլն։

4. Կազմակերպական-կուսակցական աշխատանքի դրույթի մեջ ամենից առաջ անհրաժեշտ է վերակառուցել կուսկոմիտեների աշխատանքը՝ աշխատանքը մաքսիմալ չափով անմիջապես ցեխերում կենտրոնացնելու ուղղությամբ, յուրաքանչյուր ցեխային բջջի, նրա բյուրոյի, ցեխային ժողովների աշխատանքի կանոնավորումը, ապահովելով ցեխբջիջների դերի բարձրացումը ցեխի կուսակցական-քաղաքական կյանքի ղեկավարման գործում և հասցնելով այն բանին, վոր յուրաքանչյուր ցեխբջիջ կարողանա կազմակերպել և ուղղություն տալ կուսխմբակների աշխատանքին և կուսակցական ազդեցությամբ ընդգրկել բոլոր բանվորներին»։

Այն խնդիրները, վորոնք կանգնած են բջիջի առաջ, կարող են ճիշտ



լուծվել, յեթե կուսակցության բոլոր անդամներն ու թեկնածուները սիստեմատիկորեն ուսումնասիրեն մարքսիզմ-լենինիզմի հիմունքները։ Թեորետիկական ուսմունքը չի կարելի խզել քաղաքականությունից, գործնականից, թեորիայի և պրակտիկայի միջև պետք է գոյություն ունենա անխզելի կապ։ Բջիջի գործնական աշխատանքը պետք է լուսաբանել Մարքս-Լենինի ուսմունքով, սովորել նրանցից, թե ինչպես պետք է հարցերը բարձրացնել մեծ գաղափարական բարձրության։

Օպորտունիզմի յուրաքանչյուր հայտաբերումով, ինչպես բջջի ներսում, նույնպես և բջջից դուրս, պետք է կուսակցության անդամներն ու թեկնածուները դաստիարակվեն անհաշտության վոգով ընդդեմ օպորտունիզմի, ընդդեմ աշխատանքի սորկական տեմպի, ընդդեմ դասակարգային թշնամու ազդեցության բոլոր հայտաբերումների. կոմունիստները անհաշտության և թշնամության վոգով պետք է պայքարեն ընդդեմ ամեն տեսակ գոռոզության, պարծենկոտության, մասսաներից կտրվելու։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴԱՍԱԿԱՐԳ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պրոլետարիատին կուսակցությունը հարկավոր է իշխանությունը գրավելու համար, նրան իր ձեռքում պահելու, ամրապնդելու և ընդարձակելու համար։ Առավել ևս կուսակցությունը հարկավոր է անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման համար պայքարելու ժամանակաշրջանում։

Հետևաբար, կապիտալիզմից կոմունիզմին անցնելու ամբողջ անցման ժամանակաշրջանում պետք է ամեն կերպ ամրապնդել կուսակցությունը։ Վորքան ավելի ուժեղ է կուսակցությունը, վորքան նա ավելի լավ է կազմակերպված, վորքան ավելի ամուր է կապված մասսայի հետ, այնքան ավելի լավ կարող է ղեկավարել մասսաներին՝ կոմունիզմի համար մղվող մեծագույն պայքարում։

Դրա համար անհրաժեշտ է ամեն կերպ ամրապնդել կուսակցությունը, ուժեղացնել այդ մարտական շտաբը, բազմամիլիոն աշխատավորական մասսաներին ավելի սերտ համախմբել կուսակցության շուրջը, նրա կենտրոնական կոմիտեյի շուրջը։ Կուսակցությունն ամրապնդելով միայն մենք կամրապնդենք պրոլետարիատի դիկտատուրան, իսկ ամրապնդելով դիկտատուրան, մոտենում ենք անդասակարգ հասարակության կառուցմանը։

Կուսակցությունը—ավանգարդ է։ Նա մասսաներին տանում է իր հետևից։ Նա մինչև իրան, մինչև իր մակարդակին է բարձրացնում բանվոր դասակարգի նշանակալից շերտերին։ Սակայն բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի և ամբողջ մասսայի, կուսակցականների և անկուսակցականների միջև տարբերությունը չի կարող վերանալ, քանի չեն վերացել դասակարգերը, քանի պրոլետարիատն իր մեջ կընդունի մյուս

դասակարգերից դուրս յեկածներին, քանի բանվոր դասակարգն ամբողջությամբ վերցրած դեռ չի բարձրացել իր առաջավոր ջոկատի մակարդակին։

Կուսակցությունը գոյություն կունենա, կամրապնդի իր շարքերը, քանի գոյություն ունեն դասակարգերը, քանի պրոլետարիատն իրագործում ու ամրապնդում է իր դիկտատուրան։ «Սակայն դրանից չի հետեվում,—ասում է ընկ. Ստալինը,—վոր դասակարգերի անհետացմամբ, պրոլետարիատի դիկտատուրայի մահացմամբ պետք է մահանա և կուսակցությունը։ Բացահայտ է, վոր կոմունիզմի վերջնական հաղթանակի ճանապարհին, այն փոփոխությունների առնչությամբ, վորոնք տեղի կունենան կոմունիստականի փոխանցվող սոցիալիստական հասարակության ստրուկտուրայում, կփոփոխվեն նաև պրոլետարիատի դասակարգային կարևորագույն կազմակերպությունների—կուսակցության, խորհուրդների, պրոֆմիությունների բնույթն ու սպասարկման դերը։ Հնարավոր է, վոր կոմունիստական հասարակության շինարարության ու պայքարի պրոցեսում մշակվի բանվորական կազմակերպության նոր, միասնական տիպ։ Յերբ կոմունիզմը դառնա նվաճված գործ, և ամբողջ բանվոր դասակարգը դառնա կոմունիստական, կոմունիստական կուսակցությունն ամբողջությամբ կլուծվի բանվոր դասակարգի մեջ»։

Մինչև այն ժամանակ, քանի դասակարգերը վերջնականապես լիկվիդացիայի չեն յենթարկվել, քանի վերջնականապես չեն վոչնչացվել կապիտալիզմի մնացորդները եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ, կուսակցության դերը միշտ կմեծանա։ Կուսակցության դերի ամրապնդում, անդասակարգ հասարակության կառուցման գործի, նրա ղեկավարության ամրապնդում, անողոք պայքար ոպորտունիզմի ամեն տեսակ արտահայտության, կուսակցությունը թուլացնելու փորձերի դեմ—այսպես է խնդիրը։

Ամենավնասակար ոպորտունիզմ է այն պատկերացումը, վոր իբր յերկրորդ հնգամյակի վիթխարի խնդիրները կարող են կատարվել դասակարգային պայքարի մարման, պրոլետարիատի և նրա կուսակցության դերի թուլացման ճանապարհին։

Պրոլետարական դիկտատուրայի ամեն կերպ ամրապնդում, կուսակցական ղեկավարության դերի ուժեղացում, անհաշտ պայքար հանուն յերկաթյա դիսցիպլինայի՝ կուսակցության շարքերում և հանուն նրա շարքերի յերկաթյա միասնության, պայքարի հետագա ծավալում աջ ոպորտունիզմի դեմ վորպես գլխավոր վտանգի տվյալ ետապում, «ձախ» խոտորումների և ամեն տեսակի հաշտվողականության դեմ, մեծագույն զգոնություն ջախջախված ոպոզիցիոն խմբավորումների փշրանքների և բեկորների վերաբերմամբ—այսպես է անդասակարգ հասարակության կառուցման և խնդիրների իրագործման պայքարի ուղին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0188418

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲ.

Б. ВОЛИН
ПОЛИТГРАМОТА
ВЫПУСК 1
ПАРТИЗДАТ ЭРИВАНЬ

Տեխնիկական խմբագիր՝ Մ. Եփրիկ
Սրբագրեց՝ Ա. Տեր-Մկրտչյան
Հանձնված է արտադրության 3 դեկտ. 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 25 հունվարի 1933 թ.
Տիրաժ 10000 Հրտ. № 58 343,200 տպ. նշ.

Պետհրատի Տպարան. Պատվեր № 3611 Գլավլիտ 7692(բ)